ԷՋՄԻԱԾԻՆ

ՌՆԸ

ԺԵ ՏԱՐԻ

Յուխիս

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Է

1958

ՊԱ-1012
448

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Բջնիի Սուրբ Աստվածածին եկեղեցու վերաշինության առթիվ	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Հայ եկեղեցու երկու սյուները	5
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ հեռագիրը Սպրինգֆիլդի հայոց նորաբառույց եկեղեցու օծման առթիվ	8
Շարական Սրբոց Թարգմանչաց	9
ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ԴՈՒՐՅԱՆ— Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ	11
Հայրապետական հանդիսավոր պատարագ Մայր Տաճարում Սուրբ Էջմիածնի տոնին	15
Մայր Աթոռի բարեբար Գալուստ Կյուլպենկյանի կտակի Գործադրությունը	18
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	19
Նեպալի բազավորը և բազունին Մայր Աթոռում	22
Ամավերջի հանդիսություններ Հոգևոր Ճեմարանում	23
ՍԱՐԴԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ— Հայաստանյայց եկեղեցին և նրա դերը հայ ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքում	29
ԽԱՉԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ— Հայ ժողովրդական երգը	32
ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ— Գապս	34
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱԲՅԱՆ— Ռուսահողական զբոսաշրջավ դեպի հայրենի գավառներն ու լեռնային Ղարաբաղ	35
ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ— Համառոտ լուրեր	38
Պաշտոնական հաղորդագրություն Ամերիկահայ Ազգային Խորհրդի	41
Դ. Ե. Տ.— Սև Մոմը	43
Հ. Մ. ՊՈՂՈՒՐՅԱՆ— Վեհափառ Վազգեն Ա Կաթողիկոսի այցը Սուրբ Ղազար	45
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱԼԱՄԴԱՐՅԱՆ— Էջեր Սուրբ Էջմիածնի ապարանի պատմությունից	46
Ա. ՏԻՐԱՑՅԱՆ— Հայկական գաղթականություններ և եկեղեցիներ Իտալիայում ԺԴ—ԺԴ դարերում	53
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ—Գլաձորի դպրոցի մեծ մանրանկարիչ Թորոս Տարոնացին	58
Ա. Խ.— Առաքել Սյունեցի, «Դրախտագիրք»	62

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ. ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1958 թ.

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՈՒՍՏՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 1958—1959 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԾՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը գիշերօթիկ դպրոց է վեց դասարաններով— երեքը՝ դասարանական, երեքը՝ լսարանական: Նրա նպատակն է պատրաստել զարգացած և ազգանվեր հոգևորականներ: Ճեմարանը տալիս է բարձրագույն հոգևոր կրթություն: Ուսանողներին ձրիաբար տրամադրվում են հանրակացարան բոլոր հարմարություններով, հանդերձեղեն, սնունդ, գրենական պիտույքներ և այլն:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան կարող են ընդունվել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու զավակ եղող 18-ից 25 տարեկան ամուրի անձինք, որոնք չեն պատկանում որևէ կուսակցության, զերծ են ֆիզիկական թերությունից և հիվանդությունից, չեն դատված և ունեն առնվազն 7-ամյա կրթություն:

Դիմողները քննություն պիտի հանձնեն հայոց լեզվից ու գրականությունից, հայ ժողովրդի պատմությունից և երգեցողությունից: Բարձր կրթություն ունեցող թեկնածուները կտեղավորվեն համապատասխան դասարաններում:

Դիմողները պիտի ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Ինքնագիր դիմում այն մասին, որ իրենք Ճեմարանն ավարտելուց հետո ցանկություն ունեն հոգևորական դառնալու:
2. Բարի վարուց վկայական՝ ստորագրված եկեղեցական իշխանության կողմից:
3. Բժշկական վկայական՝ առողջության մասին:
4. Ծննդյան և մկրտության վկայական:
5. Կրթության վկայական կամ համապատասխան տեղեկանք:
6. Երեք լուսանկար (լուսանկարված դիմումի օրերին):

Արտասահմանյան երկրների թեկնածուները պետք է իրենց դիմումն ու հարակից փաստաթղթերը ներկայացնեն իրենց թեմերի հոգևորական առաջնորդներին ոչ ուշ քան սույն թվականի օգոստոսի 1-ը, իսկ ներքին թեմերի թեկնածուները՝ մինչև օգոստոսի 15-ը՝ Հոգևոր Ճեմարան, Հայկական ՍՍՌ, Էջմիածին:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

(Վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի)

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԲՋՆԻԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Պ. ԱԶԳԷՆ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԻՕԱՄԵԾԱՐ ԱՔՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՅԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՌՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐՈՅՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՓԱՌԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԳԻՒՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷՈՅ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Ամենակալին Աստուծոյ ողորմութեամբ վերաշինվեցաւ հնադարեան Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցին, մեկը մեր նվիրական սրբավայրերեն և ճարտարապետական հոչակյալ կոթողներեն:

Մեր ժկիրը՝ Հայաստան, պատմական վանքերու, եկեղեցիներու և խաչքարերու սրբացած աշխարհ մըն է: Եվ այդ աշխարհին մեջ Բջնիի Ս. Աստվածածինը՝ հոմբուռվյալ սրբավայր մը և քարանյուս գոհար մը՝ մշակութային փառավոր անցյալով:

Մեր ալեկոծ պատմության կատարներուն վրայեն, մինչև ե դար, մինչև հայոց հաղթող սպարապետ Վահան Մամիկոնյանի օրերը պետք է բարձրանալ, գտնելու համար հիմքերը՝ Արարատի, պատմական Նիգ գավառի, Հրազդան գետի ափերուն վրա հաստատված Բջնի գյուղին և իր սրբազան քարերուն: Պատմական այդ գավառին մեջ է, որ ավելի ուշ, ժ դարուն, Պահլավունյաց տոհմի պայազատները հայտնի են դարձած իրենց շինարարությամբ և հայրենանվեր արիասիրտ գործերով ու նաև իրենց կրթական և գիտական գործունեությամբ: Այստեղ է որ մեծանուշակ իմաստասեր և հայոց իշխանաց իշխան Գրիգոր Մագիստրոս, 1031 թվականին, Պետրոս Գետադարձ կաթողիկոսի օրով, հին աղոթարանին հիմքերուն վրա կառուցած է Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցին, որ «Հանավոր եղած է «յոլովութեամբ վանորէից և սատանի Պահլաւունեաց»:

Իրեն հոգևոր իմացական լուսատորության մեծ եղբոներեն մեկը, այն-
տեղ մշակված, ծաղկած և աշխի լույսի պես պահպանված են մեր հոգևոր
մշակույթի բանկագին գանձերը՝ մատենագրություն, գիտություն և մանրա-
նկարչություն: Այսպես է որ Բջնին իր պատվավոր տեղը կգրավէ մեր մշակույ-
թի պատմության մեջ Դարեի, Սանահինի, Հաղբատի, Դլաձորի, Գետիկի և
այլ նշանավոր վանքերու կողքին:

Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցին դարերու ընթացքին ենթարկված է
նաև ավերածություններու: Բայց ամեն ավերումէ հետո վերստին կյանք
է առած և վերաշինված բարեպաշտ նվիրատուներու ձեռքերով: 1204 թվա-
կանին Զաքարե և Իվանե առաքինի իշխանները, 1358-ին՝ Աբաբեկ Ամիր
Զաքա, 1631-ին՝ Մովսես Դարեացի գաբարչիների հոգով՝ հուրաբցի խոջա
Պետրոս և ապա ուրիշ նվիրատուներ իրենց առատաձեռն նվերներով հիմնա-
կան վերանորոգումներ կատարած են Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցիին
վրա, կանգուն և պայծառ պահելով այս պատմական սմանշելի կոթողը, գոր
ծիացումով կենիշ գաղդիացի երեելի ճանապարհորդ Շարդեն 1673 թվականին:

Մեր օրերուն ալ, հյուսվն անմահին Աստուծոյ, անա վերանորոգվեցավ
պատմական այս սուրբ եղեկեցին՝ սրտաբուխ նվերներովը լոնդոնաբնակ հայ
հավատացյալ ժողովուրդին, նախաձեռնությամբ Լոնդոնի հայ համայնքի
վարչության և մանավանդ անձնվեր աշխատանքովը ասվածասեր Տիկնանց
հանձնախումբին, որուն գլուխը կանգնած են առաքինազարդ տիկիններ Հայ-
ուհի Ապահյան և Աստղիկ Քյուրքեան: Հավատացյալ հայ ժողովուրդը և
Մայր Աթոռ Ս. Էջմիածինը երախտագիտությամբ պիտի հիշեն զանոնք միշտ:

Մեր պատմական յանքերու և եկեղեցիներու վերանորոգությունը Մեր
հոգի ամենախոր իղձն է: Մեր սրտի բովանդակ ջերմությամբ կօրհնենք բոլոր
այն բարի ձեռքերը, որոնք կուգան Մեզ օգնելու այս նվիրական ծրագրի
իրագործման համբուն վրա:

Թող միշտ կանգուն, շեն ու պայծառ մնան մեր պատմական բոլոր սուրբ-
յավայրերը, և թող այնտեղեն միշտ լույս և երկնային շնորհներ տարածվին
մեր Աշխարհին և մեր ժողովուրդի բոլոր զավակներուն վրա: Թող հայ ժողո-
վուրդը, մանավանդ ի սիրոյս աշխարհի ցրված Մեր զավակները, անսա-
սան մնան իրենց սուրբ հավատքի վեմին վրա և հավատարիմ՝ իրենց Մայր
Հողին, իրենց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և իրենց հայրենի բոլոր ժառան-
գություններուն:

Հայրական ողջո՛ւյն և հայրապետական օրհնությո՛ւն Բջնիի Ս. Աստվա-
ծածին եկեղեցիի նորոգության լոնդոնաբնակ բոլոր նվիրատուներուն, հա-
մայնքի վարչության և Տիկնանց հանձնախումբին:

Թող Տերը վարձահատույց բլլա անոնց ասվածահաճո և բարի գործե-
րուն և պահե զանոնք քաջառողջ ու երջանիկ ի խաղաղության, ամեն:

ԳԱՅԻԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տրուաւ կոնդակս ի 20-ն յունիսի
1958 թուականի մի,
և ի տուժարիս Հայոց ՌՆԷ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԿՈՒ ՍՅՈՒՆԵՐԸ

(Ս. ՍԱՀԱԿ և Ս. ՄԵՍՐՈՊ)

Մեր եկեղեցին տարվա ընթացքում երեք հանդիսավոր առիթներով պանծացնում է հիշատակը սուրբ թարգմանիչ վարդապետների:

Այդ տոներից առաջինն է «Սրբոյն Խաղակայ Պարթևի հայրապետին մերոյ», Վարդանանց շաբաթվա նախօրյակին, երբ փառաբանվում է Սահակ Պարթևի կիսադարյան և բազմերախտ հայրապետությունը Լուսավորչի Գահի վրա:

Հուլիսին՝ միասին է տոնվում երկու մեծ սրբերի, հայ մշակույթի երախտաշատ վաստակավորների՝ «սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ» հիշատակը:

Առաջին տոնը եթե ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՏՈՆՆ է, ապա երկրորդը՝ Հայրապետական Աթոռի հովանու տակ, գրերի գյուտով և Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ սկզբնավորված ՀԱՅ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՏՈՆՆ է:

Թարգմանչաց երրորդ տոնը, հոկտեմբեր ամսին, տոնն է գերազանցորեն Ս. Սահակի և Ս. Մեսրոպի առաջ ծերադրած և ապա երանց շնչի տակ ապրած և ստեղծագործած ՀԱՅ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐՆԵՐԻ, որոնք սերնդից սերունդ փոխանցել են հավատարմությամբ հայ դպրության ու գրականության սերը և թարգմանել են Աստուծո խոսքը ժողովրդին՝ նոր շնչով, նոր գեղեցկությամբ:

Մեր եկեղեցին վաղուց իր սիրելի սրբերի կարգն է դասել հայ մշակույթի և մեր ժողովրդի հոգևոր-իմացական լուսավորության գործին նվիրված մեծ վաստակավորներին:

Ս. Սահակի և Ս. Մեսրոպի խնկելի անունները անխզելիորեն կապված են հայ գրերի գյուտի և Աստվածաշունչ Գրոց հայերեն թարգմանության հետ, որոնցով երանք մեր կրոնական և ազգային զգացմունքների առաջ հանդիսացել են մեր Մայրենի Եկեղեցու զույգ սյուները, Հայրենիքի պաշտպանները, մեր ժողովրդի հաստատությունն ու զորությունը:

Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը, «Անեղին իմաստը զարդարելով», «հաստատեցին զԱբրոս Սրբոյն Գրիգորի, թարգմանութեամբ եշանագրութեան»: Երանց՝ երկու Ս. Լուսավորիչների եկեղեցանվեր ջանքերի շնորհիվ, «պայծառազգեցան եկեղեցիք Հայաստանեայց» և կենդանի գիրն ու գրականությունը հաստատվեցան հայ հողի և հայ հոգիների մեջ:

Գրերի գյուտը և Աստվածաշունչ գրոց թարգմանությունը ծնունդն են ե դարում պատմականորեն հասունացած անհրաժեշտության և ազգային-եկեղեցական տեսակետից անկախ ու կրոնապես ինքնուրույն լինելու ցանկության:

Դարի սկզբներին, երկու օտար և հակամարտ ազդեցությունների վտանգավոր ոլորտին մեջ ընկած մեր ժողովուրդն ու Հայրենիքը տառաջնորդվում էին դեպի անխուսափելի կորուստը ազգային անկախության, գոյության նաև գոյության: Անհրաժեշտ էր մեծ վտանգի առաջ գրանապատել հայության մարմինն ու հոգին մի նոր, կենսունակ ու երիտասարդ ուժով: Դա հայ ինքնուրույն մշակույթի, գրի ու գրականության ստեղծումն է:

Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ հիմք դրին հայ գրականության և դրանով երաշխավորեցին մեր ժողովրդի ազգային-ազատագրական գոյությունը:

Նաև հիշ բան գիտենք մեր երկու մեծ լուսավորիչների մասին: Մեզ հասել են նրանց կենսագրության վերաբերյալ մի քանի ամփոփ տեղեկություններ միայն: Մեր պատմիչները սարված, հափշտակված և սմանջացած Ս. Սահակի և Ս. Մեսրոպի ԳՈՐԾՈՎ, մոռացության են տվել նրանց ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: Նրանք խոսել են ավելի ԳՈՐԾԻ, քան թե ԱՆՁԻ մասին: Եվ երբեմն պատահական չէր այն, որ շատ սերունդների համար Ս. Սահակի և Ս. Մեսրոպի գործը հրաշքի պատմությանով է ներկայացված: Կենսագիրներից մեկը կորյուն, որը գրել է Մեսրոպ Մաշտոցի «վարք»-ը, սարված Ս. Մեսրոպի ՍԵՄ ԳՈՐԾՈՎ, մոռացել է նրա ՍԵՄ ԿՅԱՆՔԸ և սմանջացումով գրել է գրերի գյուտի և Աստվածաշնչի թարգմանության հոյակապ «երևույթ»-ի մասին, թե «ե՞րբ և որո՞ւմ ժամանակի և որպիսի՞ սարամբ կատարվեց այս հրաշք-երևույթը մեր պատմության մեջ: Կորյունը և ուրիշներ պատմագրում են դեպքը ոչ թե «ի պարծանս կալուածեան տեսանց», այլ նախանձավոր լինելով ՀՈԴԵՒՈՐԱՑԻՆ, որպեսզի «հայեցեալ յեւս գնացից նոցա նմանողք եղերուք հաւատոցն»: Գրերի գյուտը, Աստվածաշնչի թարգմանությունը ոչ միայն ե դարի համար էին, այլ «ստի պանեստ յաւիտենից», այսինքն հայության և Հայ եկեղեցու հավերժության համար, հավիտենականության համար, «յառաջագոյն յաւիտենից և ապա եկեղոցն. սկզբան և կատարածի»:

Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը գրերի գյուտով և Աստվածաշունչ գրոց թարգմանությամբ մեզ տվեցին Ս. Դիրքը, «իմաստության լիակատար գանձարանը»: Նրանք Աստվածաշունչը թարգմանեցին հայերենի. «Մովսես մարգարեական դասով, Պողոս առաքելական գնդով հայաբարբառ հայերենախոս դարձան»: Միջնադարյան մի անանուն գրիչ գրում է, որ այդ հրաշքով «բացվեց հայի կապված բերանը, փարատվեց մեզը և հոգևոր ձիթը իր կարը ջամբեց»: Գրերի գյուտով, Ս. Գրոց թարգմանությամբ հայ ժողովուրդը գտավ իր գոյության և հավերժության ամուր կովանը և դարերի դիմաց վառեց իր կյանքի խարույկը: Ապա մեր վրայով անցան արյան փոթորիկներ, ապակու նման փշուր-փշուր փշրվեցինք, աստղերի նման ցրվեցինք. բայց Մեսրոպյան սառեր մեզ կանգուն պահեցին մանվան գառիրափների վրա: Աստվածաշունչը՝ Հայ եկեղեցով հովանավորված հայ ժողովրդի գոյության խարիսխը գտնվ.

«Ս. Գրիգոր աստվածային գիտության լույսը տվեց Հայոց Աշխարհին. առաջնորդելով նրան անգիտությունից դեպի ճշմարիտ աստվածգիտություն»,— գրում է Ղազար Փարպեցին, իսկ Ս. Սահակը «սկիզբը դրեց հայ մշակույթի գործին, օտար լեզուների անօգուտ մուրողությունից առաջնորդելով հոգեշահ և եկեղեցաշեն բանգիտության»:

Գրերի գյուտով, Աստվածաշունչ գրոց թարգմանությամբ մեծ հեղաշրջում առաջ եկավ հայ ժողովրդի կյանքում և նրա աշխարհայացքի մեջ: «Ցայսմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհն Հայոց անպայման սքանչելի լինէր,— գրում է Կորյունը և եզրակացնում,— սկիզբն դպրութեանս հայոց լինէր սկիզբն մեծի գիտութեան»:

Մեծ և անգնահատելի էր վաստակը եկեղեցու զույգ սյուների: Նրանց օրով, գրում է Ղազար Փարպեցին, «պայծառացան եկեղեցիները, նոր շքեղություն ստացան սրբերի վկայարանները, ծաղկեց նրանց մեջ Աստվածաշնչի ուսումը: Թարգմանիչները մշտաբուխ վտակների նման հոսում էին իրենց մեկնաբանությունները: Մարգարեական խորհրդավոր խոսքերը լուսաբանեցով՝ մեղրի խորիսխից ավելի քաղցր հոգևոր խորիսխների առատ բարիքներով լցված սեղաններ էին դնում ամբողջ ժողովրդի առաջ... Հայոց բովանդակ աշխարհը լցվեց Տիրոջ գիտությամբ Սահակ սուրբ հայրապետի հոգևոր վտակներից, որպես ծովալիր առատ ջրերից»:

Անա Սահակ Պարթևի այսպիսի հոգեշահ գործունեությանն ակնարկելով, Խորենացին գրել է նրա մասին. «մանկանացու ծնեալ՝ անմահ գիւրն յիշատակ եթող»: Իսկ մեծ Օշականցին՝ «գերազանցեալ քան զամենայն, տեսլեսաւք հրեշտակական, մտօք ծննդական, բանիւք պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերող, սիրով անկեղծատար, ուսուցանելով անձանձրոյթ» (Խորենացի), բերեց «զգիր օրինաց ի Հայաստան աշխարհ», որով լուսավորեց «Խորգոմայ ազգ»-ը, «հայրական չափուն ծնեալ զծնունդս նորոգ և սքանչելի Ս. Աղովն իւրով, զնշանագիրս հայերէն լեզուի»:

Հայոց լեզուն, հայ գրականությունը, հայ ժողովրդի ազգային գոյության պահպանման, ամրապնդման գործում պատմական մեծ նշանակություն են ունեցել անցյալում և ունեն այժմ էլ: Ս. Թարգմանիչների հիշատակի մեծարումն ու ոգեկոչումը, այսօր ավելի քան մի այլ ժամանակ, սրբազան պարտականություն է դնում յուրաքանչյուր հայ մարդու վրա, մտավորականության վրա՝ աչքի լույսի պես պահել ու պահպանել հայոց մեծամանչ լեզուն մեր եկեղեցիներում, մեր քնանիքներում, պայքարել օտար լեզուների ու դպրոց-

ների ապազգայնացնող ազդեցությունների դեմ, դաստիարակել նոր սերունդը թարգմանչաց ոգով և շնչով, ընդհանրացնել, տարածել հայ գիրն ու գրականությունը:

Միա՛յն և միմիա՛յն մայրենի լեզվի, իներնուրույն մշակույթի պահպանմամբ կարելի կլինի զորավոր պատնեշ կանգնեցնել մանանդ Սփյուռքում մեր կյանքին սպառնացող սպանգների դեմ:

«Ա՜խ, լեզո՛ւ, լեզո՛ւ, լեզուն որ չըլի մարդ ինչին նման կըլի: Մեկ ազգի պահողը, իրար միացնողը լեզուն ա ու հավատը: Լեզուդ փոխիր, հավատդ ուրացիր, էլ ինչո՞վ կտրես ասել, թե ո՞ր ազգիցն ես: Ինչ բաղդ, պատվական կերակուր էլ տաս երեխին, էլի իր մոր կաթը նրա համար շահարից էլ ա անուշ, մեղրից էլ» (Աբովյան):

Հայ ժողովրդի անմահ զավակ, մեծ լուսավորիչ ու հայրենասեր խաչատուր Աբովյանի բերանով խոսում են հենց իրենք, մեր թարգմանիչ-լուսավորիչները՝ Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը:

Մեր անմոռանալի լուսավորիչ թարգմանիչների անմահ գործի հիշատակը լավագույնս պահելու միջոցն է՝ սիրել ու տարածել հայոց լեզուն, հայ գիրն ու գրականությունը, պայքարել հայ լեզվի աղավաղումների և աղճատումների դեմ:

Վեհափառ Հայրապետը բաղդ ու պատասխանատու պարտավորություն է դրել մեր բոլոր թեմերի առաջնորդների, թեմական խորհուրդների և հավատացյալ ժողովրդի վրա՝ գուրգուրել ու այրի լույսի պես պահել մեր մշակութային արժեքները, սիրել ու տարածել մեր մեծասքանչ լեզվով գրված հարուստ գրականությունը, մեր դարավոր ու նվիրական ավանդները, որոնք ձեռք են բերվել մեր պանծալի նախնիքների արյունով և կյանքով:

Մեր անմոռանալի լուսավորիչ-թարգմանիչների պայծառ հիշատակը այսօր էլ խանդավառում է հայ հավատացյալ ժողովրդին՝ սրբությամբ պահել ու պահպանել անցյալից ավանդ ստացած նոգևոր ժառանգությունն ա՛յն հաստատուն համոզմունքով և սրտառուչ հավատով, որ, իրապես, «մեկ ազգի պահողը, իրար միացնողը լեզուն ա ու հավատը»:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՍՊՐԻՆԳՖԻԼԴԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԹԻՎ

ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆԻՆ

ՆՅՈՒԹՈՐՔ

Սուրբ էջմիածնեն հայրապետական օրհնություն և օրհնություն Սպրինգֆիլդի նորակառույց եկեղեցիին, Ձերդ Սրբազնության, հոգեկոչով երիտասարդ հոգաբարձության, հոգևոր հովվին և բոլոր բարեպաշտ հավատացյալներուն:

Թող Աստված անսասան և շեն պահե Ձեր Ս. եկեղեցին և Ձեզ բոլորիդ պարգևե արևշատություն և բարություն և առաքինի գործոց հաջողություն:

Ողջ լեռուք, զորացյալ Սուրբ Հոգվով, խաղաղություն ընդ ձեզ:

Օրհնությամբ՝

ՎԱՉԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

19 հունիս 1958
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԾԱՂԿԱՔԱՂ ՇԱՐԱԿՆՈՑԻՑ

ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

Որ զարդարեցին տնօրինաբար զիմաստս անեղին,
Հաստատելով յերկրի զգիր կենդանի.
Հովուել զճօտ նոր Իսրայէլի.
Երգով քաղցրութեան ճնշմամբ զԱստուած օրհնեսցուք:

Որ զերկրատոր մեծութիւն փառաց խաւար կոչեցին,
Ապաւինելով ի յոյս անմահ փեսային,
Անճառ բանին արժանի եղեն.
Երգով քաղցրութեան ճնշմամբ զԱստուած օրհնեսցուք:

Որ զօրութեամբ Հոր իմաստութեան էին անեզի,
Հաստատեցին զԱբրոտ Սրբոյն Գրիգորի,
Թարգմանութեամբ նշանագրութեան.
Երգով քաղցրութեան ճնշմամբ զԱստուած օրհնեսցուք:

Որ նորափետուր բանիւ զարդարեալ
Պայծառացեցան եկեղեցիք Հայաստանեայց
Ի ձեռն Սրբոյն Սահակայ.
Երգով քաղցրութեան ճնշմամբ զԱստուած օրհնեսցուք:

ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ

ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ԴՈՒՐՅԱՆ

(Նուսադեմի երեքնկաճիշատակ պատրիարք)

ՍՈՒՐԲ ՍՇՀԱԿ ԵՎ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

Ժվարին է քանի մը տողերով պատկերացնել կամ նկարել այս երկու մեծ դեմքերը, որոնց վրա ամեն տարի նոր ճառագայթներ կավելնան՝ զանոնք գեղեցկապես այլակերպելու չափ։ Սակայն և այնպես, որքան ալ ժամանակը հեռացնե զանոնք մեզմե, միշտ միևնույն ընտանիքի թերափներն են անոնք մեր սրտին պաշտելությանը մեջ, ու հիմա՝ իրենց տոնին հիշատակովը հպարտացած՝ ուժգին բաբախումներով կողջունենք զիրենք։

Իրենց կյանքն ու գործը ապգայնության մը գերազանց արտափայլումն ունեցան. իրենց կպարտինք մեր դպրության ամենեն պերճախոս էջերը. իրենք եղան մայրենի եկեղեցվույն կրկնակ սյուներն՝ Հաքումն ու Բողը՝ հաստատություն ու զորություն։ Մեկը Հայրապետական Աթոռի՝ մյուսը նահապետական արորի մը մոտ ծնած, ա՜հ, ինչպես հաջողեցան վերանալ հավասար բարձրության մը՝ ուր Սինայի մը չափ որոտում կա և Թարորի մը չափ սքանչացում։

Գաղտնիքն ա՛յն է, որ երբեմն երկուքն ալ տա՛ք-տա՛ք արցունքներով իրարու հետ լացին, հո՛ւր-հո՛ւր երգներով մեկտեղ հմայեցին, սո՛ւրբ-սո՛ւրբ մրմունջներով մեկտեղ ազոթեցին. և ինչո՞ւ այս ամենը.— որպեսզի Աստված հայերեն խոսի. որպեսզի օտար լեզուներու՝ հունարեն և ասորերեն—խղվորությանեն թմրած չորս հարյուր տարիներե ի վեր Ավետարանին ծառայող ժողովուրդը Աստուծո Տաճարեն դուրս չելլե այնպես՝ ինչպես իր նախնիքը կելլեին Արմավիրի տոհիներուն անտառեն, սոսափյուն ու սոսկափ առնելով իրենց հետ, քան թե սիրո երկնային ազդում մը. որպեսզի Լուսավորչի զավակները հոգեկան զմայլումով ողջունեին Հավիտենականին մեկ նոր հայտնությունն ալ հայերեի բառերով ու շեշտերով, ու անոնց համար նորագույն Ուխտի մը չափ արժեք ունենար այն։ Ա՛լ այնուհետև թերևս ոտարոտի բան մը պիտի չունենար Աստված։

Այս խորհուրդով և համոզումով մեծ ընտանիքին զոհարար այդ հայրերն, հայ գրիհասաբաներ, իրենց գրչին արանիներն իրարու չփելով կրոնքի սրբազան կրակը անգամ մ՝ալ վառեցին, ու անոր լույսեն շլացած՝ իրավունք ունեցան այնպես երևելու, ինչպես կենկարագրե զիրենք մոտեն դիտող երջանիկներեն մին—Կորյուն—«ո՛չ այնպես զուարճանայր Մովսէս յէջս Սինէական լերինն»— Ի՞նչ անպատում խնդություն ամենուն սրտեն կհորդեր, երբ երկնավոր հանճարներուն դյութությամբը ամովսեսը մարգարեական դասով, Պողոսը առաքելական գունդով հայաբարբառ և հայերենախոս եղան։

Այդ գեղեցիկ հաջողության արդյունքը տակավին նույն այն բերկրանքով կհամակե զմեզ. ամենքս ալ փորձ առած ենք այդ

Նախ՝ չկարծենք թե իրարմե անբաժան հիշատակվող այս երկու անձնավորությունները՝ պիտի կարենային առանձին մնալով

Ս. ՄԵՍՐՈՊՆ ՕՐՇՆՈՒՄ Է ԿՈՐՅՈՒՆԻՆ

գերագույն վայելքին. դրի դյուտն ու Աստվաշունչի թարգմանությունը մոգական արվեստն եղավ այդ երկու մեծ հոգիներուն։

Հոս պահ մը կանգ առնենք սակայն, և երկու կարևոր կետերու վրա դարձնենք մեր ուշադրությունը։

ոգտակար ըլլալ այնպես՝ ինչպես կգնահատենք այսօր իրենց մատուցած ծառայությունը։

Պետք է խոստովանիլ, թե առանց Մեսրոպի՝ գուցե Սահակ իր տոհմին բոլոր ազնվականությամբը, իր հայրապետական պաշտո-

նին բովանդակ պատկառանքովը, մշակված մտքին լայն սավառնումներովը, անբիծ հոգիի ջերմ խանդաղատանքովը, չկարենար նորանշան լույս մը սփռել իր դարուն վրա. «Այլ՝ իր տեսիլքին համեմատ՝ Վաղարշապատի եկեղեցվույն սեղանին վրա ծալված «բեհեզե նափորտը» փոշիներու մեջ թողլով՝ իր պարկեշտ մարմինը հանգչեցներ օր մը Աշտիշատի հողին տակ։ Այն ատեն իր հորմեն, Ս. Ներսեսեն, սա տարբերությամբ միայն ապրած պիտի ըլլար, որ ժողովուրդին ճակատագրին առջև հայրը միշտ Գեբաղի կողմը դարձավ, իսկ տղան Գարիզինին. նա իր արդար զայրույթներուն մեջ անեծք ուներ, սա իր արցունքներուն մեջ օրհնություն։ Այո՛, առանց Մեսրոպի՝ հայ դպրության ընձեռած բարիքեն կեր բաժին մ՚ունենալու փառքը պիտի պակսեր Սահակին։

Մյուս կողմե, առանց Սահակի՝ Մեսրոպն ալ իր «անլույս արգելանք»-ի բովանդակ հայեցողությամբը, «աշխարհական կարգերս»-ու բոլոր հմտությամբը, անկեղծի կամքին պինդ մաքառումներովը, տրտում հոգերուն անվերջ ցավերովը՝ գուցե առ առավելն պարզ կրոնավորի մը անուշ բուրումը ծավալեր մեր պատմության քանի մը թափթփած թերթերուն մեջ, ու ինքը՝ տեսլական քարին վրա թողլով գիրն ու գրոցը, իր կենդանության «գեսնատարած անկողինը» սաներ փոքր Օշականի մութ քնարանին խորը։

Երկուքն ալ, որ հիմա այնքա՜ն խորին հացումով կթրթռացնեն մեր գիտակցության ձայներ, ու երախտապարտ զգացումներու բուռն արտահայտություններ կխլեն մեզմե, երկուքն ալ, առանց իրարու, հասարակ մահկանացուի մը կյանքը ապրած պիտի ըլլային. թերևս իրենց նմաններ շատ պիտի գրանեինք, հիմակ որ միայն իրարու նման են, և աննման ուրիշներու։

Հիշե՞նք Սահակի անձն ու պաշտոնը ներկայացնող պատմական նշանավոր պարագա մը։ Միտք բերենք ուրեմն այն անմխիթար սուգը, որով համակված՝ իր դժբախտ հոտի տխուր վիճակին ու մեծամեծներու անմիտ խորհուրդին համար, շա՜տ մը օրեր իր խուցը քաշված լացավ ու հեծկլտաց, հետո իր շուրջը գոռացող անիրավներուն տեղի տալով՝ իջավ այն Աթոռեն, զոր փառասեր երեցներ կամ կնասեր ասորիներ բռնակալեցին։ Եթե ամենն ալ ա՛յս ըլլար, գուցե իրավունք պիտի ունենայինք—իր արցունքները շմոռնալով հանդերձ—տարտամ գաղափար մը շինելու իր մեծությանը վրա։

Հիշենք նաև Մեսրոպի կյանքեն պատմական իրողություն մը։ Ինքն աշխարհային ու գործնականը թողած, առանց մեծ պատճառի, կհեռանա վեհաշուք հաստատության մը հարկեն և ավագ պաշտոնե մը, երթալ խառնվելու համար գի կարգ միայնակեցաց, ապրելու համար իր մարմինը քաղցով ու ծարավով, անքուն հսկումներով զոհելու համար գիշերներու հանգիստը։ Եթե ամենն ա՛յս ըլլար, գուցե իրավունք պիտի ունենայինք—իր բարեպաշտ հոգին մեծարելով հանդերձ—թեթև գաղափար մը կազմելու իր ամբողջ հանճարին վրա։

Ինչ որ ալ ըլլար ուրեմն, երկուքն ալ Մեծ տիտղոսին անարժան պիտի մնային, եթե պարթև ազնվականն ու Տարոնի գյուղացին Ավետարանի բեմին առջև իրարու չհանդիպեին, և իրարու չգործակցեին այն չքնաղ արվեստովն՝ որով Տիրի մեհյանին բոլոր ճարտարությունը Տիրոջ տաճարին մեջ փոխադրեցին։

Երկրորդ կետը՝ որուն մտադիր պետք է ըլլալ՝ ո՛չ այնչափ Աստվածաշունչի թարգմանության գործն է, որչափ այն լեզուն՝ որով թարգմանեցին զայն Սահակ և Մեսրոպ։ Ստո՞ւգ է արդյոք ոմանց կարծիքը, թե այդ լեզուն առաջին օրեն անիմանալի մնացած ըլլա նույնիսկ Ե դարուն մեջ ապրող հայերուն, ինչպես հիմա։ Ո՛չ մեկ ապացույց կարելի չէ գտնել այդպիսի ենթադրության մը հաստատություն տալու համար։ Բայց եթե հակառակն եղած ըլլար, այդ մեծ վարդապետներն իրենց համբավեն ու հրապույրեն շատ բան պետք էր որ տուժեին, եթե իրոք չկրցան հասկնալ, որ ժողովուրդին կրոնական զարգացումը իր մայրենի լեզվին բնական բացատրություններովը միայն կըրնար իրականություն գտնել։ Սակայն ավելորդ է տարակուսիլ. ա՛յդ իսկ էր «երկուց հաւասարելոց» իղձն ու նպատակը։ Այդ թարգմանության լեզուն արվեստ ուներ, բայց ո՛չ երբեք արվեստակություն։ Գուցե շա՜տ ետքը ձախող քայլեր առնվեին անո՛նց կողմեն՝ որոնցմե մին համարձակեցավ գրելու, թե «մեր արվեստին անտեղյակ էին Սահակ և Մեսրոպ»։

Աղեքսանդրիո Քեմարանական մակացությանց վրա պարծող, ու մեծ թարգմանիչներեն գեր ի վերո ներկայանալու հավակնություն ունեցող այդ ծածկանուն գիտնականը, ո՛վ որ ալ ըլլա (հավանաբար Սյունյաց դպրոցին վերաբերող մը), թե՛ ինքն ու թե՛ իրեն տեսություններովն սնած մտքերն՝ Աստուծո խոսքը ժողովուրդին ամեն դասակարգին հարմար ու հասկնալի գործելե գուցե շա՜տ հեռանային. սեթևեթյալ ու խառնակ լեզվի մը հոդված ձեռուն տակ՝ անոնց ձեռքով թարգմանված Ս. Գիրք մը նույն օրին պետք կրնար ունենալ նոր թարգմանիչներու։ Իսկ Սահակ և Մեսրոպ, ընդհակառակն, խոսուն լեզվին համակ պարզու-

թյամբը—չատ մեծ ուշադրությամբ թերևա—ի գլուխ հանեցին իրենց հսկա ձեռնարկու-թյունը, մեր թարգմանիչներու հարյուրամյա դպրոցին ավանդական ուղղությանը հետևելով։

Իսկ հիմա՝, գո՞ւ կրնա՞ն ըլլալ Սահակ և Մեսրոպ, քանի որ այդ լեզուն ա՛լ խուժդուժ բան մը դարձեր է հայ ականջներու, և զոդանչող զրինձի մը պես կհնչե այն. ալ դադրեցա՞վ ուրեմն իրենց պաշտոնը.—բայց ինչո՞ւ մոայլ սավեր մը կսահի անոնց դեմքին վրայեն։ Մի՛, մի՛ խորվիք դուք, ո՛վ պատվական գլուխներ, ո՛չ մեկը կրնա կապտել ձեր հակտին շողերը՝ որոնք ամեն տարի պե՛տք է որ ավելնան. վասնզի դուք բնականն ու իրականը գործեցիք. այսուհետև ձեզի հավատարմությամբ հետևողներու ու ձեր փառքին նախանձավորներուն կմնա, ձեր ու իրենց սիրած եկեղեցիին պետքերուն համաձայն մտածել, ինչպես դուք ըրիք. այն է՝ ժողովուրդին ընտանի ընել կենդանի գիրքը, Աստուծո գիտության աղբյուրները բանալ ամենուն, մեկ խոսքով շարունակել ձեր գործը, առանց մատնելու զայն մոռացության, ու անվախճան դարերուն հնչեցնել ձեր անունը—ՍԱՀԱԿ և ՄԵՍՐՈՊ։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՈՆԻՆ

Էջմիածնիս։

Հունիսի 8-ը, կիրակի, ստոն կաթուղիկէ Ս. Ամառային վառ ու պայծառ օրերից մեկը։ Մայր Աթոռ ուխտի է եկել հավատացյալների խուռն բազմություն։ Ուրախ ու տոնական դողանում են Մայր Աթոռի զանգերը։ Ամեն կողմ տոնական հանդիսություն և տրամադրություն։

Առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով Վեհարանից առաջնորդվում է Մայր Տաճարը՝ Ս. Էջմիածնի տոնի օրը հանդիսավոր սուրբ պատարագ մատուցելու։

Սկսվում է հայրապետական սուրբ պատարագը։ Վեհափառ Հայրապետին սպասարկում են սրբազաններ, վարդապետներ և սարկավագներ։ Հանդիսավոր ու դաշն երգվում է եկմալյան պատարագը Մայր Աթոռի երգչախմբի կողմից։

Մայր Տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, պաշտոնական անձնավորություններ, հյուրեր, որոնց թվում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տեր և տիկին Սուրեն և Շաքե Գալենտերյանները, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ա. Սանէյանը և ուրիշներ։

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը.

«Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»։

«Ողջոյն տուէ միմեանց
ի համբոյր սրբութեան»։

Սիրելի՛ հավատացյալներ.

Այսօր մեր Ս. եկեղեցվո մեծ տոներեն մեկն է, որ կփառավորենք այս բազմադարյան Ս. Տաճարին մեջ։ Այսօր տոնն է Ս. Էջմիածնի հիմնադրության։ Այսօր, մեր հավատացյալ ժողովուրդը ցնծությամբ կտոնե Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիմնադրության տարեդարձը։ 1650 տարի է անցած այն օրեն, երբ այստեղ, Արարատյան դաշտի կուրծքին վրա, իջավ հրեղեն կերպարանքով ԻՆՔԸ՝ Տերն մեր Հիսուս Քրիստոս և իր Ոսկի Ուռով բախեց երկիրը՝ հիմք դնելով այս Մայր Տաճարին, որ այս հրաշալի դեպքեն հետո կոչվեցավ Ս. Էջմիածին։ Մեր շարականները հոգեզմայլ կերպով կերգեն փառք այս մեծ տոնին՝ «Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ եմա...»։ Այո՛, Ս. Էջմիածինը հավատքի սյուն է, Ս. Էջմիածինը լուսո խորան է, Ս. Էջմիածինը փրկության ճանապարհ է և հավիտենական կյանքի աղբյուր։

Մեր բոլոր երանաշնորհ հայրապետները, սերունդե սերունդ, և մեր բանաստեղծները երեկ և այսօր գովք կերգեն, փառք կերգեն Ս. Էջմիածնի։

Հրաշալի է Ս. Էջմիածնի հիմնադրության պատմությունը, հերոսական է Ս. Էջմիածնի պատմությունը և փառավոր է այդ պատմությունը։

Հրաշալի են այն պարագաները, որով Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Գ-ի օրերուն, Դ դարի սկզբին, հիմնվեցավ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Հայ ժողովուրդը, Ս. Էջմիածնի հիմնադրության առաջին իսկ օրեն, իր հոգին ու միտքը Լուսաւոր ընդմիշտ նոր ուխտին՝ Քրիստոսի Ավետարանին նեռ և նոր հավատքի լույսով ոգեշնչված, նոր արժեքներ ստեղծեց ազգային ինքնուրույն դրոշմով:

Հայ ժողովուրդը իր հոգին զարդարեց «իմաստով Անեղին», նոր կյանք և նոր ձև տալով այդ իմաստին:

Հայ ժողովուրդի քրիստոնյա դառնալը մեծ նպաստ մը եղավ ամբողջ քրիստոնյա աշխարհի հաղթանակին ի խնդիր: Բայց հաղթության օրերուն հաջորդեցին փոքրակալից օրեր, երբ Ս. Էջմիածինը, իր ձեռքը առած ինքնապաշտպանության դրոշը, իր զավակներու հանատակության գնով պաշտպանեց իր նոր հավատքը, իր եկեղեցին և իր Հայրենի Հողը: Մեր խոսքը կվերաբերի վարդանանց հերոսամարտին: Բայց նաև այնուհետև, դարերու ընթացքին, Ս. Էջմիածինը օրհնեց և հանախ գլխավորեց հայ ժողովուրդի ազատագրական մարտումները՝ միշտ «վասն հաւատոց և վասն Հայրենեաց»:

Այսօր, մեր Մայր Հայրենիքին հովանիին ներքև, կապրի ու կհառաջդիմե Ս. Էջմիածինը, մեր վերածնած հայ ժողովուրդի ծոցին մեջ: Բարի են ժամանակները և խոստումնալից:

Այսօր հայ ժողովուրդը վերաշինության և վերելքի ուղիի վրա է և լուսավոր է մեր ապագան: Այլևս վերջ գտած են տխուր անցյալի բոլոր տեսակի դժվարությունները: Խաղաղություն կտիրե այսօր մեր փոքրիկ, բայց նվաճումներով մեծ Հայրենիքին մեջ: Մեր եկեղեցին այ անմասն չէ այս ընդհանուր վերածնունդեն և շինարար հառաջընթացեն:

Այսօր, ավելի քան ուրիշ օրեր, Մենք վստահ ենք, թե հավայն հայ ժողովուրդի աչքերը սևեռած են դեպի այս Ս. Տաճարը Միածնաէջ: Անոնց հոգիին մեջ հավատքի, սիրո և հավատարմության լույս մը կհառագայթե: Մենք, իբև Հովվապետ, մեծապես մխիթարված ենք մեր ժողովուրդի դեպի այս սուրբ հաստատությունը և Հայրենի Հողը ունեցած հավատարմությամբ:

Թող Աստված, որ հիմնեց այս Ս. Տաճարը, պահե, պահպանե մեզ բոլորս անփորձ և անխոով: Թող Տեր Մեր պանդուխտ որդիները ոգեշնչե այն վառ հույսով, որ երբեմն օր մը անոնք բոլորը պիտի վերադառնան Մայր Երկիր՝ համբուրելու Իջման այս Ս. Սեղանը:

Մենք խոր հավատքով ու լավատեսությամբ կսպասենք այդ երջանիկ և պատմական օրվան, երբ Աստված հայ ժողովուրդի այս սուրբ իղձը իրականություն պիտի դարձնե և Մենք բոլորս պիտի ապրինք իբև մե՛կ ժողովուրդ, իբև մե՛կ եկեղեցի, իբե՛՝ «մի հոտ և մի հովիւ»:

Սիրելի՛ ժողովուրդ, եկե՛ք, ձեր աղոթքը միացուցե՛ք Մեր աղոթքին և միատեղ ողջունենք Ս. Էջմիածնի այս սուրբ տոնը:

Ողջո՛ւյն Ս. Էջմիածնին, լո՛ւյս Ս. Էջմիածնին, փա՛ռք Ս. Էջմիածնին այժմ և հավիտյանս, ամե՛ն»:

Հավարտ տուրբ պատարագի, Իջման Ս. Սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվեց Մաղթանք Ս. Էջմիածնի Մայր Տաճարի կամարների տակ մի անգամ ևս հնչեց Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության անսասանության և հավերժության նվիրված սուրբ աղոթքը՝ «Տէր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս. պահեա զՄայր Աթոռս մեր անարատ, անսասան և անաղօտ, ի պայծառութիւն եկեղեցեացս մերոց և մանկանցն սոցին մինչև ի կատարած աշխարհի»:

Եկեղեցական հանդիսությանց ավարտից հետո, Վեհափառ Հայրապետը մեծաշուք թափորով, հավատացյալ ժողովրդի սրտաբուխ մաղթանքների և օրհնությունների տակ առաջնորդվում է Մաղկյա դահլիճը, որտեղ ընդունում է շնորհավորություններ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տոնի ուրախ առիթով:

Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլորին, շնորհակալություն է հայտնում Մայր Աթոռի տոնի առթիվ արտահայտված անկեղծ բարեմաղթությունների համար և խանդավառ մթնոլորտի մեջ Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ադամանդակուռ շքանշան է հանձնում Մայր Աթոռի բարերար հալեպարնակ պր. Սուրեն Գալենտերյանին, որը խորապես հուզված հայրապետական այս բարձր գնահատությունից, արցունքով ծնկի է գալիս՝ ընդունելու սրբազան նվերը և Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Երեկոյան ժամը 4-ին Վեհարանում տրվեց պաշտոնական ճաշկերույթ Մայր Աթոռի տո-

նի առթիվ։ Բազմաթիվ հրավիրյալների թվումն էին նաև պրոֆ. Սանճյանը և տեր և տիկին Սուրեն և Շաքե Գալենտերյանները։ Ավելի քան մտերմական ու ջերմ մթնոլորտ էր ստեղծվել սեղանի առաջ։ Մի անգամ ևս Աղգի սերը և Ս. Էջմիածնի խորհուրդը քովքովի էին բերել բոլոր սրտերը։ Արտասանվեցին բաժակաճառեր, եղան արտասանություններ։ Հատկապես ջերմ ճառեր արտասանեցին պրոֆ. Սանճյանը և պր. Գալենտերյանը՝ Վեհափառ Հայրապետի անձի ու գործի ջերմ գնահատությամբ և խորին համակրանքով։

Ավելի քան երկու ժամ տևող այս հաճելի սեղանը քաղցր առիթ եղավ մի անգամ ևս ներշնչվելու Ս. Էջմիածնի անունով և խորհրդով և նրա արժանավոր Գահակալ Նորին Ս. Օծությունն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի գործով, հայ ժողովրդի և Հայրենիքի սիրով։

Սեղանը փակվեց Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով։

ՊԱ-1012



ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԲԱՐԵՐԱՐ ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻ ԿՏԱԿԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը մեծ ուրախությամբ և շնորհակալությամբ ստացավ 21 մայիս 1958 թվակիր մի պաշտոնագիր Լիսաբոնից, որով Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը տեղեկացնում է, թե հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանի կտակի տրամադրությունների համաձայն և հիմնարկության պատվիրակներ պրոֆ. սրբ Սիդնի Քեյնի և ճարտարապետ պր. Եդվարդ Ուրուելյանի զեկուցման և Մայր Աթոռից ուղարկված փաստաթղթերի հիման վրա, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կտակակատարներ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիգաոն, պր. Գ. Լ. Եսայանը և հիմնարկության խնամակալները որոշել են սկսել կտակի գործադրության, որով Մեծ Բարերարը Ս. Էջմիածնի վերաշինության համար նախատեսել էր 400 000 դոլար:

Առաջին հատկացումը՝ 80 000 դոլար, 1958 թվականի մայիսի 20-ին փոխանցվել է արդեն Նյու-Յորքի Ժ. Պ. Մորգան և ընկ. դրամատան, Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդարանի անունով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տրամադրության տակ:

Հաջորդ հատկացումները կկատարվեն 1958—1959 տարիների ընթացքում, վերաշինության աշխատանքներին զուգընթաց:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՄԱՅԻՍԻ 26-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Հայեպի ծանոթ ազգայիններից և Մայր Աթոռի բարերար պր. Սուրեն Գալենտերյանը իր հարազելի տիկնոջ հետ։

✿✿✿

ՄԱՅԻՍԻ 29-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, իր թեմը մեկնեց վրահայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը։

✿✿✿

ՄԱՅԻՍԻ 29-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետին այցելեց Հարվըրտ համալսարանի դասախոսներից պրոֆ. Ա. Սանճյանը, որը Հայրենիք էր եկել բանասիրական-պատմական ուսումնասիրությունների համար։

✿✿✿

ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Մայր Աթոռից իր թեմը մեկնեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը։

✿✿✿

ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ, ՇԱԲԱԹ, Մոսկվա մեկնեց հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարդարյանը ժամանակավոր կերպով, որպես Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցու հոգևոր հովիվ։

✿✿✿

ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «սկիզբն Յարութեան կիրակէից»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց դեռաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը՝ եղիա մարգարեի կրոնական նախանձախնդրության և մարգարեական ոգևիհեր առաքելության մասին։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ Մայր Աթոռի միաբան հանգուցյալ Տ. Կոստանդին վարդապետի մահվան առաջին տարելիցի առթիվ և ամերիկահայերի տպարանի նվիրատվության կապակցությամբ՝ տեր և տիկին Պարապետ Օհանյանների ընչեցելոց, պր. Լևոն Ակրուչյանի հանգուցյալ ծնողաց և ողբացյալ Հարություն Պիլիչերյանի հիշատակին։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

✿✿✿

ՀՈՒՆԻՍԻ 2-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «տօն սրբոց կուսանացն Հռիփսիմեանց»։ Նախատոնակը և առավոտյան ժամերգությունը կատարվեցին և սուրբ պատարագը մատուցվեց Ս. Գայանեի անվան վանքում, Ս. Հռիփսիմյանց վանքը վերանորոգության մեջ լինելու պատճառով։ Ս. Հռիփսիմյանց կույսերի տոնի օրը պատարագեց և քարոզեց վանահայր հոգեշնորհ Տ. Նահապետ վարդապետ Մուրադյանը։

✿✿✿

ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, «տօն սրբոց կուսանացն Գայիանեանց»։ Ս. Գայանյանց վանքում պատարագեց և քարոզեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը՝ ծանրանալով նահատակ կույսերի բարոյական խիզախության և հանուն հավատի մահը արհամարհելու քաջության վրա։

✿✿✿

ՀՈՒՆԻՍԻ 5-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Ա. Հովհաննես Կարապետի և Աթանագինես եպիսկոպոսի տոների առթիվ սուրբ պատարագ մատուցվեց Շողակաթի վանքում։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը, ինչպես նաև Շողակաթի վանքի նորոգության բարերար տեր և տիկին Սուրեն և Շաքե Գալենտերյանները։ Օրվա տոնի առթիվ պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ Հոգևոր ճեմարանի երգչախումբը հանդիսավոր և դաշն երգեց սուրբ պատարագը։

«Տէր ողորմեա»-յից առաջ քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը՝ «Տէր, սիրեցի զվայելչութիւն Տան քո» բնաբանով։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն տեր և սիրելի Գալենտերյանների գերդաստանի հին և նոր նեղեցյալների հիշատակին։

✿✿✿

ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ, ՇԱԲԱԹ, «տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ Էլն ի Վիրապէն»։ Իշման Ս. Սեղանի վրա հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապից ելնելու պատմական դեպքի մեծ նշանակության վրա՝ Հայաստանյայց Եկեղեցու կազմակերպության գործում։

✿✿✿

ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հուսիկ արեղա Սանթուրյանը և քարոզեց գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը հավուր պատշաճի։

✿✿✿

ՀՈՒՆԻՍԻ 16-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, փակվեց Հոգևոր Ճեմարանը։ Ա և Բ դասարանների ուսանողները վերադարձան իրենց ծնողների մոտ հանգստանալու։ Գ դասարանի և Ա և Բ լսարանների ուսանողներից մի խումբ կմնան Մայր Աթոռում, իսկ մի ուրիշ խումբ կուղարկվի ծառայելու թեմերում, մինչև օգոստոսի վերջը։

✿✿✿

ՀՈՒՆԻՍԻ 19-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո կայացավ մանկավարժական խորհրդակցություն, որտեղ ամփոփվեցին 1957—1958 ուսումնական տարվա կիսամյա և ամավերջի քննությունների արդյունքները, և նախապատրաստվեցին 1958—1959 տարվա ուսումնա-դաստիարակչական աշխատանքները։

Խորհրդակցությունում Վեհափառ Հայրապետը արեց մի շարք հիմնական և անհրաժեշտ դիտողություններ և թելադրություններ՝ հայրդ տարի Ճեմարանում ուսումնական աշխատանքները առավել արդյունավետ և կազմակերպված անցկացնելու համար։

Վերատեսչի գլխավորությամբ, դասախոսներ Համո Հարությունյանի և Արթուն Հատիտյանի մասնակցությամբ կազմվեց հանձնաժողով՝ Վեհափառ Հայրապետի թելադրությունների հիման վրա վերանայելու Հոգևոր Ճեմարանի ուսման պլանը և ծրագիրը և այն ներկայացնելու Վեհափառ Հայրապետին ի վավերացում։

Խորհրդակցության վերջում Վեհափառ Հայրապետը բարեհաճեց հայտնել իր օրհնությունն ու գոհունակությունը Հոգևոր Ճեմարանի վերատեսչության և դասախոսական կազմին՝ Ճեմարանի ուսումնա-դաստիարակչական աշխատանքներում ձեռք բերված գոհացուցիչ արդյունքների մասին։

✿✿✿

ՀՈՒՆԻՍԻ 21-ԻՆ, ՇԱԲԱԹ, «գիտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ» Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Վարդան սրբազանը։

✿✿✿

ՀՈՒՆԻՍԻ 21-ԻՆ, ՇԱԲԱԹ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին հասավ ամերիկահայերի նվիրած տպարանի մեքենաների առաջին առաքումը՝ 16 սնդուկ։

✿✿✿

ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը և քարոզեց գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանը։

✿✿✿

ՀՈՒՆԻՍԻ 23-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր Աթոռից Մոսկվա մեկնեց պր. Սուրեն Գալենտերյանը իր տիկնոջ հետ, մոտ մեկ ամիս ուվստավորարար Ս. Էջմիածնում գտնվելուց հետո։

✿✿✿

ՀՈՒՆԻՍԻ 24-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Երևանում տեղի ունեցավ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդարանի բացումը։

Արարատյան թեմի Թեմական խորհրդի խնդրանքով բացումը կատարվեց Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի ներկայությամբ և գլխավորությամբ։

Մայր Աթոռից Նորին Ս. Օծությանը ընկերակցել էին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը։ Արարատյան թեմից ներկա էին Թեմական խորհրդի պատվարժան անդամները, քահանայից դասի ներկայացուցիչներ՝ թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանի գլխավորությամբ։

Առաջնորդարանի բացման առթիվ կազմակերպված ճաշկերույթին շնորհավորանքի և բարեմաղթության ջերմ խոսքեր արտա-

սանվեցին ներկաների կողմից։ Վերջում նորին Ս. Օծությունը, իր օրհնության սրտառուչ խոսքի մեջ ընդգրկելով թեմի ակնհայտ և գոտեպնդիչ նվաճումները եկեղեցական, բարոյական և նյութական տեսակետներից հավասարապես, ընդգծեց թեմի մեծ կարևորությունը մեր եկեղեցու անցյալ պատմության և ներկա կյանքի մեջ։ Ապա Վեհափառ Հայրապետը լավագույն բարեմաղթություններ արեց հետագա առավել նշանակալից և լիարդյուն հաջողություններ համար։

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և վերին հսկողությամբ, առաջնորդանիստ բացումը աստիճանաբար կնշանավորվի մեծագույն հաջողություններով։

***

ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին հասան Իտալիայից պատվիրված մարմարները 27 սնդուկներով, Մայր Տաճարի Ավագ Սեղանի կառուցման համար։

***

ՀՈՒՆԻՍԻ 26-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, «տօն Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ»։

Թարգմանչաց նախատոնակը և առավոտյան ժամերգությունը կատարվեցին Մայր Տաճարում։

Ժամը 11-ին միաբանությունը ավտոմեքենաներով մեկնեց Օշական՝ «յուխտ և յերկրպագութիւն» Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմին։

Ժամը 12-ին սկսվում է հանդիսավոր սուրբ պատարագը։ Օրվա ազգային-եկեղեցական մեծ տոնի առթիվ Օշական ուխտի է եկել նաև հավատացյալների մեծ բազմություն։

Պատարագում է և քարոզում հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը «Որք զարդարեցին տնօրինարար դիմաստս Անեղինս շարականի բնաբանով, ծանրանալով Ս. Սահակի և Ս. Մեսրոպի կյանքի և գործունեության վրա։

Հավարտ սուրբ պատարագի, գնրաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի հանդիսադրությամբ, Վահան Ամատունի հայ իշխանի դամբարանի վրա կատարվեց հոգեհանգիստ՝ նվիրված հայ դպրության հայտնի և անհայտ բոլոր վաստակավորների և մեկենասների հիշատակին։

***

ՀՈՒՆԻՍԻ 26-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը, որը երեք ամիս ժամանակով, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, հովվական այցելության էր մեկնել ռումինահայ և բուլղարահայ թեմերը։

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին հունգարացի բանաստեղծներ Լասլո Գերրեշը և Յանոշ Ֆոլդեակը։

Հյուրերը դիտեցին Մայր Տաճարը, ծանոթացան նրա հարտարապետական առանձնահատկություններին, ապա եղան եկեղեցահնագիտական թանգարանում, որտեղ նրանց բացատրություններ տվեց թանգարանի վարիչ հոգեշնորհ Տ. Հուսիկ արեղա Ցանթուրյանը։

***

ՀՈՒՆԻՍԻ 23-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց բուլղար գրողների պատվիրակությունը, որի կազմումն էին վիպասան Կարմեն Կալևը, բանաստեղծ Բուրինը և դրող Զորբաչիյսկին։

Հյուրերը Մայր Տաճարը և թանգարանը դիտելուց հետո ընդունվեցին Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի կողմից։



ՆԵՊԱԼԻ ԹԱԳԱՎՈՐԸ ԵՎ ԹԱԳՈՒՀԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 16-ին, երկուշաբթի օր, հետմիջօրեի ժամը 2-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Երևանում հյուր գտնվող Նեպալի թագավոր Նորին Մեծություն Մահենդրա Բիր Բիքրամ Շահ Դևան և Նորին Մեծություն թագուհի Ռաթհնա Ռաջիա Լաքշմի Դևի Շահը, ուղեկից բարձրաստիճան անձանց հետ։

Մայր Տաճարի զանգերի հանդիսավոր զողանջների տակ արքայական զույգը ժամանեց Մայր Աթոռ և առաջին հերթին այցելեց Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետին, որը Վեհարանում ընդունեց մեծանուն հյուրերին։

Արքայական զույգի այցելությանց մասնակցում էին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ Շ. Մ. Առուշանյանը, ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի Նախագահության Նախագահի տեղակալ Ջ. Մ. Վելիբեկովը, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության քարտուղար Ս. Հ. Ղևոնդյանը, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի մշտական հանձնաժողովների նախագահներ Գ. Հ. Ստեփանյանը, Գ. Ա. Արզումանյանը, Ռ. Բ. Ազիզոբեկյանը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը և ուրիշներ։

Մեծապատիվ հյուրերի հետ էին նաև Նեպալի թագավորին ընկերակցող պետական պաշտոնական բարձրաստիճան անձինք, որոնց թվում ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահի տեղակալ Շ. Ռ. Ռաշիդովը, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Ազգությունների Սովետի Նախագահի տեղակալ Կ. Կոնդուլովան, ՍՍՌՄ Արտաքին գործերի մինիստրի տեղակալ Գ. Ն. Զարուբինը, Նեպալում ՍՍՌՄ դեսպան Պ. Կ. Պոնոմարենկոն, բանակի գեներալ Ի. Վ. Տյուլենևը, ՍՍՌՄ Արտգործմինիստրության Հարավ-Արևելյան Ասիայի երկրների բաժնի վարիչի տեղակալ Ֆ. Պ. Դոլյան, ՍՍՌՄ և Հայկական ՍՍՌ Արտգործմինիստրությունների պատասխանատու աշխատակիցներ։

Վեհարանում Վեհափառ Հայրապետի և Նեպալի թագավորի միջև տեղի ունեցավ ջերմ, սիրալիր զրույց։

Հյուրերը պատվասիրվեցին տուրճով։

Նեպալի թագավորը Մայր Աթոռի ոսկեմատյանում գրեց իր տպավորությունները։

Արքայական զույգը, իր շքախմբի հետ Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելուց հետո, այցելեց Մայր Տաճար, եղավ եկեղեցա-հնագիտական թանգարանում և դիտեց եկեղեցական սուրբ մասունքների հաղվադյուտ հավաքածուն, հայկական ընտիր ձեռագրեր, ասեղնագործված սքանչելի շուրջառներ, վարագույրներ, եպիսկոպոսական խույրեր և գավազաններ։

Արքայական զույգը ջերմորեն դիմավորվեց վանքի բակում հավաքված բազմահազար հայ հավատացյալների կողմից։

Նույն օրը երեկոյան Վեհափառ Հայրապետը, գավազանակիր Տ. Մեսրոպ վարդապետ Սնթաբյանի ընկերակցությամբ, ներկա եղավ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ Շ. Մ. Առուշանյանի կողմից ի պատիվ Նեպալի թագավորի և թագուհու տրված հրաժեշտի ճաշկերույթին։



ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 9-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, տեղի ունեցան Հոգևոր Ճեմարանի 1957—1958 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունները։

Հանդիսություններին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և հրավիրյալներ։

Հյուրերի թվում էին Հարվբրտ համալսարանի դասախոսներից պրոֆ. Ա. Սանէյանը և Մայր Աթոռի բարեբարներ տեր և տիկին Սուրեն և Շաքե Գալենտերյանները։

Հանդեսն սկսվեց Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի նվագումով և երգչախմբի կատարած «Որք դարդարեցին» շարականով։

Հանդեսի առաջին բաժնում ուսանողության կողմից կատարվեցին իմացական ազատ մրցություններ (ատենաբանություն, շարադրություն, բանաստեղծություն, երգ և արտասանություն), իսկ երկրորդ մասում լրացվեց Հոգևոր Ճեմարանի վերատեսչության 1957—1958 ուսումնական տարվա տեղեկագիրը և ապա եղավ մրցանակաբաշխություն։

Իմացական ազատ մրցությունների արդյունքները, քննիչ հանձնաժողովի (վերատեսուչ Հայկազուն եպիսկոպոս, պր. Արտաշես Տիրացյան, պր. Արթուն Հատիտյան և պր. Պարգև Շահբազյան) կողմից գնահատվեցին այսպես.

Ատենաբանական մրցանքի մեջ առաջնությունը տրվեց Սարգիս սարկավագ Սարգսյանին («Նյութ՝ «Հայաստանյայց Եկեղեցին և նրա դերը հայ ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքում»)։ Պարգևատրվեց նաև Խորեն սարկավագը երկրորդ մրցանակով։

Շարադրության մեջ («Նյութ՝ «Հայ ժողովրդական երգը») առաջին մրցանակը շահեց Խալիկ Աբրահամյանը, երկրորդ մրցանակի արժանացավ Կարապետ Սուքիասյանը։

Երգի մրցման մեջ (պարտադիր՝ «Ուրախ լեր Ս. Եկեղեցի» և մի այլ երգ), լավագույն կատարման համար առաջին մրցանակի արժանացավ Հակոբ սարկավագ Պողոսպայանը, իսկ Պետրոս սարկավագ Բերբերյանը՝ երկրորդ մրցանակի։

Բանաստեղծության առաջին դափնեպսակին արժանացավ Արամայիս Սահակյանը, («Պապս»), իսկ Նուպար Պալյանը («Ս. Էմիածին»)՝ երկրորդի։

Արտասանության մրցման մեջ (Սիլվա Կապուտիկյանի «Ներարատյան դաշտ» բանաստեղծությունը) առաջնությունը շահեց Կարպիս Սերայդարյանը։

Հանդեսի երկրորդ մասում Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը կարդաց Հոգևոր Ճեմարանի 1957—1958 ուսումնական տարվա ընդհանուր պատկերը ներկայացնող և խնամքով պատրաստված հետևյալ զեկուցագիրը.

«Ձերդ Ս. Օծություն.

Ողորմությամբն Աստուծո, Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը այս տարի ևս բոլորեց իր կրթական տարեշրջանը հաջող կերպով, խաղաղ և լավագույն պայմաններու մեջ։

Նախ թույլ տվեք, Վեհափա՛ռ Տեր, այս հանդիսավոր պահուն կրկին հայտնել իմ որդիական և սրտագին շնորհակալությունները Ձերդ Վեհափառության այն մեծ վարձատրության համար, որով զիս երուսաղեմեն կոչելով նշանակեցիք Հոգևոր Ճեմարանի վերատեսչության այս սուրբ գործին։ Ես այստեղ ամեն բան գտա կատարյալ և կանոնավոր ընթացքի մը մեջ, ընդ հովանյավ Ձերդ Վեհափառության, և Գերագույն Հոգևոր Խորհրդի անխոնջ շանքերուն շնորհիվ։ Իմ կողմե՝ ակնածանք և երկյուղածություն միայն այս ամենուն հանդեպ։

Դարձյալ այս հանդիսավոր պահուն, Ճեմարանիս վերատեսչությունը, իր ուսուցչական խումբով և ուսանողներով միասին, կխոնարհինք ի համբույր օծյալ Ձեր Ս. Աջույն և կհայտնենք մեր ամենուն սրտագին և խոր շնորհակալություններ նախ Ձերդ Վեհափառության, որ չզլացաք ամեն բարիք, կարելիության սահմաններուն մեջ, հանդեպ Հոգևոր Ճեմարանին, ապա նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի գերաշնորհ և հարգելի անդամներուն և միաբանակից եղբայրներուս։

Վեհափա՛ռ Տեր, շատ կարևոր և փափուկ գործի մը պատասխանատվության առջև է, որ կգտնվինք այժմ անարժանաբար՝ պատանիներու հոգևոր կրթության դժվար գործին առջև։ Հոգիին կրթությունը թիվերու և կարդ մը գիտելիքներու ուսուցում մը չէ, այլ կյանքի, նկարագրի, հոգիի դաստիարակություն մանավանդ, որ հաճո պետք է ըլլա նախ Աստուծո և ապա մարդոց։ Ձեմ գիտեր, թե այս մոտ մեկ տարվան մեջ որքանով արժեքավորած եմ դայն, բայց խղճի մտոք կրնամ հայտարարել, թե ըստ ավետարանական Բանին՝ ծառայք անպիտանք եմք, զոր ինչ պարտ էաք առնել արարաքուն Աստված ի, որ պիտի հայոցդնե մեր գործերը, ամենայն յամենայնիս։

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը և մեր մյուս կրոնական կրթարանները շատ կարևոր տեղ մը ունին հայ հոգևոր կյանքի զարգացման և կազմակերպման մեջ։ Դարերու այս մեծ հաստատությունը, երբեմն Գևորգյան Ճեմարան և կամ այլ անուններով, իր հոգևոր և մշակութային ուղիով, լուսավոր դիծ մը թողուցած է մեր հոգևոր և ազգային կյանքին մեջ։ Այս մեծ ժառանգությունը, որ մեր բաժինն է այսօր, վաստակն է մեծ ու անձնվեր հոգիներու։ Թող Տերը լույսերու մեջ հանգչեցնե հոգիները անոնց, որոնք անշահախնդիր մշակները դարձան հոգևոր այս սուրբ տանը և հայ մշակույթին։

Էջմիածի՛ն... վանքերուն ամենեն սրբազանը, ուր հայ ժողովուրդի հոգիի ջահը կվառի դարերե ի վեր։ Դարերու վայրագ հովերը չանցան երբեմն մարել անոր լույսը, քանդել մեր Հայրենի երկիրը, բայց հայ ժողովուրդի անկուն կամքը միշտ բարձր մնաց։ ան կապված մնաց այս սրբազան Հոգիին, իր դիակներու վերև միշտ բարձր բրդին, նեց Լուսավորչի կանթեղը։ «Դարեր եկան, դարեր անցան,— կըսե բանաստեղծը, բայց Հայոց Աշխարհը և Էջմիածին մնացին ամբարձ ու անսասան։ Հոգևոր Ճեմարանը մաքուր ձեթի անապառ կարասն է, ուրկե պիտի մատակարարվի Լուսավորչի կանթեղին անարատ յուղը։ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանին պիտի ելլեն վաղվան մշակները մեր Ս. Եկեղեցիին և անոր ծով կարիքներուն։ «Հունձք բազում են և մշակք սակաւք,— կըսե Ս. Ավետարանը, և մենք այդ մշակներն է, որ պիտի հասցնենք Տիրոջ այգիին։ Աշխատինք ամենքս ալ, աքնինք և հոգնինք, հասցնելու բարի հովիվներ, որոնք իրենց օրինակելի կյանքով հոգևոր առաջնորդներ պիտի դառնան մեր ժողովուրդին և սպասավորները Աստուծո Ս. Սեղանին։

Թող Ս. Էջմիածին ցողե իր սուրբ կաթիլները բոլոր այն ազնիվ հոգիներուն, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, բոլոր անոնց, որոնց նյութական առատ նվիրատվությամբը միշտ շեն ու պայծառ մնացած է ու կմնա սուրբ և աստվածակերտ Տաճարը և միշտ բաց կմնան Հոգևոր Ճեմարանի դռները։ Խո՛նկ և օրհնությո՛ւն հավիտենական այդ բարերարներու անթառամ հիշատակին և հավետ բարօրությո՛ւն մեր Հայրենի կառավարության, իր ընծայած այնքան ազնիվ և բարյացակամ օժանդակության համար դեպի այս նվիրական մեծ սրբավայրը։

Կանցնինք այժմ, Վեհափառ Տեր, հոգևոր Ճեմարանի ներքին կյանքին։

Ա) Հոգևոր ճունմ.— Ուրախ ենք հայտնելու Ձերդ Վեհափառության, թե անցյալ տարվան սեպտեմբերեն ասդին Հովհաննես սարկավագ Դանիելյանը քահանա ձեռնադրվեցավ՝ վերանվանվելով Տ. Հովհաննես, իսկ կուսակրոն սարկավագ ձեռնադրված են Հոգևոր Ճեմարանի վեց ուսանողներ՝ Ժիրայր սարկավագ Ճերեճյան Բ լսարանեն, Վլադիմիր սարկավագ Կերոյան Ա լսարանեն, որ իր կարգապահական հանցանքին համար ազատ արձակվեցավ, Հակոբ սարկավագ Գարաճյան, Սարգիս սարկավագ Սարգսյան, Հակոբ սարկավագ Պողոսյան Ա լսարանեն և Վարդան սարկավագ Շամլյան Մայր Տաճարի ծառայությունեն։ Ասոնք ավելնալով մեր հին սար-

կավագներու թվին վրա, այժմ ունինք տասնամեկ բարեշնորհ սարկավագներ։ Պետք է ըսենք, թե մեր սարկավագները ամենքն ալ խոստումնալից պատանիներ են, կրոնասեր և հայրենասեր, որոնք պիտի արդարացնեն Ձերդ Վեհափառության և մեր հույսերը։

Բ) Կրոնական և եկեղեցական կյանք.— Դպրոցական այս տարեշրջանի ընթացքին մեր Հոգևոր Ճեմարանն ներս չպակսեցավ եկեղեցական պաշտամանց մեջ սարկավագաց և սղոց ծառայությունը։ Ամենօրյա պաշտամանց մեջ Հոգևոր Ճեմարանի ամբողջ ուսանողությունը կատարեց իր պարտականությունները։ Ջանացինք միշտ ասոնց մեջ վառ պահել եկեղեցասիրության գգացումը, և ուրախ եմ հայտնելու, թե պսակված են մեր ջանքերը։

Դ) Կրթական կյանք.— Անցյալ տարի սեպտեմբերի սկիզբները վերաբացվեցավ մեր Հոգևոր Ճեմարանը, երեք դասարանական և երկու լսարանական բաժիններով, 47 աշակերտներով, բաժնված 5 դասարաններու վրա։ Տարվան ընթացքին իրենց անկարգապահությանց և կամավոր հրաժարումի առթիվ Ճեմարանեն արձակվեցան 1 սարկավագ և 5 աշակերտներ։ Տարվան ընթացքին մեր բոլոր դասախոսությունները ընթացան կանոնավոր կերպով և ուսուցչական կազմի խղճամիտ դասախոսությամբ, ըստ Ճեմարանի ընդունված կրթական ծրագրի։ Այս հանդիսավոր առթիվ Հոգևոր Ճեմարանի վերատեսչությունը իր սրտագին շնորհակալությունները կհայտնե Ձերդ Վեհափառության, որ դուխն եք մեր ուսուցչական կազմին և հակառակ ձեր այնքան բազմաբեռ վիճակին, մեծ սիրով դրված եք Ձեր սիրած ուսուցչական աթոռը մեր դասարաններին նեռս, և ապա բոլոր մեր մյուս հոգևորական և աշխարհական ուսուցիչներուն, որոնք ոչ մեկ ջանք խնայեցին Հոգևոր Ճեմարանի իմացական մակարդակը բարձրացնելու համար։

Ստորև կներկայացնեմ Հոգևոր Ճեմարանի ուսուցչական կազմը.

1) Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետ— հոգեբանություն, տրամաբանություն և փիլիսոփայություն։

2) Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս — եկեղեցական տոմարագիտություն։

3) Գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս (վերատեսուչ)— ներածություն Ս. Գրոց, գրաբար, կանոնագիտություն և ծիսագիտություն Հայ Եկեղեցվո։

4) Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ (փոխ-տեսուչ)— անտիկ գրականություն և Հայ Եկեղեցվո պատմություն։

5) Արժանապատիվ Տ. Կոմիտաս քահանա Գերինյան— եկեղեցական երաժշտություն։

6) Արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյան (վերահսկիչ)— հայոց լեզու, հայ գրականություն և կրոնագիտություն։

7) Պրոֆ. Կարո Դաֆթարյան (մեկ ամիս տևողությամբ)— հայ մշակույթի պատմություն։

8) Դոցենտ Համո Հարությունյան— հայ ժողովրդի պատմություն։

9) Դոցենտ Վարագ Առաքելյան— գրաբար։

10) Պր. Արքուն Հատիտյան— աստվածաբանություն, Գործք Առաքելոց և հայ մատենագրության պատմություն։

11) Պր. Պարգև Շահրազյան— հայոց լեզու, լեզվի տեսություն և գրականություն։

12) Պր. Եղիշե Վարդերեսյան— Ընդհանուր եկեղեցվո պատմություն։

13) Պր. Գեղամ Շահինյան— ֆրանսերեն լեզու։

14. Տիկին Մարիա Դրախովսկայա— ռուսաց լեզու։

15) Պր. Արշակ Խաչատրյան— քրիստոնեական վարդապետություն։

16) Պր. Մովսես Շարաբյան— եվրոպական երաժշտություն և ազգային երգեր։

17) Պր. Հարություն Սիմոնյան—Մատենակրթանք։

Դ) Մշակութային կյանք.— Հոգևոր Ճեմարանի ուսանողները այս տարվան ընթացքին երկիցս ներկայացուցին թատերգություններ՝ «Մեծն Ներսես» և «Վարդանանք» բավական հաջող բեմադրությամբ։ Իսկ տարվան ընթացքին ունեցանք ամեն շաբաթ կանոնավոր կերպով լսարաններ, ուր Ձերդ Վեհափառության հատուկ կարգադրությամբ և հրավերով, Երևանի Պետական համալսարանի հայտնի գիտնականներ և մասնագետներ դասախոսություններ տվին զանազան օգտակար նյութերու շուրջ։ Ասոնցմե դատ ունեցանք նաև աշակերտական երեկույթներ։ Այս հարկին տակ նշեցինք Ձերդ Վեհափառության գահակալության երկրորդ տարեդարձը, Խրիմյան Հայրիկի մահվան հիսնամյակը, երեկույթ մը նվիրված Կոստանդնուպոլսի Ս. Խաչ Դպրեվանքին, և ուսուցչական դասախոսություններ ու հավաքույթներ։ Ասոնցմե դատ ունեցանք նաև շաբաթ երեկոներու հավաքույթներ, մերթ երգերով ու արտասանություններով և շինիչ ժապավեններու ցուցադրություններ։ Քանիցս Երևան երթալով ունկնդրած ենք համերգներ։

Ե) Գրադարան.— Հոգևոր Ճեմարանը ունի նաև իր գրադարանը, Ճեմարանի շենքի տուաջին հարկին վրա։ Գրադարանի վերին գիկավարն է Ճեմարանի վերատեսուչը։ Գրադարանի անմիջական աշխատանքները կղեկավարեն գրադարանապետ Սարգիս սար-

կավագ Թեհրուդյանը և գրադարանավար պրն. Արշակ Խաչատրյանը։ Պետք է խոստովանիլ, որ մեր գրադարանը ըստ ամենայնի իր հուրին մեջ մտած է շնորհիվ գրադարանապետի և գրադարանավարի ջանքերուն, որոնք իրենց սահմանված ժամերուն, և անկե դուրս ալ շատ անգամ, լծված են աշխատանքի։ Մեր գրադարանը դեռ սղքատ է, բայց օրեցօր կ՚համալրվի նոր գրականությամբ և կաշխատի լրացնել ամբողջ ուսանողության և Մայր Աթոռի միաբանության գրական կարիքը։ Գրադարանը այժմ ունի մոտ 10 000 հատոր գրքեր, մեծ մասը հայերեն, և օտար լեզուներով։

Մեր գրադարանը նեղ է մեր կարիքներուն համար։ Ան կծառայե նաև որպես ընդհանուր ընթերցասրահ։ Անբավարար են գրապահարանները։

Գրադարանի գրականության համալրման ու քարտագրության աշխատանքները կշարունակվին և հույս ունինք, որ մոտ ապագային Ճեմարանը կունենա իր հարուստ գրադարանը։

Զ) Առողջապահական կյանք.— Տոհուբիտն Աստուծո, այս մեկ տարվան ընթացքին չենք ունեցած Հոգևոր Ճեմարանեն ներս ծանր և մահաբեր հիվանդություններ։ Եղած են պատահական տկարություններ, որոնք անմիջապես դարմանված են։

Է) Զբոսապտույտներ.— Պետք է նշել, թե այս մարդին մեջ այս տարի նվազ պտույտներ կատարած ենք դեպի Հայաստանի պատմական հուշարձանները։ Փետրվար ամսուն մեջ միայն, Ս. Լուսավորչի Մուտն ի Վիրապն տոնի նախօրյակին, ամբողջ աշակերտներով և ուսուցիչներով գացինք Խոր Վիրապի վանքը և Դվինի ավերակները, ուր տրվեցան հարկ եղած բացատրությունները և լուսաբանությունները, և աշակերտները գեղեցիկ պահեր ապրեցան այդ օրը։ Այցելեցինք նաև Զվարթնոցի ավերակ տաճարը։

Ը) Առտնին և մարզական կյանք.— Իրենց առտնին կյանքի մեջ տղաքը ունին հիվանդապահ, շրջելիներց հսկիչ, դասարանների և ննջարանների հսկողներ և ուրիշ կարգ մը գործերու պատասխանատուներ, որոնք բավական գոհացուցիչ կերպով կկատարեն իրենց վստահված պարտականությունները։ Ամեն առավոտ եկեղեցիեն առաջ գրեթե 20 րոպե ուսուցչի հսկողության տակ ուսանողությունը կկատարե մարմնամարզական վարժություններ։ Խաղալու բաժնով տղաքը կխաղան միայն վոլեյբոլ, շուտով պիտի ունենանք մեր պինգ-պոնգի սեղանը և ֆուտբոլի հնարավորություններ, որպեսզի պահվի տառողջ միտքը առողջ մարմնի մեջ։

Եզրափակում.— Ահա, Վեհափա՛ռ Տեր, իր ընդհանուր մը ամփոփ գիծերուն մեջ Հոգևոր Ճեմարանի տարեկան ամբողջ ընդհանուր պատկերը։

Այս առթիվ պարտք կդգամ իմ վերջին խոսքիս մեջ մասնավոր շնորհակալություններս հայտնելու իմ շատ սիրելի փոխ-տեսչին և կրտսեր եղբորս՝ հոգշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանին, որ իմ այս նոր պաշտոնին մեջ իրապես մենտոր մը եղավ ինձի իր շատ անկեղծ և ուղիղ թելադրություններովը։ Շնորհակալություններս նույնպես մեր Հոգևոր Ճեմարանի ներքին կառավարիչ Տ. Հովհաննես քահանա Մարությանին, որ ամեն վայրկյան իր աշխուժ հսկողությամբ ի կարգապահություններ նաև իմ Ճեմարանը։ Շնորհակալություններս՝ Սարգիս սարկավագ Թեհրուդյանին, որ հակառակ իր ուսանողական վիճակին, կօգնե մեր տղոց կարգապահական գործին և ուրիշ հանդիսությանց մեջ իր բերած գործոն ծառայություններովը։

Վերջին և անկեղծ շնորհակալություններս բոլոր ամենց, պաշտոնյաներուն և մեր Հոգևոր Ճեմարանի բարի կամեցողներուն, որոնց ոժանդակություններով կրցանք այս շատ պատասխանատու գործը հասցնել այս տարվան ավարտին։ Ասոնց ամենուն համար կհայցեմ աստվածային որհնություն և ամեն հաջողություն ի գործս բարիս։

Հոգևոր Ճեմարանի վերատեսչության տարեկան տեղեկագրի ընթերցումից հետո վերատեսուչ սրբազանը հայտարարեց անունները այն ուսանողների, որոնք ուսման, վարքուբարքի, իմացական ազատ մրցություններում, եկեղեցասիրության և արտադասարանական լավագույն աշխատանքների համար արժանացել էին մրցանակի։

Ուսման մեջ առաջնության համար պարգևատրվեցին բարեշնորհ Խորեն սարկավագ Պայլակը (Բ դասարան), Խորեն Մկրտչյանը (Ա դասարան), Հակոբ Կրոջոյանը (Գ դասարան), Խաչիկ Արբրահամյանը (Բ դասարան), Վրեժ Բաղումյանը (Ա դասարան)։

Ուսման մեջ Երկրորդ կարգի մրցանակի արժանացան Ժիրայր սարկավագ Ճերեճյանը (Բ դասարան), Սարգիս սարկավագ Սարգսյանը (Ա դասարան), Ռաֆիկ Մկրտչյանը և Մաքսիմ Հակոբյանը (Գ դասարան), Արամայիս Սահակյանը (Բ դասարան) և Վիգեն Վահանյանն ու Հովհաննես Մարտիրոսյանը (Ա դասարան)։

Գեղագրեց վարի համար ամբողջ Ճեմարանում առաջին կարգի մրցանակի արժանացան Բ դասարանցիներ Գեորգ Բաղդիշյանը և Արշակ Ներսիսյանը։

Բայառիկ եկեղեցասիրության համար պարգևատրվել՝ Ա դասարանցի Կարապետ Քալիճյանը։

Արտադասարանական լավագույն աշխատանքների համար պարգևատրվեց Մաքսիմ Հակոբյանը (Գ դասարան)։

Իմացական մրցություններում առաջնություն և երկրորդություն շահող ուսանողները և արժանացան մրցանակների։ Դահլիճում հավաքվածների քաջալերական ծափերի տակ, մրցանակի արժանացած ուսանողները վեհափառ Հայրապետի ձեռքից աջահամբույրով ստացան իրենց նվերները։

Վերջում խոսք առավ Վեհափառ Հայրապետը.

«Այսօր Մայր Աթոռի համար տոնական օր մրն է. մեր շատ մը ուրախ տոնական օրերու շարքին. Հոգևոր Ճեմարանն ալ տարին գեր երկու անգամ հանդիսավոր կերպով կուրախացնե մեզ։ Այդ ուրախություններու առաջինը սեպտեմբերն է, երբ Ճեմարանը նորեն իր դռները կբանա, և երկրորդը փակման հանդեսն է, երբ դասերը իրենց վախճանին կհասնին։ Այսօրվան հանդեսը լավ հաղորդումի մը վրա կազմված էր։ Հաջող և խրախուսիչ էին կատարված իմացական մրցությունները։ Ամեն մեկ ուսանող արժեք մը կներկայացնե, ամեն մեկ ուսանող իմացական և հոգեկան արժեքով իր տեղն ունի։

Այս հանդիսության առթիվ աշակերտներեն միայն մանե հանգես եկան հրապարակավ. այս չի նշանակեր, որ չմասնակցողները հանդուգնոտ են։ Մտքի ու սրտի շնայտնարերված արժանիքներ կան ձեր բոլորին մեջ։ Ձեր ուսուցիչները կաշխատին երեսաբերել այդ թաքուն ուժերը. վստահ եղեք, որ ձեզմե ամեն մեկը շնորհք ունի. հարկ է աշխատանք, համառ ու հետևողական աշխատանք, համբերություն և ինքնավստահություն. որպեսզի այդ անբեղված քանքարները երեսաբերվին։

Անգրագառնալով Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ Հայկազուն սրբազանի զեկուցումին. կուզեինք Մեր գնահատանքի և շնորհակալության խոսքը ուղղել նաև սրբազանին՝ իր աշխատանքին համար, զոր տարավ Հոգևոր Ճեմարանին մեջ։ Վերատեսուչ սրբազանը իր անձով ավելի բախ տվավ մեր Հոգևոր Ճեմարանի կյանքին։ Մեր ցանկությունը առաջին մեկ օրեն այն էր, որ Հոգևոր Ճեմարանը ունենար իր բարձրաստիճան հոգևորական տեսուչը։ Ուրախ ենք, որ Մեր ցանկությունը կատարվեցավ և Հայաստանեկավ Հայկազուն սրբազանը ու ստանձնեց վերատեսչությունը։ Մեր շնորհակալության խոսքը նաև փոխ-տեսուչ Մեսրոպ վարդապետին, ինչպես և հարգելի դասախոսներուն, որոնց գլուխը կգտնվին պրոֆ. Կարո Ղաֆադարյանը, գոցենտ Համո Հարությունյանը, գոցենտ Վարազ Առաքելյանը, Ա. Հատիտյանը, Պ. Շանբազյանը, Դ. Շահինյանը, Մ. Գրախովսկյանը։

Իրոք որ Մենք բախտավոր կզգանք զմեզ, որովհետև մեր Ճեմարանը օժտվեցավ երկարուսուցչական փորձ ու հեղինակություն ունեցող դասախոսներով։ Մայր Աթոռի Գևորգյան Ճեմարանը փառավոր դասախոսական կազմ է ունեցած։ Այսօր Հոգևոր Ճեմարանը ուղիղ ձևով շարունակությունն է նախկինին. և մենք հայլ առ հայլ կհառաջդիմենք. հասնելու համար ոգեայի բարձունքին։

Դոհ ենք նաև մեր ուսանողներեն։ Մեզ կառաջնորդե հիշ մը խիստ սկզբունք մը՝ յառերեն լավերը ընտրել, լավերեն՝ լավագույնները։ Նատեր կուգան ու կանցնին մեր Ճեմարանեն և հիշեր միայն իրենց ապրումներով ու շնորհներով կհարմարին մեր կյանքին։ Մենք իբրև սկզբունք ոգեգրած ենք այն մտածումը, որ մեր ուսանողները կպատրաստվին հոգևոր ասպարեզին հետևելու համար։ Այդ տեսակետեն մոտենալով հարցին. մեր այսօրվան ուսանողությունը, իր հոգեկան ու բարոյական բարեմասնություններով. մեզ կբավարարե 80 տոկոսով։ Այս կնշանակե. որ մենք իրոք մեր ուղիղ հանապարհին վրա ենք և կարող ենք ապագայի մեր նպատակին հասնիլ։

Այս հանդեսով կփակվի տարեշրջանը։ Մոտ երեք ամիսներու արձակուրդ մը վերջ պիտի շարունակեմ ձեր աշխատանքը, պիտի շարունակեմ ոչ թե վերջացնելու նպատակով, այլ սկսելու համար ձեր բուն աշխատանքը։ Մեր Ճեմարանեն շրջանավարտ ըլլալեն հետո է, որ պիտի սկսի իրական գործը, որ երբեմ պիտի չվերջանա։ Դուք ավելի պիտի կապվիք ձեր ասպարեզին և այս Ս. Աթոռին։ Հոգևոր Ճեմարանի նպատակն իսկ այս է։

Մեր իղձն է՝ վեց տարիներու ուսումով, ձեզի սիրել սորվեցնել այս սուրբ հաստատությունը. այս Մայր Տաճարին հազարամյա ծառը քարերը։

Մենք հույս ունինք, որ զուք պիտի սիրեք Ս. Էջմիածինը, մեր եկեղեցին, մեր ժողովուրդը, մեր Մայր Հողը. հայոց լեզուն և մեր ամբողջ մշակույթը։

Դիտեք, որ մենք շինարարական աշխատանքներ կկատարենք նաև նյութական իմաստով, վերաշինելով մեր պատմական եկեղեցիները և վանքերը։ Փառավոր գործ է պահպանել և վերաշինել մեր սրբավայրերը և ճարտարապետական կորոնները։ Նյութական այս շինարարության կողքին Մենք կուզենք սակայն հոգևոր իմաստով ալ վերաշինել մեր սուրբ հավատքը. որ նյութա-

կան աչքով շրջիր: Եվ այդ հոգևոր շինարարությունը կկատարվի ձեր վրա: Հիր հոգիներուն մեջ է, որ պիտի վերաշինվի մեր Ս. եկեղեցին: Դուք պիտի դառնաք կենդանի տաճարներ:

Մենք կնավատանք Աստուծո և Նախախնամության: Մենք կնավատանք Հիսուսի Ս. Ավետարանին: Մենք կնավատանք մեր ժողովուրդի հոգեկան ուժերուն և հանճարին: Եվ մեծ է նաև Մեր հույսը և Մեր հավատքը ձեր վրա, սիրելի՛ զավակներ Մեր:

Հանախ կխոսինք մեծ մարդոց կյանքի մասին: Հայ ժողովուրդը ևս ունեցած է մեծ զավակներ, որոնք ընծա բերած են իրենց յուման մեր Ս. եկեղեցիի և մշակույթի հարուստ գանձարանին: Այդ մարդիկը սակայն երկինքեն պատրաստ չեն իջած, այլ հարատև և բուռնայան աշխատանքով հասած են ստեղծարար բարձունքներու: Ձեր առջև է անա այդ ծառայության. նվիրումի և ոգեշնչագործության հանապարհը:

Արդ, աճեցե՛ք, զորացե՛ք և հասնի՛ այն բարձունքներուն, ուր ձեզ կառաջնորդեն մեր Ս. եկեղեցիին և մեր պատմության ոգին:

Կօրհնենք գձեզ բոլորդ: Թող Տերը պահե, պահպանե ձեզ հոգիով ու մարմնով առողջ, առատապես պարգևելով ձեզ իր շնորհները:

Վեհափառ Հայրապետի այս ջերմ խոսքերը ընդունվեցին հոտնկայս, բուռն ծափահարություններով:

Հոգևոր ճեմարանի տարեվերջի հանդեսը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և երգչախմբի քառաձայն «Հայր մեր»-ով:

Վերջում Հոգևոր ճեմարանի տնօրենական և դասախոսական կազմը և ամբողջ ուսանողությունը մոտեցան Վեհափառ Հայրապետին՝ համբուրելու Նրա Ս. Աջը:

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ

(Հոգևոր հեմարանի
II դասարանի ուսանող)

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության հանապարհին շատ փորձություններ է կրել։ Նա հերոսաբար պայքարել է՝ պահպանելու համար իր անկախությունը, ազգային ինքնուրույնությունը և մշակույթը։

Կյանքի և մահու այդ պայքարում աշխատասեր հայ ժողովուրդը ոչ միայն պահպանել է իր ֆիզիկական գոյությունը, այլև ստեղծել է բազմակողմանի և հարուստ մշակույթ։ Շնորհիվ իր բարձր հանճարի և ստեղծագործ ու շինարար ոգու, նա հիմնել է գեղեցիկ կոթողներով զարդարված քաղաքներ, բերդեր, հոյաշեն ու գեղակերտ պալատներ։ Ամբողջ հայկական լեռնաշխարհում պահպանվել են կործանված քաղաքների, բերդերի, եկեղեցիների, վանքերի, կամուրջների ավերակներ, համաշխարհային արժեք ներկայացնող ձեռագրեր, գրականության, արվեստի և նկարչության գանձեր։

Պարսիկ շահերն ու խաները, հռոմեական աշխարհակալները, աշխարհավեր սելջուկներն ու մոնղոլները, թուրք բարբարոս հրոսակախմբերը միշտ սուր են բարձրացրել մեր երկրի ազատության և անկախության վրա, վիրավորել են մեր ազգային արժանապատվությունը, արհամարհել են մեր լեզուն ու Օկեղեցին, ավերել ու ամայացրել են մեր ծաղկուն քաղաքներն ու շեն գյուղերը, ոչնչացրել են հայ ժողովրդի ստեղծագործած նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանները և մեր ժողովրդի անմեղ արյունով են ներկել հայրենի դաշտերն ու գետերը։ Բայց վայրագ թշնամիները չեն կարողացել արմատախիլ անել հայ ժողովրդի ստեղծագործ ոգին, նրա ապրելու անմեռ կամքը, և ինչպես բանաստեղծն է ասել՝ նա շինել է միշտ, երբ նույնիսկ թշնամին մի կողմից քանդում էր հարևան տունը։

Հայ ժողովրդի ազգային ինքնուրույնության պահպանման և մշակույթի զարգացման բնագավառում Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին իր լուսամիտ հոգևորականների շնորհիվ մեծ դեր է կատարել։

Հայ հոգևոր մշակույթը մասնավորապես իր վերելքն է ապրել այն ժամանակ, երբ Ս. Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեական կրոնի լույսով է լուսավորել հայ միտքը, քրիստոնեական վարդապետության սիրո կրակով է վառել ու ջերմացրել հայի սիրտը, քրիստոնեական կրոնի վսեմ գաղափարներով շաղկապել հայ ժողովրդին, ամրապնդել Հայ Ազգի միությունը և անխզելի ու անբաժան դարձրել այն։

Ե դարում, Հայ Եկեղեցու երկու մեծ սյուների՝ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի անդուլ ջանքերի շնորհիվ ստեղծված հայ գիրն ու գրականությունը, որ ժամանակի ամենախոշոր մշակութային պահանջն էր հանդիսացել հայության համար, ազգային ինքնուրույն և

ունկար գոյության պայմաններ է ստեղծել և Հայ Ազգը փրկել ստույգ ոչնչացման վտանգից։

Ս. Սահակի և Ս. Մեսրոպի ստեղծած հրաշագործ հայ գիրը և նրանց դաստիարակած թարգմանչաց սերունդ հայ գրականությունը հանդիսացել են այն հզոր և հզոր ազդակը, որ բարոյապես և իմաստապես զինել է հայ ժողովրդին և իմաստավորել նրա հանրային կյանքը։

Հայ հոգևորականությունը, իր վեհ կոչման գիտակից, հանդիսացել է նախաձեռնողը, շարունակողը, պահողն ու պահպանողը, ոգեշնչողն ու իմաստավորողը հայ ազգային-եկեղեցական մշակույթի։ Ս. Սահակ Պարթև, Ս. Մեսրոպ Մաշտոց, Հովսեփ Հողոցմեցի, Ղևոնդ երեց, Գյուտ կաթողիկոս, Հովհան Մանդակունի, Մովսես Խորենացի, Եզնիկ Կողբացի, Եղիշե վարդապետ և Ղազար Փարպեցի—ահա պատվական անձնավորություններ, որոնք հանդիսացել են մեր Ե դարի ոսկեդարի հոգևոր մշակույթի անդուլ գործիչները։ Այս պանծալի և առաքինազարդ կրոնավորների սուրբ հիշատակը հավերժ խրոնիկի պիտի մնա հայ ժողովրդի հոգում։

Մինչև ԺԱ դար, մեր մատենագրության մեջ հիշվում են շուրջ 50 մատենագիրներ, որոնցից մեկը միայն՝ Գրիգոր Մագիստրոս գիտուն իշխանը եղած է աշխարհական։

Մեծ է եղել անցյալում մեր ազգային-եկեղեցական տարեգրության և մեր մշակույթի պատմության մեջ հոգևոր ճեմարանների, ընծայարանների, ժառանգավորաց վարժարանների, դպրեվանքների դերը առհասարակ, որտեղ դաստիարակել են մեր եռամեծ վարդապետները։ Հայաստանյայց Եկեղեցին անցյալում կատարել է իր ժամանակի համար խոշոր մշակութային-լուսավորական աշխատանք իր վանքերով, հոգևոր կենտրոններով և ճեմարաններով, որտեղ մշակվել, զարգացել և աչքի լույսի պես պահվել ու պահպանվել են մեր դարավոր մշակույթի թանկագին գանձերը, այդ թվում մատենագրությունը, նկարչությունն ու գրչագրությունը։ Վանքերում ծաղկած հայ մշակույթը արդյունքն էր մեր ժողովրդի հոգևոր բարեպաշտական զգացմունքների և հայ հոգևորականության քրտնաջան վաստակի։ Էջմիածին, Դվին, Տաթև, Սանահին, Հաղբատ, Գլաձոր, Կարմիր վանք, Սիս, Աղթամար, Երուսաղեմ, Արմաշ և այլ հոգևոր կենտրոններ հանդիսացան լուսավոր անուններ, որոնք վաղուց են անցել մեր մշակույթի պատմության մեջ իբրև հոգևոր մշակույթի կենտրոններ։

Հայ դպրոցն ու դպրությունը կրոնական և աշխարհիկ իրենք զույգ երեսներով ազգային գոյության պահպանման և պայծառացման մեծագույն ազդակներն են հանդիսացել անցյալի մեջ և շարունակում են հանդիսանալ նաև այսօր, մանավանդ Սփյուռքի հայության տրտում կյանքի համար։

Մեր եկեղեցական պատմության մեջ երկար է շարանը այն բազմավաստակ ու շինարար հոգևորականների, որոնք իրենց գիտության, արվեստի և գրականության նվաճումները ի սպաս են դրել հայ մշակույթի զարգացման և հարստացման շնորհակալ գործին։ Նրանք իրենց յուրահատուկ և ինքնուրույն արվեստով նոր գեղեցկություն, խորություն և նոր արժեք են հաղորդել մեր մշակույթին։ Այսպես, Շիրակացին, իր գիտական բազմակողմանի հմտությամբ, Կոմիտաս Կաթողիկոսն իր կրոնական սքանչելի բանաստեղծությամբ, Նարեկացին իր հոգեթով միստիկ գրականությամբ, Շնորհալին իր անգերազանցելի քերթողական արվեստով, Որոտնեցին և Տաթևացին իրենց Հայաստանյայց Եկեղեցու շահերի համար մղվող պայքարի գրականությամբ՝ անմոռաց երախտիք են թողել հայ սերունդների երախտագետ սրտում։

Ազգի մեծությունը նրա ստեղծագործող ոգու և այդ ոգու ստեղծած արգասիքների արժանավորության մեջ է կայանում։ Հայ Ազգը անցյալում ստեղծագործել է և իր ստեղծագործության հուշարձանները կազմում են այսօր հայության փառքն ու պատիվը և նրան ապահովում են պատվավոր տեղ՝ արժեքավոր մշակույթ ունեցող այլ ազգերի շարքում։

Հայի հոգին ձևակերպվել, կազմվել, իր արմատները արձակել, իր ինքնուրույն դրոշմով զարգացել, կորացել ու անխորտակելի էությունն է դարձել երկար դարերի ընթացքին մշակույթից, այսինքն կրոնից, գրականությունից և արվեստից ծնած իր սնունդով։

Մշակույթ բառը իր եվրոպական արմատի մեջ պաշտամունք է նշանակում։ Ուստի սրտագին սիրով և գուրգուրանքով պետք է կապվենք մեր պատմության, մեր գրականության ու արվեստներին, մեր բարքերին ու ավանդություններին։ Այդ պաշտամունքը, այդ ջերմ սերը դեպի մեր մշակույթը՝ թելադրում են հայ դպրոցն ու Հայաստանյայց Եկեղեցին, որովհետև նրանք են հայ մշակույթի ակնաղբյուրը։ Հայ դպրոցի և Հայաստանյայց Եկեղեցու շնորհիվ կարելի է հաղորդվել այդ մշակույթի արժեքների և ոգու հետ, այսինքն ծանոթանալ նրա հիմնական տարրերին, նրանք յուրացնել ու սիրել և մեր ներքին մարդը կերտել նրանցով։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին յափազանց կարևոր և վճռական դեր է կատարել նաև մեր ազատագրական շարժումնե-

րի մեջ։ Եկեղեցին օրհնել է հանուն հայ ժողովրդի ազատության և անկախության մերկացված սուրը։ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին սրբազան բեմերից հնչեցրել է միշտ հայրենասիրության քարոզը և իր թևերի տակ է առել, պահել ու պահպանել հայ ժողովրդին՝ մեր պատմության դժբախտ օրերին։ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին օրհնել և գլխավորել է Սփյուռքի հայության ազգահավաքը իր Հայրենի Հողի վրա։

Ուրեմն Ս. Լուսավորչի անմար կանթեղից վառե՛նք մեր մտքի ճրագը, կայծեր ստանանք Ս. Մեսրոպի մշտավառ մոմենուց, մտքով ու հոգով լուսավորված, աննահանջ սիրով գինված, հոգևոր կոչման բարձր գիտակցությամբ ծառայենք Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն և հավատացյալ հայ ժողովրդին, բարձր պահելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմական հմայքը, հայրենի սուրբ կրոնի բույրը, ազգային մայրենի լեզուն և հայրենասիրության դրոշը։

Կեցցե՛ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին և նրա ստեղծած սքանչելագործ հայ մշակույթը։

Կեցցե՛ հայ մշակույթի մեր օրերի «լուսաւոր վերակացու»-ն, մեր սիրելի Վեհափառ Հայրապետը։

ԽԱՉԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
(Հոգևոր ճեմարանի
Ա դասարանի ուսանող)

ՀԵՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԸ

Երգի պահանջն այնքան հատուկ է մարդու բնությանը, որ նա արտահայտվել է մարդկային կյանքի զարգացման նույնիսկ ամենանախնական շրջաններում։ Եթե հետադարձ հայացք գցենք պատմական ամենահեռավոր ժամանակների վրա, կտեսնենք, որ մարդկությունը միշտ էլ ավել է իր երգիչները։ Եվ նրանց երգերը սոսկ իրենց անձնական գեղարվեստական պահանջների ծնունդ չեն, նրանք բավարարություն են տվել նաև իրենց ժամանակակից հասարակության հոգևոր, գեղարվեստական պահանջներին։

Այն, ինչ ամենից առաջ գրավում է մեր ուշադրությունը նախնական երգերի մեջ, ինչ մեզ թվում է միամիտ, անպաճույճ ու պարզունակ, այդ ամենը նրանցում սերտ կապերով կապված է ժամանակի կյանքի հետ, այդ կյանքի բարիքների ու տանջանքների, ուրախությունների ու վշտերի հետ։

Այս բոլորը լավ է նկատել մեր եռամեծ վարդապետ Ներսես Լամբրոնացին, թե ոչիք ինչ որ գկամս մեր յեղաշրջէ յուրախութիւն կամ ի արտմութիւն որպէս գերդոցն ձայնս։

Եվ իրոք, հոգևոր կյանքի արտահայտման ձևերից և ոչ մեկը չունի այն ուժն ու ներգործությունը մարդկային հոգու վրա, ինչքան երգը։ Երգի մեջ մարդկային հոգին արտահայտվում է հույսման և գգայման բոլոր նրբերանգներով։ Երգը հիմնովին վերափոխում է երգողին, նրան դարձնելով ավելի կայտառ, ավելի աշխույժ՝ նայած երգին տոն տվող գգացման և տրամադրության։

Հայը, ինչպես բոլոր ժողովուրդները, աշխատելիս երգել է, որովհետև երգը ունեցել է այն կախարդական ազդեցությունը, որով մարդն ազդել է իր աշխատանքին՝ այն դարձնելով ավելի թեթև, ավելի հաճելի։

Տանջված ու չարչարված հայ ժողովրդի աշխատանքը ուղեկցված չի եղել գժկամությամբ և անեծքներով, նրա աշխատանքի հետ չեն լսվում փշրված հույսերի ձայներ։ Մենք այնտեղ լսում ենք միայն երգեր, թերևս գուցե միապաղաղ, պարզ և անարվեստ, բայց հարազատ՝ գյուղացու չարքաշ իրականությանը։ Այդ երգերը ոչ թե հոգևոր գեղումների, բոպեական տրամադրության ու ազդեցության արդյունք են, այլ գոյացած են աշխատանքի նյութական տարրերից ու նրա ռիթմից։

Մի տեղ հնչում է գութանավարի մեկամաղձոտ հորովելը, ծանր ու ձիգ մի մեղեդի, որ, կարծես, դուրս է պոռթկում խոր ակոսներից ու փոսերից և ընդմիջվում շեշտակի բացականչություններով։ Մի այլ տեղ մանգաղի կամ գերանդու զնգոցի տակ հնձվորի գլգլան երգերով գետին են գլորվում առատ բերքի հասցնացած խուրձերը։

Նույնիսկ հայ գեղջկուհին, Լոր անցնում է աշխատանքի, սկսում է երգել։ Նրա բրիչը բաղհան է կատարում իր համայիլ սոպրանոյի

հնչյունների տակ։ Շինականն իր սեփական աշխատանքը փառաբանելիս, զուգահեռաբար չի մոռանում անիծել իր խաղաղ աշխատանքը խափանող չարակամ թշնամուն։

Այսպիսի խոսքերի ենք մենք հանդիպում աշխատանքային երգերի մեջ.

«Վարենք, վարենք, վար անենք,
Մեր դուշմանին հար անենք»։

Սակայն բոլորովին այլ է ժողովրդի հոգին՝ բնության, հարսանիքի և պարի երգեր հորինելիս։ Նա շինականի քունն անուշ դարձնելու համար վարդի անմահական բույրը, երկնքում նոր ծագող լուսնակը, գլգլան չրերը կամ տաղ ասող բլբուլը, այսինքն ամբողջ բնությունը կապում, հյուսում և հարմարեցնում է շինականի անդորրի հետ։

Հայ շինական սիրահար երիտասարդի մաքուր և բանաստեղծական սերը դեպի իր «աղունիկ», «նախշուն թիթեռնիկ» յարը մեծ գովասանքով է երգում հայ ժողովրդական երգի դրառման, մշակման անզուգական վարպետ հանճարաշատ Կոմիտաս վարդապետը իր «Հոյ Նազան իմ» երգում։

Բնության զավակ, սարերի ու ձորերի մեջ մեծացած, թիթեռնիկների ու աղունիկների մեջ ապրող սիրահարը, իր երգով ու նվագով բնության ամեն մի խաղը կանաչ սարերով ու խրոխտ ձորերով է պատկերացնում։

Ժողովրդական երգերի հորինման մեջ հայ ժողովուրդը չի մոռացել նաև իր ավանդը մուծել հայ մանկան ծնունդը օրորոցային երգով գովաբանելիս, կամ ծերուկ նահապետի մահը դառնորեն ողբալիս.

«Նանի՛, նանի՛, բալա ջան,
Ինձ դանի, բալա ջան.
Իմ երեխու բուեր տանի,
Իմ դուշմանին շուեր տանի»։

Կամ սգալիս այսպես է ողբում հայ շինականը.

«Աշխատավոր հոգուդ մատաղ,
Վարած գուրանիդ մատաղ.
Մանր իմ մտիցս է ընկել,
Ահոր սրտիցս է ընկել»։

Հայ ժողովրդական երգերի մեջ առկա է մեր ամբողջ բնաշխարհը իր թարմ, գրավիչ ու բանաստեղծական շքեղություններով։ Հայ հոգու մեջ՝ հովերը երգում են ծաղիկների պես, ծովերը երգում են աստղերի պես, ամբողջ տիեզերքն է երգում մեր սրտի պես։

Ինչքա՜ն ներգործող, ազդու է երգը. երգն է աշխարհի տերը. մի՞թե մարդն առանց երգի դժբախտ չէր լինի, մի՞թե տիեզերքը համր չէր մնա իր գեղասքանչ հրաշքներով։

Երգեցե՛ք, դո՛ւք, հայ աշուղնե՛ր ու երգիչնե՛ր, երգեցե՛ք միշտ, անդադրում, թո՛ղ հավերժ հնչեն ձեր նվագարանները, թո՛ղ մարդկանց հոգիները լսեն ձեր սազի կախարդական, կենսաթրթիռ հնչյունները, որովհետև երգի մեջ է շողում լուսինը, այնտեղ են ալեկոծվում ծովերը, երգի մեջ են բուրում վարդերը, այնտեղ են թախծում բլբուլները, աղունիկներն ու նախշուն թիթեռնիկներն են ճախրում երգի մեջ...

Երգեցե՛ք, իմ հայ գուսաննե՛ր, երգի մեջ մեծ տիեզերքը կա, որովհետև երգն է տիեզերական գերահրաշ միակ լեզուն։

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ

(Հոգևոր ճեմարանի
Բ դասարանի ուսանող)

ՊԱՊՍ

Սողո պապս մի որսորդ էր, մեր սարերին սիրահար,
Ջավախքի լեռները սեգ չափում էր նա անդադար.
Հանգիստ չէր տա հանդում վազող եղնիկներին խելագար,
Թիբեռների հետևն ընկնող, մանուկի պես քարից քար:

Մի որսորդ էր այն ծերունին, և դեռ հիշում եմ հիմա,
Երբ գալիս էր որսը ուսին, ինչպես Տորքը ածդահա,
Վայր էր դնում անշունչ որսին, ապա կանչում. «Ա՜յ Ջանա,
Ջուր բեր, լվա իմ ոտքերը, է՛լ չեմ կարող դիմանա...»:

Դուրս էր վազում տատս իսկույն, ձեռին մի կուժ ջուր բռնած,
Ինչպես սիրուն սարի եղնիկ, մեղմ զեփյուռից փայփայված:
Վեր էր քաշում իր թևերը և շարժումով նազանի,
Լվանում էր հոգնած ոտքերն իր ամուսնուն քաջարի:

***

Ախալքալաքն, Ախալցիխեն ինչ փանելան ունեցել,
Բոլորի հետ գոտեմարտել ու երբեք չի հաղթվել:
Ջավախքի սահմանից դուրս մեծ համբավ է ունեցել,
Նրա օրով ո՛չ մի ոսոխ սիրտ չի արել գյոտ մտնել:
Մեղուները նրան փոքրուց փախցրել են Վրաստան,
Ու հետու է եղել նա միշտ իր լեռներից սրբազան:

***

Իմ սիրելի, երազ պապիկ, մանկությունից մինչև վերջ,
Տրորվել ու լաց է եղել հայրենասեր սիրտդ մեծ:
Դու չապրեցիր Հայկի երկրում, բայց քոռնիկը քո վերջին,
Հասել է սուրբ հողին նրա, ինչպես ծիտը իր բնին:
Նա կդառնա ձգող մագնիս, կճավաքի մասնիկներ,
Որ ընկած են փոշու միջին և տարածված աշխարհներ:
Եվ կձուլի մասնիկներից այդ նորաստեղծ մի աշխարհ,
Որ երազն էր քո մեծ սրտին, քո հին երազն անկատար:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՋԲՈՍԱՐՇԱՎ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻ ԳԱՎԱՌՆԵՐՆ ՈՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ

Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի նվիրական ավանդությունների մեջ իրենց ուրույն տեղն ունեն ուսումնական տարվա վախճանին կանոնավորաբար կազմակերպվող ուխտագնացություններն ու զբոսարշավները։ Կասկածից վեր է, որ ուսանողները լցվում են հպարտությամբ և երախտագիտությամբ՝ հանդեպ իրենց շինարար և ստեղծագործ նախնիքները, երբ ջերմեռանդ հավատով իրենց թրթռուն շրթներն են հպում մեր բազմադարյան վանքերի և խաչքարերի սուրբ մամուռներին։ Նրանց սերն ու նվիրվածությունը Հայրենիքի և ժողովրդի նկատմամբ արդարորեն գերաճում է, երբ դիտելով հայրենի հրաշափառ լեռներն ու ձորերը, ծանոթանալով պատմական այն բոլոր վայրերին, որոնց անուններն էին միայն մինչ այդ լսում գրասեղանների առաջ, կենդանի կերպով պատկերացնում են մեր ժողովրդի քաջարի մաքառումներն ու հերոսամարտերը։

Ահա այսօրինակ խոհերով և հույզերով, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը սույն թվականի հունիսի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մեկնեցինք՝ իրագործելու համար զբոսարշավի բավական լայն ու դժվարին մեր ծրագիրը։ Ժամը 11-ին հասանք Սևան։ Այստեղ եղանակը անձրևոտ էր։ Հորդ անձրևի տակ մտանք Նոր Բայազետ, որը զմրուխտյա լեռների ծոցում թառած մեր շրջանային գեղեցիկ կենտրոններից մեկն է։ Հրաշալի է Նոր Բայազետի Ս. Կարապետ եկեղեցին, կառուցված ԺԵ դարում, հայկական ոճով։ Կա նաև Միրանավոր Ս. Աստվածածին եկեղեցին, կառուցված ԺԶ դարի սկզբին, բազիլիկ ոճով։

Նոր Բայազետից մեկնեցինք դեպի Մարտունու շրջանը։ Դժվարին, բայց խիստ հետաքրքիր ճանապարհը մշտապես անցնում է լեռնանցքներով և գրեթե ամեն քայլափոխի մեզ բերում է անակնկալ գեղեցկություններ։ Մարտունու շրջանը նույնպես լեռնային է, հարուստ փարթամ արոտավայրերով։ Այստեղ, հունիսին, մեր ինքնաշարժները անցան նույնիսկ ձյունապատ լեռնալանջերով, երբ մի քիչ այն կողմ երփներանգ ծաղիկներն էին ժպտում կենսուրախ և առույգ։

Փոքրիկ գետակի ափին, Վերին Ղարանլուխ գյուղի մոտ, կանաչ մարգագետինների վրա նստեցինք ճաշի։ Մինչ այդ գյուղի բնակչությունը, նկատելով մեզ, սկսել էր հավաքվել մեր շուրջը։ Նրանց խնդրանքով Հոգևոր Ճեմարանի սաները երգեցին հոգևոր-եկեղեցական և ժողովրդական երգեր։

Շարունակելով մեր ճանապարհը դեպի Նոգեզնաձորի շրջանը, անցանք ավելի քան 2000 մետր բարձրության լեռնանցքներով և հասանք Սելիմի իշխանատունը (քարվանսարայ)։ Այս շենքը եղել է իշխանատեղի արարական ժամանակից դոյություն ունեցող և Արևելքն ու Արևմուտքը կապող առևտրական մեծ ճանապարհի վրա։ Կառուցվել է ԺԴ դարում, հայ ճարտարապետի ձեռքով, Պողոս-

յան իշխանական տոհմի օրով։ Անլիմի իշխանատունը մեծ կարևորություն ունի որպես հազվադեպ նմուշ հայկական հին ճարտարապետության քաղաքացիական կառույցների։

Անլիմի լեռնանցքը ոլորապտույտ այն ճանապարհն է, որն ունի մոտավորապես 40 կիլոմետր երկարություն, չափազանց մեծ նեղության վրա է և խիստ դժվարանցանելի, մանավանդ անձրևոտ օրերին։ Ճանապարհների այս դրությունը մեր հետաքրքրությունն ավելի էր խորացնում և արժեքավորում մեր համբորդությունը։

Ժամը 8-ին հասանք Եղեգնաձորի շրջանային կենտրոնը, որը գտնվում է բարձրաբերձ լեռների շրջապատի մեջ և ունի գեղեցիկ դիրք։ Տեղի միջնակարգ դպրոցի տնօրինությունը սիրահոժար կերպով մեզ տրամադրեց երկու ընդարձակ սրահ, որտեղ կիշերեցինք շատ հանգիստ։

Առավոտյան, ուղևորական նախապատրաստություններից հետո, ճանապարհ ընկանք դեպի Սիսիանի շրջանային կենտրոն։ Մինչ մեկնումը ուսանողներից ոմանք գրադվեցին ֆուտբոլի խաղով, իսկ ոմանք էլ բարձրացան մոտակա բլուրը, դիտելու համար սուրբ ու սիրելի մեր լեռն Արարատ։ Մեկ օրվա բացակայությունն անգամ բավ էր, զգացնել տալու համար նրա խորունկ կարոտը մեր սրտերում։

Սիսիան չհասած թեքեցինք մեր ճանապարհը դեպի Ջերմուկ։ Այս անունը վաղուց արդեն տարածվել է մեր Հայրենիքի սահմաններից դուրս, բայց դժբախտաբար դեռ շատերն են ծանոթ այդ վայրի հրաշափառ գեղեցկության։ Մուգ-կանաչ թավշով պատած շքեղ լեռների զմրուխտյա օրորոցի մեջ, ջրերի ու շրվեժների խուլ համերգի տակ և Հայաստանյան արևի կենսատու շողերի ներքո հիանալի է Ջերմուկը։ Լեռների փեշերն ի վեր, բացուռ տալածությունների կրծքին և ձորի շրթների վրա կոթողվել են հայկական ճարտարապետության լավագույն դրոշմը կրող նոր հիանալի շենքեր։ Ի տես այս բոլորի, ուրախությամբ համոզվում ենք, որ շատ մոտիկ ապագայում Ջերմուկը կդառնա մեր մեծ երկրի լավագույն ամառանոց-բուժավայրերից մեկը։

Ափսոսանքով թողնում ենք Ջերմուկը և մեկնում դեպի Սիսիան։ Ճանապարհը նախորդների հարազատ շարունակությունն է։ Անվերջ վայրէջք ու վերելք, օձաձայար ոլորապտույտներ լեռների, ձորերի, կիրճերի միջով, բայց միշտ կանաչ ու փարթամ արոտավայրերով շրջապատված, միշտ քաղցր, հոտավետ բուրմունքի մեջ և մանավանդ մշտապես հայրենի կապո՛ւյտ-կապո՛ւյտ երկնակամարի տակ։ Ջափ չկա մեր զոհունակությանը և մեր հոգեկան հրճվանքին։

Անցնելով մի քանի գյուղերի միջով, երեկոյան ժամը 8-ին հասանք Սիսիան։ Այցելեցինք Ս. Հովհաննես հռչակավոր եկեղեցին, որը կառուցված է է դարում։ Քիչ դադարից հետո ճանապարհ ընկանք դեպի Ֆորիս քաղաքը։ Գիշերային մեր ճամբորդությունը նույնչափ հետաքրքիր ու հաճելի էր։ Գորիս հասանք ժամը 10.30-ին։ Այստեղ ևս Ակսել Բակունցի անվան միջնակարգ դպրոցի տնօրինությունը մեզ ընդունեց սրտաբաց և սիրահոժար կերպով մեզ տրամադրեց դպրոցի ընդարձակ սրահներից երկուսը։ Գիշերեցինք շատ հանգիստ։

Առավոտյան ծանոթացանք քաղաքի տեսարժան վայրերին։ Ժողովուրդը մեզ ընդունեց սիրալիր կերպով։

Ճանապարհորդական նախապատրաստություններից հետո ուղևորվեցինք դեպի Ղարաբաղ։

Հիասքանչ է Ղարաբաղը իր լեռնային անկրկնելի գեղեցկություններով։ Վեհություն է շնչում կարծես ամբողջ շրջապատն ու մթնոլորտը։ Բոլորիս համար էլ պարզ ու հասկանալի են լինում այս երկրամասի՝ Սյունյաց աշխարհի հերոսական ազատատենչ ոգեղարի մասին մեր պատմության բերած բազմաթիվ վկայությունները։ Այստեղ ապրելիս, այստեղ շնչելիս թե կառնի մարդու հոգին, այնքան վեհ է և այնքան ներշնչող լեռնային Ղարաբաղը։

Անցնելով երկար և խիստ դժվարին ճանապարհ, մտանք Շուշի քաղաքը։ Շուշին ունեցել է հարուստ անցյալ։ Քաղաքը պատկանելիս է եղել Մելիք Շահնազարին։ Բերդը կառուցվել է Փանա խանի կողմից 1789 թվականին։ Հետագայում դարձել է առևտրական մեծ հանգուցակետ։ Ավելի ուշ եղել է հայ հասարակական կյանքի կարևորագույն կենտրոններից մեկը, ունեցել է տպարան, թեմական դպրոց, կուսանոց, եղել է առաջնորդանիստ քաղաք, մեր մշակույթին և գրականությանը տվել է լավագույն դեմքեր՝ վիպասան Մուրացանը, պատմաբան Լեոն, գրականագետ Ա. Տերտերյանը և ուրիշներ։

Սակայն ազգամիջյան դժբախտ կռիվների պատճառով, Շուշին 1920 թվականին հրդեհվել է և ավերվել։ Ավերակների մնացորդները կանգուն և պերճախոս վկաներ են։ Խորապես ողբերգական է տեսարանը։ Տիո՜ւր, տիո՜ւր է ամեն բան։ Ինչքա՜ն արյուն ու կյանք են խլել ժողովուրդներից այդ ազգամիջյան կռիվները... և ինչքա՜ն մխիթարական է, որ այսօր, այդ նույն ժողովուրդները նույն հողի վրա ապրում են համերաշխ և սիրով։

Երկյուղածությամբ և ակնածանքով դիտում ենք կիսավեր վիճակի մեջ իսկ հոյաշնչիչ Ամենափրկիչ կամ Ղազանչեցոց եկեղեցին, որը կառուցվել է 1868—1888 թվականներին սրբատաշ սպիտակ քարերով և մանավանդ հայկական ճարտարապետության մաքուր և հարազատ ոճով։

Մանրամասն ծանոթանալով եկեղեցուն, երգեցինք հայոց պատարագի հուզիչ «Տէր ողորմեա»-ն, դիտեցինք շրջապատի շիրիմները, նկարվեցինք զանգակատան առաջ և ապա ծանր հուզումներով հրաժեշտ տվեցինք Շուշուն։

Ոլորապտույտ ճանապարհով իջանք ցածր, դիտելով մոտիկ հեռավորության վրա գտնվող նորակերտ Ստեփանակերտը իր բարձրաբերձ շենքերով և իր ծխնելուղներով։ Նորաշեն այս քաղաքը, Շուշի քաղաքին մոտիկ, բարձրանում է հսկայաքայլ առաջընթացով, շնորհիվ մեր ժողովրդի ստեղծագործ ջանասիրության։ Հասանք Ստեփանակերտ։ Ընակիչները մեզ դիմավորեցին հրճվանքով։

Ստեփանակերտից մեկնելով ուշ գիշերին հասանք Կիրովարաղ։ Մեզ ուրախությամբ դիմավորեցին տեղի երիտասարդ և գործունյա արժանապատիվ Տ. Նշան քահանան և եկեղեցական խորհրդի անդամները։ Գիշերեցինք հայոց եկեղեցու վերնատան մեջ։

Առավոտ վաղ շարունակեցինք մեր ուղևորությունը, անցանք Շամխոր, Ազստաֆա և Ղազախի քաղաքները և վերստին մտանք մեր Մայրենի Հողը։

Անցանք Իջևանի շրջանով և Դիլիջան շհասած, թեքվեցինք աջ՝ լեռների մեջ, Հաղարծնի վանքը ուխտի գնալու համար։ Անցանք շատ խիտ անտառի միջով, չափազանց դժվար 7 կիլոմետր երկարությամբ ճանապարհով և հասանք վանք։

Վանքի դիրքն ու շրջապատը հրաշալի են։ Կանգնած է կանաչազարդ ու ծառաբեր անտառների ծոցում, դեպի ձորը նայող բարձրադիր վայրում։

Հաղարծնի վանքը բաղկացած է երեք եկեղեցիներից և 1 սեղանատնից։ Վանքը հիմնադրվել է Իվանե և Սարգիս Զաքարյանների կողմից, Ժ դարում։ Ժ դարում նախ կառուցվել է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, ապա ԺԱ դարում՝ Ս. Աստվածածինն ու Ս. Ստեփանոսը։ Սեղանատունը կառուցվել է 1248 թվականին Մինաս վարդապետի կողմից, Հովհաննես և Սարգիս վարդապետների ձեռքով։

Հաղարծինը ունեցել է դպրոց։ Ըստ Կիրակոս Գանձակեցու, վանքն իր մշակութային կյանքի ամենածաղկուն շրջանն անց է կացրել Խաչատուր Տարոնեցու առաջնորդության ժամանակ։ «Սա պայծառացոյց սուրբ Հաղարծինն, յորում առաջնորդ էր ինքնն,— գրում է պատմիչը։

Վանքի բակում, բնության բոլոր դեղեցիկ ու օգտավետ բարիքներով օժտված այս վայրում նստեցինք ճաշի, որից հետո ունենցանք մի քիչ հանգիստ և ապա ճանապարհ ընկանք դեպի տուն։

Անցանք Դիլիջանով, Սևանով, Երևանով և ամենաբարի Աստուծո օգնությամբ հունիսի 14-ին ողջ և առողջ հասանք Մայր Աթոռ Ս. Էջմիածին։ Անմիջապես ներկայացանք Վեհափառ Հայրապետին՝ մեր խորին երախտագիտությունը հայտնելու համար։ Նորին Ս. Օծությունը մեզ ընդունեց գոհունակությամբ և հրճվանքով այս անվտանգ, կազդուրիչ և օգտավետ զբոսաշրջիկի հաջող իրագործման համար։

Աջահամբույրից հետո առանձնացանք մեր սենյակները հանգստանալու։

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱԲՅԱՆ

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԳԱՐԲԵԲԱԿԱՆ.—Լույս տեսավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նոր գիտական օրգան «Պատմա-բանասիրական հանդես»-ի առաջին համարը։ Առաջին համարում զետեղված են ակադեմիկոս Աբր. Կարինյանի, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ դրոշ.-դոկտ. Արտաշես Ղարիբյանի, ակադեմիկոս Ս. Ներսիսյանի, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Հովհաննիսյանի, պատմական գիտությունների թեկնածու Հ. Ժամկոչյանի և ուրիշների հոդվածները։ Համարն ունի հազարդումներ, հրապարակումներ, գրախոսություն, տեղեկատվություն, ինչպես նաև «Փիլիսոփայական կյանք» և լրատու բաժիններ։ Գիտական այս նոր պարբերականում լուսաբանվելու են հայ ժողովրդի պատմության, գրականության, փիլիսոփայության, լեզվի և մշակույթի հարցերը, պատմագրության, բնագիտության բանասիրության և հայագիտության անտիպ խնդիրները, հայ ժողովրդի բաղաքական, տնտեսական և մշակութային կապերը մյուս ժողովուրդների հետ։

ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՍԱԴԻՆ ՆԻՐՎԱԾ Է.—Մայիսի 23-ին, Գրողների միության դահլիճում, տեղի ունեցավ Իրանի մեծ բանաստեղծ Սաադիի (1184-1291 թ. թ.) «Գոլեստան»-ին նվիրված հանդիսավոր երեկո, որը կազմակերպել էին Հայաստանի Գրողների միությունը և Արտաքին հետ կապերի կոմիտեն։ Հայկական ընթերցողությունը Սաադիի աշխարհի ամենամեծագույն բանաստեղծներից մեկն է, որ իր ստեղծագործություններում արտահայտել է ժողովրդի ազնիվ խորհրդի ու զգացմունքները։ Զեկուցումով հանդես եկավ Ս. Տարոնցին։ Հայաստանի Գեղարվեստ հրապարակությունը հրատարակեց և պատրաստում է «Գոլեստան»-ի նոր թարգմանությունը։ Սաադիի կյանքի և գրական գործունեության մասին տուրք անգնահատելի գիրք են։ Հայտնի է, որ նա իր կյանքի դպրոցի մասը անց է կացրել ճանապարհորդություններ մեջ։ Երբեմն եղել է Մեքքան և Մադինան սրբազան քաղաքներում, եղել է նաև Հայաստանում։ Նա ավարտել է Բաղդադի «Նիզամիյա» նշանավոր դպրոցը։

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՆԵՐ ԲՈՒԼԳԱՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ.—Բուլգարական կառավարության խնդրանքով Հայաստանից դասատուներ են ուղարկվում Բուլգարիայի հայկական դպրոցներում դասավանդելու համար։ Այդ նպատակով Հայաստանի լուսավորության մինիստրությունը առաջնորդել է փորձված դասատուների մի խումբ, որը երկու տարով մեկնելու է Բուլգարիա։ Նրանք դասավանդելու են մայրենի լեզու և գրականություն Սոֆիայի, Վառնայի, Բուրգասի, Սառնովդրադի և Բուլգարիայի այլ քաղաքների հայկական դպրոցներում։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ.—Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի գիտական աշխատողները ավարտել և տպագրության են հանձնել Ռուս-հայերեն բառարանի վերջին՝ չորրորդ հատորը, որն իր տեսակի մեջ լավագույնը և ամենամանրամասնն է։

Բառարանը պարունակում է ավելի քան հարյուր հազար բառ։ Այս խոշոր աշխատությունը հայ լեզվագետների՝ գրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանի, Ե. Տեր-Մինասյանի, Հ. Համբարձումյանի, բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Գնորգյանի և բառարանագետ Վ. Փոքիչյանի երկարամյա քրտնաջան աշխատանքի արդյունքն է։ Ինստիտուտի կոլեկտիվը ավարտեց նաև արդի հայերենի հոմանիշների բացատրական բառարանի կազմումը։ Հարյուր հազար բառ ամփոփող այս բառարանում օգտագործված են բնագրեր հայ և ռուս դասական գրողների, արդարադատության և սովետական գրողների ստեղծագործություններից։

Սկսել է հայ-ռուսերեն հոմանիշների բառարանի կազմումը, որը պարունակելու է հարյուր հազար բառ։

Երևանի Գեղարվեստ համալսարանի, Մանկավարժական ինստիտուտի, Հեռակա-մանկավարժական ինստիտուտի լեզվաբանների համագործակցությամբ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտը սկսել է հայերեն հոմանիշների ակադեմիական բնրականություն կազմելու աշխատանքները։ Արդեն լույս են տեսել բնրականության առանձին մասերին նվիրված գիտական լուրջ ուսումնասիրություններ։

Մրագրի մեջ է մտցվել հայերենի 20 հատորանոց ակադեմիական բառարանի նախապատրաստումը։ Այն բովանդակելու է առանձին բառեր, դարձվածքներ և նախադասություններ։

ՆԿԱՐԻՉ ԳՈՒՐՈՅԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ.—Վերջերս Երևանի կերպարվեստի դահլիճում բացվեց ինքնուս նկարիչ Գուրոյի (Գուրգեն Պարոնյան) աշխատանքային ցուցահանդեսը։ Ցուցադրվել էին Հայրենիքը ներկայացնող բնանկարներ, նատյուրմորտներ և այլն։ Դրանք աչքի են ընկնում իրենց պարզությամբ, հարազատությամբ և անմիջականությամբ։

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ.—Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի պատմության և տեսության սեկտորը վերակազմվեց Արվեստի ինստիտուտի։ Նոր ինստիտուտը ունի ճարտարապետության, երաժշտության, կերպարվեստի և այլ սեկտորներ։

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ.—Վերջերս տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդրանիկ ընդլայնված նիստը, որտեղ լսվեց արվեստագիտության թեկնածու Մատթեոս Մուրադյանի գիտական հաղորդումը՝ «Կոմիտասի նորահայտ անտիպ նամակները» թեմայով։ Այդ անտիպ նամակները վերաբերում են 1902—1912 թվականների ժամանակաշրջանին։ Օգտագործելով մինչև այժմ անտիպ մնացած նամակները, զեկուցողը հանգամանորեն կանգ առավ Կոմիտաս վարդապետի կողմից առաջ քաշված մի քանի կարևոր հարցերի վրա և բերեց ընդարձակ քաղվածքներ այդ նամակներից, որոնց մեջ շափազանց հետաքրքիր նորություններ կան Կոմիտաս վարդապետի ինչպես ստեղծագործական ու գիտահետազոտական, այնպես էլ հասարակական, քաղաքական հայացքներին վերաբերող։

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ՍԱՓԻՐԻՏՈՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 25-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈ.— Երևանի Կոմպոզիտորների տանը տեղի ունեցավ երեկո նվիրված հայ անվանի կոմպոզիտոր Սպիրիդոն (Ստեփան սարկավագ) Մելիքյանի մահվան 25-ամյակին։ Այդ օրը Կոմպոզիտորների միությանդահլիճն էին հավաքվել երաժշտագետներ, արվեստի աշխատողներ, երաժշտասեր հասարակայնության ներկայացուցիչներ։ Սպիրիդոն Մելիքյանը հայ ազգային երաժշտության հիմնադիր Կոմիտաս վարդապետի սկսած մեծ գործի շարունակողն էր։ Նա ժողովրդական երգերի բանահավաք էր, երաժշտության հիանալի մասնագետ, որի հոդվածները, հայկական հին նոտագրությանը նվիրված աշխատությունը, «Հայկական ժողովրդական երգերի գամմաներ», «Հայ երաժշտության պատմության ուրվագծեր» գրքերի իրենց արժանի տեղն ունեն հայ երաժշտության պատմության մեջ։

Երեկոյին Ս. Մելիքյանի մասին իրենց հուշերը պատմեցին կոմպոզիտոր Ա. Տեր-Ղևոնդյանը, ճարտարապետ Մ. Մազմանյանը և ժողովրդական ուսուցիչ Սիմակ Սահակյանը։ Ժողովրդական դերասան Շարա Տալյանը երգեց Ս. Մելիքյանի մինչև օրս չկատարված ստեղծագործություններից։

ԱԿԱԴ. Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՄԵԾԱՐՈՒՄԸ.—Ամերիկայի արվեստների և դիտությունների ակադեմիան (Բոստոն քաղաք) Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանին ուղարկել է Երան Ակադեմիայի պատվավոր անդամ ընտրելու դիպլոմ։

Վ. Համբարձումյանը Ամերիկայի արվեստների և դիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ ընտրված առաջին սովետական աստրոֆիզիկոսն է։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Հունիս ամսվա 9-ին Հայաստանի Պետական պատկերասրահում բացվեց սովետական կերպարվեստագետների 1955—1957 թվականների գեղանկարչության, քանդակագործության և գրաֆիկայի ցուցահանդես։ Ցուցահանդեսում ներկայացված է ավելի քան 350 աշխատանք։ Ցուցահանդեսում ներկայացված գործերը պատմում են մեր երկրի պատմական անցյալի, Հայրենական պատերազմի, սոցիալական և մշակութային կյանքում ժեռ բերած նվաճումների մասին։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.— Հայաստանի աշխատավորները չերմորեն պաշտպանում են Ստոկհոլմում զինաթափման և միջազգային համագործակցության կոնգրես հրավիրելու գաղափարը։ Հունիսի 11-ին Արվեստի աշխատողների տանը տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի համագումարը մայրաքաղաքի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ։ Խորհրդակցության մասնակիցները հոսանկայս հարգելի խաղաղության գործի աննկուն մարտիկներ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ-ի, Ա. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի և Հ. Դանիելյանի հիշատակը։

Ստոկհոլմի կոնգրեսի նախապատրաստման մասին զեկուցումով հանդես եկավ Հայաստանի խաղաղության պաշտպանության կոմիտեի նախագահ, բանաստեղծ Նաիրի Զարյանը։ Խորհրդակցության մասնակցեց նաև Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը։ Խաղաղության մեծ գործիչը, որը երկար ժամանակ եղել է Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի խաղաղության կոմիտեի անդամ և շքանշանով պարգևատրվել է Ռումինական կառավարության կողմից։ Վեհափառ Հայրապետը ընտրվեց Խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի անդամ։ Նորին Ս. Օծությունը Հայ Եկեղեցու և բոլոր հավատացյալների անունից չերմորեն ողջունեց Ստոկհոլմի կանգրեսի հրավիրումը և Իր համոզմունքը հայտնելով ասաց. «Մարդկայնությունն ու խաղաղասիրությունը կհաղթանակեն, և ժողովուրդները միմյանց հետ կապրեն հաշտ ու խաղաղ»։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ.— Անդրկովկասի եղբայրական ռեսպուբլիկաների կուլտուրայի մինիստրությունների որոշմամբ, ամեն տարի հերթականորեն Թբիլիսիում, Երևանում և

Բարվում անց է կացվում «Թատերական գարուն», Ա-ռաջին գարունը անցի ստեղծով անցյալ տարի Թբիլիսիում։ Այս տարվա գարունը անց կացվեց Երևանում մայիսի 31-ից մինչև հունիսի 7-ը։ Թատերական գարունը նախաձեռնվեցին ժամանակակից թեմատիկայի նվիրված լավագույն բեմադրություններ։ Երևանի Գ. Մաքսիմովի անվան պետական թատրոնը ներկայացրեց Գ. Բորյանի «Նույն հարթի տակ» պիեսը։

ՅՈՒԲԼԵԱՆԻ Ա. ԳՅՈՒԼՋԱԴՅԱՆԻ ՀՈՐԵԼՅԱՆԸ.— Հունիսի 14-ին նշվեց Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստուհի Աբգարյա Գյուլջադյանի ծննդյան 50 և արտիստական-կատարողական գործունեության 30 տարին։ Եռալով 25 տարի Աբգարյա Գյուլջադյանը նրգել է ուժգորով և մշտապես աշխատել ուսումնական դերերի շրջանակներում։ Նրա երգացանկը ընդգրկում է ավելի քան 200 հայկական ժողովրդական և դասական երգեր, որոնց նա կատարել է ավելի քան 4 500 անգամ։ Հայաստանի ամեն քաղաքում ու գյուղում նա համերգներով հանդես է եկել։ Նա համերգներով հանդես է եկել նաև Հայաստանից դուրս։ Եղել է Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բաքվում, Ռոստովում և այլ վայրերում։ Ներկայիս երգչուհին իր բեղմնավոր գործունեության համար պարգևատրվել է մեդալներով ու պատվոգրերով։ Աբգարյա Գյուլջադյանը այժմ Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստուհի է։

ՀԱՐՏԱՐԱՊԵՏ Ա. ԹԱՄԱՆՅԱՆԻ ՍՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԸ.— 1958 թվականին լրացավ հայ մեծագույն հարտարապետ, ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի ծննդյան 80-ամյակը։ Անդրադարձնելի վարպետի արտահայտությամբ՝ «նոր Երևանի անունը հավիտենապես կապված է Թամանյանի անվան հետ։ Նրա դրոշմի տակ է Երևանը։ Նրա մեծության չափը ամենուրեք է։ Նրա արամաբանված, կշռված հատակագծի վրա է, որ բարձրանում է մեր մայրաքաղաքը»։

Թամանյանը հարտարապետ-արվեստագետ էր, ոչ միայն կրթությամբ, այլև հոգով։ Սնվել էր դասական հարտարապետության վարպետներով, բայց գիտեր նրանք զարգացել, ժառանգներ նոր օրերի նոր պահանջներին, նոր ոգուն։ Նա ստեղծիչն է հայ ազգային նոր հարտարապետության։

Թամանյանի գլուխ-գործոցն է Երևանի Կառավարական Տունը, որ հանդիսանում է ներշնչարան և դպրոց՝ հարտարապետությամբ զբաղվողների համար։

Թամանյանը ըստ արժանվույն և ճիշտ գնահատեց անցյալից մնացած հարտարապետական ժառանգությունը և թույլ կանգնեց նրա նկատմամբ մեխանիկական ընդունելության դեմ։ Նա ժամանակակից բովանդակությամբ շինարարությունը զարդարեց անցյալից մնացած արտահայտչական այլևայլ հնարանքներով, նյութեց տալով արդիական գույն ու մեկնություն։ Դրա համար էլ Երևանը ոչ թե որևիցե քաղաք է, որին կարելի է պատահել աշխարհի որևիցե մեկ մասում, այլ հայկական քաղաք է, արտահայտում է հայ ժողովրդի դեմքն ու հոգին։

Երևանագետ հայ ժողովուրդը նրա անունով է կոչում Երևանի նոր, շատ հայկական կառույցներով և բնական գեղեցկություններով զարդարված մի փողոց։ Նրա մուտքին շուտով կկանգնի իր ժպտացող, հայրական նայվածքով անձնավորությունը, քարե պատվանդանից մշտապես հրճվելու համար իր չիմարպես փայփայած երազի՝ Երևանի իրականություն դարձած համայնապատկերով։

ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՊՈՇՏՈՆԱԿԱՆ ՀՈԳԱՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

Գաղութահայ կյանքի մեջ ստեղծված են շատ մը կարևոր խնդիրներ, որոնք որոշ ազդեցություն և կապակցություն ունին մեր ժողովուրդի ապահովության և խաղաղ զարգացման հետ։ Ամերիկահայ ազգային խորհուրդս, իրրև սփյուռքահայության միասնության նվիրված մարմին մը, ընդգրկած ծրագրին համաձայն անհրաժեշտ նկատեց ծագած այդ հարցերու մասին մամուլի տրված պարբերական հաղորդագրություններու միջոցավ իր խոսքն ըսել և իր թելադրանքները տալ Ազգային խորհուրդի տեղական մարմիններուն և ժողովուրդին։

Ներկայիս գաղութահայությունը հուզող կարևոր խնդիրն է Հայ Եկեղեցին պառակտելու վնասակար փորձերը ծանոթ խմբակի մը կողմե։

Եկեղեցական և ժողովրդական կանոններու հակառակ Անթիլիասի ապօրինի «կաթողիկոս»-ի ներկայացուցիչ և դավի ընկեր Խորեն եպիսկոպոս Բարոյան Ամերիկա եկած է։ Ան քաղաքե քաղաք շրջելով Դաշնակցության սովորական որոմնացանի դերը կկատարե։ Ան կջանա վարկաբեկել Հայոց Նվիրական էջմիածինը օտարներու առաջ։ Ան կաշխատի այնպես հավատացնել, թե՝ ամերիկահայ առաքելական եկեղեցիներու մեծամասնությունը էջմիածնեն անջատված, իրենց կողմն են անցեր, ինչ որ բացարձակ սուտ մրն է արդեն, և բոլորովին անվայել հայ եկեղեցականի մը դիրքին ու աստիճանին։

Ազգային Եկեղեցվո դեմ մղվող այս անամոթ խաչակրության ազդու պատասխանը տված է արդեն վերջերս Ռեյսինի մեջ գումարված՝ Էջմիածնի հավատարիմ Առաքելական Եկեղեցիներու պատգամավորներու թեմական համագումարը։ Այս համագումարը իր ամուր կեցվածքով և Էջմիածնի հանդեպ ցուցադրած անպայման վստահությամբ շառաչուն ապտակ իջեցուց դաշնակ պառակտիչներու և անոնց գործիք դարձած ուխտադրուժ «եկեղեցական»-ներու երեսին։

Մեր Նվիրական ու պատմական էջմիածինը դարավոր փոթորիկներե անցած, դաժան բռնավորներ է տեսած։ Լենկթիմուրի, Ջինգիզխանի, Շահ Աբբասի պես մարդիկ եկեր ու անցեր են մեր երկրեն, բայց մեր էջմիածինը մնացեր է միշտ ամուր և անսասան։

Այսօր ալ օտարներու իրենց հոգին ու խիղճը ծախած հայանուն խմբակի ժամանակավրեպ փորձերը անմիտ ու ապարդյուն պիտի մնան, ինչպես եղավ մոտ կես դար առաջ, նույն դավադիր հոսանքին կողմե հնարված հայ եկեղեցիները ակոմբներու աստիճանին իջեցնելու— բաց ու գոցի խընդիր։

Այսուհանդերձ, Ազգային խորհուրդի տեղական մարմիններն ու անդամները, աշխատությամբ հետևելու են, որ երբ պառակտիչ հոսանքը պաշտոնական հաղորդագրություններ տա տեղական թերթերուն մեջ Էջմիածնի դեմ, Խորհրդի տեղական մարմիններոր հերքեն այդ սուտերն ու զրպարտությունները, խորհրդակցելով իրենց շրջապատի հասարակական ծանոթ անձնավորությանց հետ, նույն թերթերու ուղղված փոխադարձ գրություններով մերկացնելու են դաշնակիզմի կատարած հակակրոն դերը և անկարգասիրահ ու կուսակցական հեկեղեցականնե։

բու Էջմիածնի հեղինակության դեմ գործած ամոթալի դավաճանությունը։

Հայ Եկեղեցին ոչ մեկ կուսակցության և կազմակերպության ի պատկանիր։

Ան սեփականությունն է ամբողջ հայ ժողովուրդին, անոր ազգային տունն է ան, անոր գոյության բերդն ու սրբությունը՝ իրեն կնդրոն ունենալով Էջմիածնի Մայր Աթոռը։ Հավատավոր ամեն հայ պարտավոր է պայքարի դաշտ իջնել, երբ վտանգ կսպառնա Հայաստանյայց Եկեղեցիին։ Ինչպես եղավ Վարդանանց շրջանին։

Ով ո՞չ միայն անհատներ, այլ կազմակերպություններ, հայրենակցական միություններ, իրենց վարչական կազմի անունով և պաշտոնական գրություններով, պետք է ետ շպրտեն Էջմիածնի դեմ եղած ամեն չարախոսություն և բամբասանք։

Պետք է միշտ անխախտ պահել հավատքը մեր դարավոր Էջմիածնին և անոր արժանավոր Գահակալին, Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին հանդեպ։

Այս ըլլալու է մեր կարգախոսը։

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

(Թեյրութ, «ԱՐԱՐԱՏ» օրաթերթ, 15 մայիսի 1958 թ.)

ՍԵՎ ՄՈՄԸ

«Ո՛չ ի քուն երազ, և ո՛չ յարթնութեան տեսիլ»։

***

Այլ՝ հանկարծական վերազարթումն դառնակսկիծ հիշատակի մը մանկական...

«Խավարման գիշեր» մըն էր։ Գիշեր «հիշատակի մատնության, չարչարանքի և խաչելության»։

Մայրս տարած էր զիս Տրապիզոնի մեր թաղի մոտակա Ս. Աստվածածին եկեղեցին։ Բեմին վերև, սև վարագույրին վերեն՝ վար կախ տրված էր հսկա պատկերը Խաչելության։ Մեծ աշտանակի մը վրա կպապակեր ու կպլպլար մոմի մը մեղրալույս լեզուն՝ լուսավորելով մեղրամոմե դիմագիծը բազկատարած և գլխահակ Խաչյալին։ Կին մը, ծունկի ինկած և հերարձակ, փարած Խաչի պատվանդանին, կգալարվեր, կարտասվեր։ Ուրիշ մը շնորհալի, սուգեն քարացած և քողածածուկ՝ մյուս կողմը, և անոր կողն ի վեր երիտասարդ մը ակիլավոր, լույսը լճացած սիրո բիրին մեջ։

Արևը խավարած և լուսինը նվաղած՝ իրենց լուր հսկումը կկատարեն դեմ-դիմաց, Խաչի դրամին մեջ բախտորոշ։ Երկինք և երկիր երկունքի մեջ։ Եվ անդին աքաղաղ մըն ալ՝ սնափետուր, կոկոզավիզ, այլ կարծես թևահարելե խոնջ ու թևաթափ և կտուցը կիսաբաց։ Խոսեր էր—կպատմեին հետո—երինք անգամ...։ Ի՞նչ էր խոսեր, ինչո՞ւ էր խոսեր. ի՞նչ դեր էր ունեցեր այդ եղերերգության մեջ,— իմ մանկական միտքը ոչինչ կարող էր հասկնալ, ոչինչ գուշակել։

Պատկերին առջև շարված էին տասներկու աշտանակներ։ Տասնմեկը սպիտակ մոմերով, իսկ մեկը՝ կուպրի նման սև։ Աչքս հառած էի անոր և մանրիկ ու միամիտ խոկումներով պաղեցուցած։ Հանկարծ լուսարարի կճատի բոցիկեն լույս-լեզու ելան տասնմեկ մոմերը, իսկ սևը մնաց անլեզու, անլույս։ Ինչո՞ւ,— դարձյալ ոչինչ հասկցա։

Ավետարան՝ մեկը ա՛յնքան երկար, երգ, շարական և քարոզ, բոլորն ալ թախծալից շեշտերով և մելանուշ ողբաձայնությամբ,— խնկամանի մը մեջեն քուլա-քուլա վեր պողող կնդրուկի ոլորապտույտ ու մոլորահած մուխ ու ծուխերուն հետ,— կլեցնեին կամարն ու մթնոլորտը սգապատ տաճարին, պարուրելով ու շղարշելով նաև Խաչն ու Խաչյալը։ Եվ իրենց ջերմ շունչով ու բարկ բուրումով կտամկացնեին ու կլեցնեին իմ ալ մանկունի աչկունքը՝ արցունքով։ Ես ալ կխառնեի լացս՝ խուլ հեծկլտանքներուն հետ մամիկներուն, անշուշտ նաև մայրիկիս...

Ա՜հ, Խաչյալին դե՜մքը... Սև Մո՜մը...

Եվ թմրեր ու քնացեր էի...

***

Կես գիշեր էր՝ կծու, ցուրտ ու ցավագին։ Երկար արարողությունները վերջ էին գտեր։ Ես, մայրիկիս հետ վերադարձա տուն։ Քնաթաթախ՝ նետվեցա անկողին։ Տարտամորեն կհիշեմ, թե մոայլ երազներ խռովեցին գիշերն հանգիստս։ Մանավանդ ծննդավայրիս Ամենափրկիչ վանքի որմանկարներուն կեռպոչ ու կոտոշավոր դևերու սև պարերու մեջեն այն սև մո՜մը շարալեզո՜ւ, անլո՜ւյս։ Չարհուրած վեր ցատկեցի ընդոստ։ Շփեցի շղմած աչքերս։ Անէացած էր ուրվաներու դիվադրամը։ Բայց կմնար սակայն սև մոմին... «Մայր,— ըսի սարսռագին,— այն մեկ մոմը ինչո՞ւ սև էր՝ անլեզու և անլույս։» «Ծղաս,— պատասխանեց մայրս, սրտաքանդ «ա՜խ» մը քաշելով և քնքշորեն մազերս շոյելով,— ան Հուդա՜ն էր, դավաճա՜նը, սևլեզու մատնի՜չը իր Վարդապետին, այն Խաչյալին...»։ Պիշ-պիշ ու լուռ՝ նայեցանք պահ մը իրարու...

Սև Մո՜մը... մատնի՜չը...

ooo

Տարիներ հետո, ալ պատանի խելահաս և ուսանող, գիտի պատմությունը այս սրբազան դրամին։ Սրբազնացած, այո՛,— եղերերգության լույս-դեմքով վերլուծեր էի, որքան կրնայի, հոգին Սև Մոմին։ Կետի մը վրա բևեռացուցեր էի մտածումս։ Այդ մոմի անուց պատրույգեն՝ խելահեղորեն հեղձամղձուկ և հուսահատ ձայն մըն էր լսվեր,— «Մեղա՛յ, զի մատնեցի զարիւն արդար...»։

Մբռնացած խղճին զի՞ղջը... Ալ ո՞ւր էր...

Մատնիչ արծաթը նետված էր Տաճարի հատակին վրա, երեսն ի վեր քահանայապետներուն և ծերերուն։ Բայց ընդդի պարանը՝ մատնողք՝ խեղդամահ ըրած էր ինքզ՝ մատնիչը եղկելի...

Մնացած էր միայն «Ակեղդամանն», «Արյան դյուղը»... Սև հիշատակը Սև Մոմին, սերունդե սերունդ...։

Ավելի քան յոթանասուն տարիներ անցեր էին այն օրեն ի վեր։ Ալիքը փրփրածաղիկ եկեր անցեր էր իմ գաղաթեն և իջեր հանգլեր էր մորվացս վրա։ Եվ ուստա հանկարծ մանկական այն հիշատակը կվերաշարթնի իմ հիշողությանս մեջ։

Խավարակուտ և ատղմասիգ-գուբ-ի մը խորեն «մեղքի շղթաներ»-ու մեջ զնգացող ուրու մը դուրս կացեր իր ցնորակոծ գլուխը և իր կարյա թևերուն դիվային ստվերը կպատցնեն 48 աստղերու բորը բոցերու տակ պանծացող երկրի մը վրա՝ Ազատության դրոշակիր։ Ազա՛տ ասպարեզ—կերազե—սանձարձակության և սահմանազանցության։

Եվ մունետիկը մատնիչ, «Հայ կաթողիկոսութենեն անջատված աղանդի մը հովիվը», «պետը» կպոչտա,— «Հավա՛ր, «գործոնյա» չարին։ «Էջմիածին» ոնրածի՛ն, Մայր Աթոռ՝ դավի բույնի թոր, Ամենայն Հայոց Հայրապետ՝ վայ՛ց կարապետ, աստվածակառույց Տաճար՝ «խանութ»ակ Սովետ Ռուսիո՝ ներքափանցնող Միջին Արևելքի եկեղեցիներուն», և այս՝ «նյութական օժանդակությամբն ազնորս։ Հե՛յ, աշխարհի իշխաններ, արթնցե՛ք...։

Հազա՛ր, ե՛ն, հազա՛ր վայ և եղուկ ինքի, որ «քահանայապետարար» վարձեցիր 30 արծաթի՝ իսկական գործիքը Ջարին, խավարի խորեն և դարձուցիր դայն Սև Մոմը մատնիչ՝ ժահրալեզու և անլույս...

Պիտի ունենա՞ գոնե, հաղթականի ցնորածին ցինձեն հետո, ցունցը արթնցող գիտակցության և զիղջը խղճահարության, ոչ թե վատորեն դիմելով խեղդող պարանին, այլ հուսալից՝ Միածնի Իման Ս. Սեղանին աստվածակառույց Տաճարին, ի կենդանության արժանանալով ներման մեր գորովագութ Ս՛որ՝ Հայաստանյայց Եկեղեցվո։

Մի՛ մնար, մի՛, Սև Մոմը իմ մանկության, Սև Մոմը քու և մեր Տիրոջ...։

Դ. Ե. Տ.

(Կոստանդնուպոլիս, «ՇՈՂԱԿԱԹ», պաշտոնաթերթ Ս. Խաչ դպրեվանուց Պատրիարքության հայոց Թուրքիո, 1958 թ., փետրվար, № 2—3)

ՎԵՀԱՓՇՈՒ ՎԱՆՔԻՆ Ս ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏԸՆ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

Նրկու հարյուր քառասուն տարին ի վեր, գեղաձիծաղ Վենետիկ լճակին մեջ, Իտալիոյ ամենեն հռչակավոր Ս. Ղազար հայոց վանքը, փոքրիկ կղզյակի մը մեջ, բարձրարերձ նոճիներով շրջապատված, ակնարկը դեպի արևելք կուղղեն Սեբաստացի Մենծ Մխիթարի ձեռակերան է ան։

Ամեն տարի, 10—15 հազար օտարականներ կայցելեն հայոց այս վանքը և կհիանան ծաղկաղարդ, պտղատու պարտեզներուն վրա, ինչպես թանգարանին, գրադարաններուն, հին ձեռագիրներուն վրա։

Այս վանքը նշանավոր միաբաններ տված է աղդին և գիտնական տեսուչներ Մուրատյան և Ռափայելյան բարձրագույն վարժարաններուն։ Ինչպես հնախոս Հ. Ղուկաս Ինճիճյան, Հայկազյան վիթխարի բառարանին հեղինակ Հ. Մկրտիչ Ավգերյան, Այվազովսկի Հ. Գարրիել, մեծ աստվածաբան Հ. Ավետիքյան... բանաստեղծ և աշխարհաղիր Հ. Ղևոնդ Ալիշան, նշանավոր քերթող և հնդինակ Հ. Կ. Տեր Ահարկյան և մեծ ապագա խոստացող Հ. Ներսես Տեր Ներսեսյան և դեռ շատ շատեր։

Այս հռչակավոր վանքը ունի և իր ճյուղը Վիեննայի մեջ. հո՛ն ևս, նշանավոր բանասերներու փաղանգ մը ապրած ու գործած է բանասիրական մարդին մեջ։

...Երկու տարի առաջ Ս. էջմիածնա Վեհափառ Վազգեն Ա Կաթողիկոսը, Լիբանան, Սուրիա, Եդիպտոս, Ֆրանսա և Իտալիա այցելելե ետք չկրցավ էջմիածին դառնալ առանց այցելելու Ս. Ղազարու վանքը, ուր պատվեր և կայսրներ այցելած էին։ Վեհափառը ամենաքերմ պատիվներով ընդունվեցավ, հիացումով այցելեց ամեն տեղ և միաբաններուն մեջ դիս բացակա գտնելով վանքը պատկերացնող բաց-քարտ մը առնելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»-ով Ս. Ջատիկը շնորհավորեց։ Վարդապետներու շարքին ամենեն եռանդուն իր երբեմնի աշակերտը գտավ երիտասարդ, խոստումնալից, «Բազմավեպ»-ի խմբագիր Հ. Ներսես Տեր Ներսեսյան։ Իր առաջին խոսքերուն մեջ հիշեց դիս իրրև իր «մտերիմ բարեկամը», որովհետև երբ դինքը վարդապետ օծված տեսա 1944-ին, ըսի Իրեն համարձակորեն՝ «Դուն օր մը Կաթողիկոսական Աթոռին վրա պիտի բարձրանաս»։

...Երիտասարդ Հ. Ներսես Տեր Ներսեսյան վարդապետ՝ Ս. Ղազարու «Բազմավեպ» ամսաթերթին ամենեն հայող խմբագիրը, ամենեն մերձավորն էր Վեհափառին։

...Վերջերս «Նոր կյանք»-ի մեջ տեսա, որ Երևանի Մատենադարանը Ս. Ղազարու վանքեն ստացած է շարք մը նոր դիրքեր, որոնց վերջինն է Հ. Ներսեսի անդրանիկ գիրքը (Առաքել Սյունեցիի Դրախտագիրքը), որուն Աղամգիրքը 1907-ին, Քերվածները 1913-ին հրատարակած եմ Ս. Ղազարու մեջ։ Առաքել Սյունեցին՝ Քուչակեն ետք մեր մեծ բանաստեղծն է, որուն շատ մը գրածները Ֆրանսերենի թարգմանած է Ա. Զոպանյան 1918-ին։

Հ. Ներսեսի այս հրատարակությունը հրաշալիորեն աշխատված է. Առաքել Սյունեցին՝ Գրիգոր Տաթևացիին քրոջ որդին է, ծնած 1330-ի սահմանները և ապրած 70 տարի։

Մենծ հույս ունիմ, որ այս երիտասարդ Մխիթարյանը Զամչյաններու և Ալիշաններու կարգին պիտի բազմի։

Հ. Մ. ՊՈՏՈՒՐՅԱՆ

(Նյու-Յորք, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ», 19 ապրիլի 1958 թ., № 16)



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԱՄԳԱՐՅԱՆ

(Առաջնորդական փոխանորդ
Աստրատյան թեմի)

ԷՋԵՐ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին իսկ օրերից, նրա մեծագույն ցանկություններից մեկն է եղել Մայր Աթոռը օժտել նոր տպարանով։ Վեհափառ Հայրապետի այդ ցանկությունը իրագործելու ազնիվ մտածումը ունեցավ Հրուսիայի Ամերիկայի հայոց թեմը։ Այստեղ, պր. Ե. Աղաճանյանի նախաձեռնությամբ, կազմվեց Մայր Աթոռի տպարանի հանձնաժողով, և մեր բարեպաշտ և հայրենասեր ժողովուրդը, իր սրտաբուխ նվիրներով, մեծապես օժանդակեց Ս. էջմիածնի տպարանի արշավին։ Հանգանակությունը արդեն հասել է 150 000 դոլլարի։ Գրված են Մայր Աթոռի տպարանի մեքենաները, որոնք հունիսի վերջերին սկսեցին հասնել Մայր Աթոռ, ի մեծ ուրախություն և գոհունակություն Վեհափառ Հայրապետի և միաբանության։

Օգտվելով այս երջանիկ առիթից, մեր անհուն շնորհակալությունն ենք հայտնում ամերիկահայության այս սրտագին և պատմական նվերի համար և ցանկանում ենք «էջմիածին» ամսագրի ընթերցողներին ներկայացնել էջեր Մայր Աթոռի տպարանի պատմությունից։

❊❊❊

Սիմեոն Երևանցի երջանկահիշատակ Կաթողիկոսի օրով, 1771 թվականին, Ս. էջմիածինը ունեցավ իր առաջին տպարանը, որը միաժամանակ առաջին տպարանն էր Հայաստանում։ Նախքան էջմիածնի տպարանի բացումը, Ամստերդամում, Վենետիկում, Լիվոռնոյում, Մարսելում, նույնիսկ Կոստանդնուպոլսում և այլ վայրերում Ս. էջմիածնի անունով պահվում էին տպարաններ։

Սիմեոն Երևանցին գեռևս 1759 թվականին մեծ հետաքրքրություն է ցուցաբերել Իզմիրում գործող հայկական տպարանի գոյությունն ապահովելու գործում։ Ահա թե ինչ է ասվում Իզմիրի հայկական տպարանում հրատարակված Ծննիկի ճեղծ աղանդոցս-ի հիշատակարանում. «յիշել յաղօթս մեր նարգենիս վերատեսուչն զՄիւռնիոյ զՏէր Աբրահամ աստուածիմաստ վարդապետն աստապատցի. այլ և զհոգեկից եղբայրն իւր զՏէր Սիմէոն աստուածաբան վարդապետն Երևանցիս։

Այս փաստը պերճախոս կերպով ցույց է տալիս, որ Սիմեոն Կաթողիկոսը գեռևս վարդապետական տարիներից սկսած տպագրական գործին նվիրված անձնավորություն է



ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՎԱՆՅՈՒ ՏՊԱՐԱՆԻ ԴՌԱՆ ՎՐԱՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
(Հայաստանի Պետական պատմական թանգարան)



ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՎԱՆՅՈՒ ՏՊԱՐԱՆԻ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՆԵՐԸ
(Հայաստանի Պետական պատմական թանգարան)

հանդիսացել, որպես ժամանակի առաջադեմ և լուսամիտ հոգևորականներից մեկը։

Սիմեոն Կաթողիկոսի գործունեության մեջ աչքի ընկնող տեղ է գրավում հատկապես Ս. բիբլիան տպագրական գործը պլուխ բերելու բուռն ցանկությունը։

1763 թվականին Սիմեոն Երևանցին ընտրվեց որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս։ Նա իր գործունեությամբ հանդիսանում է մեկը նկատելու նշանավոր հայրերից մեկը՝ և՛ իր ուսումնականությամբ, և՛ իր շինարարությամբ, և՛ վարչագիտությամբ։

վորներու պակասության պատճառով՝ չէր հաջողած տպարան մը հաստատել այնտեղ։ Ինչպես կիմացվի, նա Ղուկաս վարդապետին պատվիրում էր նաև բանակցել գրով Առաքելի հետ և ստացման դիմը հարմարեցնելով առնել նրանից տառերը և ուղարկել իրեն Ս. Էջմիածին։

Գոհացուցիչ պատասխան չստանալով, Սիմեոն Կաթողիկոսը փոքր ինչ հետո նորից գրում է այդ հարցի մասին Ղուկաս վարդապետին և խնդրում, որ նա հետաքրքրվի այն մյուս տպագրիչով, որ գտնվում էր Զմյուռնիայում, պայմանավորվի նրա հետ և ուղարկի Մայր Աթոռ։ Ղուկաս վարդապետը Զմյուռնիայից պատասխանում է, թե Մարկոս տպագրիչը Սաղմոս է տպում, հետո է դալու։ Երևանցու համբերությունը սպառվում է, նա խստությամբ պատվիրում է Ղուկաս վարդապետին, որ տպագրիչը գա և Սաղմոսը Մայր Աթոռում տպագրի։

Սիմեոն Կաթողիկոսը տպարանի մասին միաժամանակ գրում է Ամստերդամ՝ Հովհաննես վարդապետին, որը Ղազար Կաթողիկոսի օրով այնտեղ էր ուղարկված իբրև



«ՊՐՕՍԱՐԱՆ ԱՂՕԹԻՑ» ԳՐՔՈՒՅԿԻ ՀԻՇԵՑԱԿԱՐԱՆԸ

Ինչպես ժամանակի աննպաստ հանգամանքներին, Սիմեոնը Կաթողիկոս օծվելուց հետո 1765 թվականին արդեն մտածում է էջմիածինը տպարանով օժտելու մասին։ Պետք Հնդկաստան կատարած իր նվիրակության ժամանակ, որպես սարկավագ, նա համոզում էր Հնդկահայ Գրիգոր աղա Խոջանյանին՝ Մայր Աթոռին արված նվեղեցյունն մի կտակով անմահացնել իր անունը։

Սիմեոն Երևանցին տպարանի հարցով գրում էր Զմյուռնիայի նվիրակ և առաջնորդ Գրիգոր Դարդապետին. «Համստերդամ ապնիվ և թանիր փորագրությամբ հայկական տպագրական տառեր կգտնվին, զորս Առարել անունով մեկը շինել տվեր էր, և գործանիայում, պայմանավորվի նրա հետ և ուղարկի Մայր Աթոռ։ Ղուկաս վարդապետը Զմյուռնիայից պատասխանում է, թե Մարկոս տպագրիչը Սաղմոս է տպում, հետո է գալու։ Երևանցու համբերությունը սպառվում է, նա խստությամբ պատվիրում է Ղուկաս վարդապետին, որ տպագրիչը գա և Սաղմոսը Մայր Աթոռում տպագրի։

Սիմեոն Կաթողիկոսը տպարանի մասին միաժամանակ գրում է Ամստերդամ՝ Հովհաննես վարդապետին, որը Ղազար Կաթողիկոսի օրով այնտեղ էր ուղարկված իբրև

1 Հ. Գ. Ջորբենանյան, «Պատմություն հայկական տպագրության», Վենետիկ, 1895 թ., էջ 182։

եկեղեցու տեսուչ և հովիվ. «Զի զԱռաքելի զիրն, կամ անդ տպարան հաստատել տալ և կամ առնուլ ի ի Ս. Աթոռն յղել. իսկ եթէ Առաքելն չտայցէ, և թէ անդ տպարան իցեն հաստատելոց կամ ոչ, նոյն փորագրողին, զձեռն մի գիր վասն Ս. Աթոռոյն փորեցուցեալ յղեսցէ»[2]։

Սիմեոն Երևանցին նմանապես այս հարցի շուրջ գրեց Առաքելին, առաջարկելով Ղուկաս վարդապետից ստանալ կարևոր ծախսերը, և «վասն Մարկոսին ևս ցանալ, և ի կողմն հատանել զբաններ։ Այնուհետև մահտեսի Մովսեսը գրում է Կոստանդնուպոլսից. «վասն Զմիտնուլ տպագրիչ Մարկոսին, թէ գրեալ եմք զհնարս ինչ յղել յայդր, որին և Սիմեոն գրեց, որ շտապեն իրագործել այն»[3]։

Չնայած Սիմեոն Կաթողիկոսի եռանդուն գործունեության, տարին բոլորվում էր ապարդյուն, մանավանդ որ Ամստերդամի հայերը Առաքելի գրերի վրա արդեն էին դրել. «Ասոր պատճառը կենթադրենք գտնել ձեռքնիս եղած ազգային ճանապարհորդի մը գրության մեջ, որ նույն ժամանակներն Ամստերդամ էր։ Այդ քաղաք՝ իր երբեմն ունեցած կարևորությունն ալ կորուսեր էր մերազգյաց համար, և Հովհաննես վարդապետին հետ՝ միայն քանի մը անձինք մնացած էին»[4]։

Ամստերդամի այդ մի բուռ հայությունը արդեն հանդիսացավ տպարանի էջմիածին առաքմանը։ Երևանցին այս անգամ իր ուշադրությունը սևեռեց այլ կողմ։

Վենետիկի տպարանների պատմության մեջ նշանավոր է Սարգիս վարդապետ կամ եպիսկոպոս Սարաֆյանը, որը Արևելքից փոխադրվել էր և հրատարակում էր հայերեն գրքեր, ձուլել տալով հատուկ տառեր։ Նա քիչ ժամանակ անց Վենետիկից տեղափոխվել էր Կոստանդնուպոլիս։

Այդ Սարգիս վարդապետը էջմիածնի նախկին միաբան էր, Վենետիկում հրատարակել էր «էֆիմերոս» գիրքը և ապա այլևս չէր զբաղվում տպագրական գործերով։

Սիմեոն Կաթողիկոսը մի սիրալիր նամակ գրեց Սարգիս վարդապետին, առաջարկելով, որ կա՛մ գրամով և կա՛մ ի հիշատակ իր հոգու, նոր տառերը Ս. Էջմիածնին նվիրի. «Եւ թէ կամիցի զայս որով կերպիւ և իցէ, ծանուցէ մերայնոցն որոց և կամիցի ինքն

«ՊԱՐՏԱՎԱՃԱՌ»-Ի ՑԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

զմիտս իւր. զի գրեսցեն ինքեան և կամ ինքն խօսեսցի դրով, և որպէս կամիցիս ասէ և ինձ է հաճելիւ»[5]։

Սիմեոն Երևանցին միաժամանակ մի թուղթ ևս գրեց տեղի՝ Մայր Աթոռի գործակալ մահտեսի Մովսեսին, թե երբ Սարգիս վարդապետը այդ հարցով դիմի իրեն՝ թող խոսի նրա հետ դնի մասին և իրեն շուտով տեղեկացնի։ Տիպական տպագրիչը, կամենալով այդ տառերը, երեք քիսա դին էր առաջարկել, սակայն Սարգիս վարդապետը պահանջել էր 1 800 դրուշ։ Կաթողիկոսը գրել էր գործակալին՝ աշխատել այդ գնից պակաս փողով գնել, իսկ հակառակ դեպքում ավելի բարձր չվճարել։ Նույն թվականին Կաթողիկոսը մի թուղթ ևս գրել էր Ամստերդամ, ցուղայեցի Հոջա Առաքելին, կրկնելով իր խնդիրը տառերի, պատկերների, ծաղկագրերի

2 Հ. Գ. Ջորբենեանցյան, «Պատմություն հայկական տպագրության», էջ 183։— Տե՛ս նաև «Դիվան հայոց պատմության», գիրք Գ, էջ ՃԾԸ։

3 «Դիվան հայոց պատմության», գիրք Գ, էջ ՃԾԸ։

4 Հ. Գ. Ջորբենեանցյան, «Պատմություն հայկական տպագրության», էջ 185։

5 «Դիվան հայոց պատմության», գիրք Գ, էջ ՃԾԹ։



ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑՈՒ ՏՈՆԱԳՈՒՅՑԻ ՏԻՏՂՈՍԱԳԻՐԸ

և տպագրական մյուս պարագաների մասին։ Նա մի թուղթ ևս գրեց Զմյուռնիա Ղուկաս վարդապետին, որ Մարկոս տպագրիչի հետ միասին Մայր Աթոռ գան։

Սիմեոն Կաթողիկոսի այս բոլոր ջանքերը իզուր են անցնում։ Սակայն նա չի հուսահատվում։ 12 երկար տարիների տքնությունից և աշխատանքներից հետո, Սիմեոն Կաթողիկոսին հաջողվում է տպարան բաց անել Էջմիածնում 1771 թվականին, հնդկաստանցի բարերար Գրիգոր Միքայելյան-Խոջայանյան Ջաքիկենց թուղթեցու ծախքով։ Այդ առթիվ, Սիմեոն Կաթողիկոսի կենդանության օրով տպված գրքերի հիշատակարաններում և թե՛ նորաբաց տպարանի դռան վրա արձանագրված էր այդ պատմական դեպքը. «Աստուծով հաստատեցաւ տպագրատունս նոր ի նորոյ ի Սուրբ Աթոռս Էջմիածին ամենայն պարագայիւքն, հոգաբարձութեամբ Տեառն Սիմէոնի Սրբազան Կաթողիկոսին Երևանցւոյ արդեամբ Ջուղայեցի ի Հինդ բնակեալ բարեպաշտան Գրիգոր աղային Խոջաջանեան, որ մականուամբ Ջաքիկենց. ի յիշատակ իւրեան, և իւր ի Քրիստոս հանգուցեալ ծնողացն Միքայէլին և Մամախաթունին, իւր կենակից Մատինային և վաղաթառամ Միքայէլ որդւոյն, և քրոջն Անամարիային և Զիպիտային, Հարեղբարցն Եղիազարին, Սաֆարին և Աղէքսանդրին, պապուն Գրիգորին և կենակից Թագուհւոյն, և հօրաքեռն Զիժաւատային և մեծ պապ Յակոբջանին, և հարեղբօր դստերացն՝ Գէնջատային և Գիւլնաբաթին և այլ ամենայն հին և նոր ննջեցելոցն նորին։ Այսու պայմանաւ՝ զի ի տարին Բ անգամ ի տանի Լուսաւորչին և Հրեշտակապետացն ի Սուրբ Աթոռոջս պատարագ մատչիցի հանդիսաւորութեամբ, յիշելով զնոսա. որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի. ամէն. Թ. ՌՄԻՆ»։

Այդ Գրիգոր Միքայելյան Խոջաջանյանի նվիրատվությամբ վերջապես իրագործվում է Սիմեոն Կայծողիկոսի դեռևս սարկավագ եղած ժամանակից հետապնդած մտասևեռումը՝ Մայր Աթոռում տպարան ունենալու ցանկությունը։

«ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ ԿԱՐԳԱՒՈՐԱՑ» ԳՐՔԻ ՏԻՏՂՈՍԱԳԻՐԸ

---

8 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Գ, էջ ՃԿ—ՃԿԱ։

1774 թվականին տպված Տոնացույցի հիշատակարանում հիշվում են էջմիածնեցի Հարություն անունով փորագրիչը և քանդակողը, որը «նախկին հեղինակ եղև առ փորագրութիւն ի պողպատոյ»[1]։

Նորարաց տպարանը գտնվում են Կաթողիկոսի ձմեռվա կացարանի արևմտյան ծայրին կից գտնված շինության մեջ, որի ճակատին դրվում է վերոհիշյալ արձանագրությունը։

Տպարանը բացվելուց հետո Զմյուռնիայից գալիս է Մարկոս տպագրիչը, որը տպարանը կարգի է դնում, սակայն դժբախտաբար շուտով մահանում է։

Ս. էջմիածնի տպարանի երախայրիքն եղավ «Զբօսարան ճոգևոր» աղոթագիրքը, որ երգերի և տաղերի ժողովածու է։

Այդ գրքույկը կազմել էր Սիմեոն Կաթողիկոսը։ 60 էջանոց այդ աղոթքների շարքից է «Ամի Աստուած հարցն մերոց»-ը, որը երգվում է «Տէր Ողորմեա»-յի հետ, պատարագի ժամանակ։

Տպարանի հիմնումով հարցը չէր փակվում. կային այլ դժվարություններ, չկային բավարար տառեր, չկար թուղթ։ Հատկապես նոր տառերի ձուլումը և թղթի հարցը մեծ դժվարություն էին հարուցում։ Թղթի ստացումը Եվրոպայից կապված էր մեծ դժվարությունների հետ և հասնում էր մեծ ուշացումով։ Կազմակերպչական ջիղ ունեցող Սիմեոն Կաթողիկոսը հաղթահարեց նաև այդ դժվարությունները՝ հիմնելով թղթի գործարան Ս. էջմիածնում։

Ս. էջմիածնի թղթի գործարանը.— 1774 թվականին, էջմիածնի այժմյան լճի մոտ, Սիմեոն Երևանցին կառուցել է տալիս մի մեծ շենք՝ թղթի գործարանը։ Ինչպես տպարանը, նույնպես և թղթի գործարանը կառուցվեց նույն բարեբարի՝ Մադրասի Զաքիկենց Գրիգոր աղայի նվիրատվությամբ։ Այդ Աթոռի բարեբարը թղթաշինության վարպետներ ևս ուղարկեց Ս. էջմիածին, որոնք Փարիզից Կոստանդնուպոլիս եկած վարպետներ էին՝ մյուսյու Բեյսոն և մյուսյու Ռիսիոն։ Մեծ բարեբարը վարպետների հետ պայմանավորվել էր, որ նրանք աշակերտներին սովորեցնի թղթաշինության արհեստը։ Այդ բանի համար նա վարպետներին 14 000 ռուբլի է խոստանում, բացի ընծաներից։ Վարպետների հետ էջմիածին է ժամանում նաև մի կաթոլիկ թարգման։ Թուղթ շինող վարպետները ուզում են դրամը շորթել և ծլկվել, սակայն այդ նրանց չի հաջողվում։ Նրանք այս անգամ ձգձգում են աշակերտներին իրենց արհեստը սովորեցնելը։ Անցնում է ժամանակ, ու նրանք ոչ թուղթ են պատրաստում, և ոչ էլ աշակերտներ։ Ապա ճարահատ խոստովանում են, թե իրենք հրաժարվում են իրենց արհեստը ուրիշներին սովորեցնելուց։ Սիմեոն Կաթողիկոսի «ֆալախկա»-յով սպառնալը և սառցատուն բանտարկելը օգնում է գործին և 1775 թվականին արդեն թուղթ էր արտադրվում Ս. էջմիածնում։ Սիմեոն Կաթողիկոսի թղթի գործարանը հայտնի էր ժողովրդի մեջ մինչև ԺԹ դարի վերջը «Քյաղզիսանա» («Թղթի գործարան») անունով։ Թղթի գործարանի շենքից սկսած մինչև Գայանեի վանքը, մինչև վանքի հարավային դարբասը պտղատու ծառերով լի պարտեզ է եղել, որտեղ պատրաստելիս են եղել թղթի զանգվածը։ Հիմա այդ պարտեզը չկա, սակայն «Քյաղզիսանա»-ն հիշվում է Կարապետ աշուղի մի ոտանավորի մեջ[8]։

Սիմեոն Կաթողիկոսը նոր պատրաստված թղթի վրա տպել տվեց իր «Պատավճառ» աշխատությունը, որից ուղարկեց մեծ բարեբարին՝ Գրիգոր աղային։ «Պատավճառ»-ի տպագրական ծախսերը եղել են 700—800 թուման, որը հոգացել է բարեբար Գրիգոր աղան։ Բարեբարը այնքան գոհ էր մնացել այդ հաջողությունից, որ ի նշան գոհունակության և ուրախության, նա Սիմեոն Կաթո-

ԷՋՄԻԱԾՆԻ ԹՂԹԱԳՈՐԾԱՐԱՆԻ ԹՂԹԻ ԴՐՈՇՄԸ

1 «Տօնացոյց», էջմիածին, 1774 թ., հիշատակարան։

8 «Հայ աշուղներ», հրատ. օր. Մ. Ախվերդյանի, Թիֆլիս, 1903 թ., էջ 85։

զիկոսին ուղարկում է 400 զույգ ընտիր հախճապակյա ըմպանակներ և այլ ա.որ-ներ, որոնց վրա ոսկեգրով գրած էր հետևյալը. «Ի վայելումն Տեառն Սիմէոնի Սըբազան կաթողիկոսին Ամենայն Հայոց։ Ի ՌՄԻՒ թ.»։

Կաթոլիկ ըղձաշինարարները այնպես էլ ոչինչ չսովորեցրին էջմիածնի տղաներին։ Բայց մերոնք ինքնուրույն կերպով ավելի լայն թուղթ պատրաստելու կերպը գտան։ Կաթողիկոսը խոստացավ ըղձատան և տպարանի շինատին գրել Գրիգոր աղայի հիշատակագիրը։ Գրիգոր աղան 5 հատ անգլերեն լեզվով մուրհակներ ուղարկեց՝ թարգմանելու տալով տպելու համար։

Էջմիածնի ըղձի գործարանում պատրաստված թուղթը կրում էր հետևյալ չրանկարը դրոշմը. մի կողմում՝ «Էջմիածին» բառի փակագիրը և «Ս. Կ.» (Սիմեոն Կաթողիկոս) սկզբնատառերը, մյուս կողմում՝ «ՌՄԻՒ» (1776) և «ԳՄ» տառերը, որոնք գործարանի ծախքերն հոգացող բարերար Գրիգոր աղա Մէջայելյանի անվան սկզբնատառերն էին։

Սիմեոն Կաթողիկոսը 1774 թվականին տպեց իր պատրաստած «Տօնացոյց»-ը, որ իր անունով էլ կոչվում է Սիմեոնյան Տոնացույց։ Այդ Տոնացույցը ինքն էր կարգավորել և երկու հատորի բաժանել։ Վերջարանի մեջ հիշվում է, թե էջմիածնի տպարանի համար ինչ նեղություններ է կրել և թե ինչպես հետզհետե զարգանում էր ու ծաղկում տպագրության արվեստը Ս. Էջմիածնի տպարանում. «Ահա հինգ ամ է, յորս աշխատիմք և տքնիմք, զի զարհեստս դայս ի ձեռն ըմբռնուց և հասատեսցուց ի Ս. Սբոռոցս (որում իսկ վայել է զայսպիսի հոգեպարար և օգտաշատ զեկորայս և կերակուրս հնարել և բաշխել իրաձին որդւոցդ), զոր և հասատեսցաք իսկ Աստուծով»։

«Տոնացույցի հրատարակությունը յուր ժամանակին մեծ ազդակ հանեց Ազգի մեջ։ Մեր եկեղեցվո Տոնացույցը յուր սկիզբն առնելով Ս. Գրիգոր Լուսավորչից, այնուհետև մինչև անցյալ դարն քանի մի անգամ ենթարկվել է նշանավոր կամ աննշան փոփոխությանց, որոնց գլխավոր պատճառը եղել է տոների կատարման ժամանակի անկանոն հայտնությունը, որով եկեղեցական տոները հետ ու առաջ էին շարժվում»[10]։

Սիմեոն Կաթողիկոսի Տոնացույցը կրոնական պատկերներով, մաքուր տպագրություն էր, 16 սմ. երկարությամբ, 364 էջ։ Տպագրական աշխատանքը կատարել են միարանները, սկսած դպիրներից մինչև ինքը Սիմեոն բազմաշխատ Հայրապետը։

Տոնացույցի հրատարակությունը ուներ նաև կրոնական-ազգային նպատակ։ Դրանով պայքար էր տարվում Երևանում բույն դրած կաթոլիկության դեմ և մերժվում էր գործածությունը նրանց տոնացույցների, որտեղ աղավաղվել էին մեր տոները։

Տոնացույցի մեջ խիստ կերպով դատապարտվում է կաթոլիկ դուրը։ Կաթոլիկները 1786 թվականի սեպտեմբերի 3-ին անդեքսո-ի (արգելքի) տակ են դնում Սիմեոնյան Տոնացույցը Կոստանդնուպոլսում։

Շնորհիվ Սիմեոն Կաթողիկոսի եռանդուն ջանքերի, Ս. Էջմիածնի տպարանը զարգանում էր և ընդլայնում իր գործունեության շրջանակը, լույս ընծայելով զանազան գրքեր և օրացույցներ։ «Զրօսարան»-ից հետո տպագրվում են «Տաղարան», 1777-ին՝ Վարդ ոսուման հայրապետաց, եպիսկոպոսաց և Խաչանայից», «Մաշտոց»-ը, որի հիշատակարանում ասված է. «Զոր ինչ Մաշտոցէն մերմէ առեալ, սրբագրեալ և կարգաւորեալ Տեառն Սիմէօնի գերերշանիկ և գիտնական Կաթողիկոսի Ամենայն Հայոց, ետ տպագրել մեծաւ զգուշութեամբ ինքն իսկ լինելով վերակացու։ Սուրբ Գիրքն ունի խորհրդավոր փայտափոր պատկերները Մասիս սարի և Հայրապետական Աթոռի։

Սիմեոն Կաթողիկոսի տպարանում գործել են 2 հատ ձեռքի մամուլներ։ Հայտնի չէ, թե մինչև ե՞րբ այդ մամուլներով են աշխատել։ Հետագայում այդ մամուլները կորել են անփութության պատճառով։ 1910 թվականին դրանք գտել է Ս. Էջմիածնի շնորհալի միաբան Արտակ եպիսկոպոս Սմբատյանը, որն այդ մասին խոսում է իր անտիպ աշխատության մեջ[11]։ Այդ մամուլները այժմ դտնվում են Երևանի Պետական պատմական թանգարանում։

Սիմեոն Կաթողիկոսի տպարանի հոգին է եղել Իսահակ արքեպիսկոպոս Գեղամյանը, որի անունը շատ տեղերում հիշատակվում է երախտագիտությամբ։

Սիմեոն Կաթողիկոսը վախճանվեց 1780 թվականին։ Այս գործունյա և աղգօգուտ Հայրապետի մարմինը ամփոփվել է Ս. Գայանեի վանքի արևմտյան պատի տակ, մարմարյա տապանաքարով։

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի, ամէն»։

---

9 «Տոնացոյց». Ս. Էջմիածին, 1906 թ., էջ 395։

10 «Դիտան հայոց պատմութեան», գիրք Գ, էջ 314։

11 Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի, թղթապանակ 84, վավերագիր 1։

(Շարունակելի)

Ա. ՏԻՐԱՅԱՆ

(Դոցենտ, Գիտությունների Հոգևոր Կոմիտեի անդամ)

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ ԺԳ—ԺԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Ազգերի զանգվածային արտագաղթն ունենում է ընդհանրապես երկու հիմնական պատճառ՝ քաղաքական և տնտեսական։ Սակայն հայ ժողովրդի արտագաղթերը բացատրվում են գլխավորապես քաղաքական պատճառներով։ Դեռևս Ժ դարի երկրորդ կեսից սկսած և մանավանդ ԺԱ դարի առաջին կեսից Հայաստանում ստեղծված քաղաքական հեղհեղուկ պայմանների և մանավանդ Բյուզանդական կայսրության նվաճողական ոտնձգությունների հետևանքով՝ զանգվածային մի աննախընթաց արտագաղթ է սկսվում Հայաստանից դեպի Փոքր Ասիա (գլխավորապես դեպի Կապադովկիա), Միջագետք և Կիլիկիա։

Այս արտագաղթի մանրամասնությունները դուրս են մնում մեր նյութից։

ԺԱ դարի վերջին քառորդին Կիլիկիայում, Տավրոսյան լեռների բարձունքների վրա, հիմնվում է հայկական մի փոքրիկ պետություն, որի իշխանության ամրացման և երկրի ընդարձակման գործում փոքր դեր չեն կատարում վերոհիշյալ դարերում Հայաստանից դեպի Փոքր Ասիա և Հյուսիսային Միջագետք գաղթած հայկական զանգվածները, որոնց մի մասը Կիլիկիա անցնելով, ուժեղացնում է հայ տարրը այս նորաստեղծ հայկական պետության մեջ։ Վերջինս լրիվ 100 տարվա համառ պայքարներից հետո ընդարձակվելով՝ հասնում է Միջերկրականի ափերը, վերջնականապես գրավելով Դաշտային Կիլիկիան և կազմելով հայկական մի անկախ պետություն։

Իր ծովային ու ցամաքային աշխարհագրական բարենպաստ դիրքով, ինչպես նաև Լևոն Բ-ի և նրա հաջորդների վարած տնտեսական քաղաքականության հետևանքով, Հայկական Կիլիկյան պետությունը ԺԳ դարի երկրորդ կեսից մինչև ԺԴ դարի կեսերը հասնում է տնտեսական աննախընթաց բարգավաճման, և այս՝ առաջին հերթին շնորհիվ իր միջազգային առևտրին, որի հանգուցակետն էր հանդիսանում Կիլիկիան։

Եվ ահա, այս երկրի իրադարձությունները ու մանավանդ նրա տնտեսական գործառնությունները բազմաթիվ երկրների ու ժողովուրդների հետ ուսումնասիրողը չի կարող չհասնել մի կետի[1], երբ նա ստիպված կլինի իրեն հարց տալ այն մասին՝, որ եթե Հայկական Կիլիկիան իր բազմաթիվ քաղաքներում ընդունել է օտար ժողովուրդների բազմություններ, սրանց տալով առևտրական ու արհեստագործական բազում արտոնություն-

[1] Այս մասին մենք ունենք ընդարձակ մի անտիպ աշխատություն՝ «Հայկական Կիլիկիայի տնտեսական հարաբերությունները Ջենովայի և Վենետիկի ռեսպուբլիկաների հետ ԺԳ—ԺԴ դարերում» վերնագրով։

[2] Բացի Հ. Ղ. Ալիշանից, այս հարցադրությամբ չեն զբաղվել Հայկական Կիլիկիայի մասին արժեքավոր ուսումնասիրություններ գրած հեղինակներից ոչ մեկը։

ներ, ապա ինչպե՞ս կարող էր պատահել, որ Հայ ձեռներից առևտրականներ ու արհեստավորներ չհաստատվեին, օրինակ, Իտալիայի այլևայլ քաղաքներում (այս հոդվածում մենք ի նկատի ունենք միայն այս երկիրը), զբաղվելու համար դեպի Եգիպտոս Մայրենի երկիրը մեկնող և այնտեղից եկող առևտրով, ինչպես նաև արհեստներով։

Հայկական Կիլիկիայի մեր ժողովրդի առևտրական ձեռներեցության մի այլ քայլը մենք նույն ժամանակաշրջանում մենք վերցնենք անպայմանորեն այս հանգեսի նախկին համարներից մեկում, ցույց տալով, որ Կիլիկիայի հայ ժողովուրդն էլ ունեցել է իր առևտրական նավատորմիղը, որով նա մասնակցել է իր ժամանակի միջազգային ծովային առևտրին։

Հետևաբար, երբ Իտալիայում հաստատված հայկական գաղթականությունների համար, սկսած ԺԳ—ԺԴ դարերի համար, ապա այդ ինքնին վերաբերում է Կիլիկյան Հայկական պետությունից մեկնած և Իտալիայում հաստատված հայկական գաղթականներին, որոնց գոյության մասին պաշտոնական տվյալների պակասության և լուսաբանության պատճառով հանելու խնդիրը առաջին հերթին նույնպես պարտական ենք Հ. Ղ. Ալիշանի անխոնջ ջանասիրությանը։ Հ. Ղ. Ալիշանը իր «Սիսուան», «Սիսական», ինչպես նաև «Հայվենիք» աշխատություններում հավաքել է Իտալիայում հաստատված հայկական գաղթականությունների ու եկեղեցիների մասին որոշ նյութեր։ Նա այդ գաղթականությունների հաստատումը վերագրում է քաղաքական և տնտեսական պատճառների։

Հայկական Կիլիկիայից արտագաղթի քաղաքական պատճառներ կային անշուշտ, դեռևս Լևոն Բ-ի անմիջական հաջորդների ժամանակներից։ Այսպես՝ Հեթում Ա-ի թագավորության 44 տարիների (1226—1270 թ. թ.) վերջին երկու տասնամյակներում Բ-կոնիայի սուլթանության և դլխավորապես Եգիպտոսի մամլուքների անընդհատ արշավանքները Հայկական Կիլիկիան հաճախ վերածում էին պատերազմի դաշտի։ Երկրին սպառնացող վտանգի առաջ Հեթում Ա-ը անհրաժեշտ դատավ փոխել Հայկական Կիլիկիայի արտաքին քաղաքականությունը։ Նա մինչև Կարակորում գնաց և ներկայացավ թաթարների Մանգու խանին, կնքեց սրա հետ դաշնագիր երկու կողմերի ընդհանուր թշնամի հանդիսացող մամլուքների դեմ։ Հեթումի հաջորդի՝ Լևոն Գ-ի իշխանության տարիներն էլ (1270—1289 թ. թ.) անցան ներքին ու արտաքին կռիվներով։ Այս թագավորի օրով Հայկական Կիլիկիան, մամլուքների հետ կնքված հաշտության պայմանագրի համաձայն, հանձնառու է լինում, բացի նյութական այլ հատուցումներից, դրամական մեծ տուգանք վճարել տասը տարի շարունակ։ Լևոն Գ-ի հաջորդի՝ Հեթում Բ-ի ժամանակ (1289—1305 թ. թ.) երկրի քաղաքական վատթար դրությունն ստիպում է նրան իր պապի՝ Հեթում Ա-ի քաղաքական ուղղությունը բռնել, և նա ձեռք է բերում, թաթարների օգնությամբ, որոշ հաջողություններ մամլուքների դեմ։ Սրա հաջորդներից Լևոն Դ և Լևոն Ե նույնիսկ իրենց բնական մահով չեն մեռնում, երկրի քաղաքական անբարենպաստ պայմանների բերումով, երբ միաժամանակ Հայկական Կիլիկիան կորցնում է Այասը, որն ստիպված էր Լևոն Ե-ը զիջել մամլուքներին, իբրև հետևանք իր զինվորական պարտության։ Իսկ Այասի կորուստը սկիզբն էր հայկական Կիլիկիայի պետական քաղաքական անկախության վախճանի, որը շատ էլ հեռու չէր (1375 թ.)։

Հայկական Կիլիկիայի քաղաքական այս անբարենպաստ, անկայուն, նույնիսկ վտանգավոր պայմանները հանդիսացան պատճառները արտագաղթի Կիլիկիայից դեպի Իտալիա։

Մենք պատճառներ ունենք, սակայն, ենթադրելու, որ հայկական գաղթականությունների Իտալիայի ավելի քան 30 քաղաքներում հաստատման գլխավոր շարժառիթը պետք է լինի տնտեսական նպատակների հետապնդումը։ Որովհետև, հակառակ Հայկական Կիլիկիայի պետության ռազմա-քաղաքական իսկապես խիստ հեղհեղուկ պայմաններին, այդ երկրում նույն ժամանակներում զարգացել էր տնտեսական այնպիսի բազմատեսակ ու բազմահարուստ մի կյանք, որի ճյուղավորումներն անցել էին այս փոքրիկ երկրի սահմաններից դուրս, դեպի շատ հեռուները, և առաջին հերթին՝ դեպի Իտալիա։

Իտալիայում ունեցել ենք հոծ գաղթականություն։ Հ. Ղ. Ալիշանն իր «Սիսուան»-ում (էջ 372) շուրջ 30 քաղաքներ է թվարկում Իտալիայում, որտեղ եղել են հայկական եկեղեցիներ, որոնց մեջ արարողությունները կատարվել են երկար ժամանակով հայ ազգային-եկեղեցական ծեսով ու լեզվով՝ «Բանալի ազգային ծիսիւ և լեզուաւ,— ինչպես ասում է «Սիսուան»-ի հեղինակը»։ Բացի եկեղեցիներից, Իտալիայում հաստատված հայերն ունեցել են նաև իրենց «հոգեւորական»-ները, «հայ տուն»-երը, որոնք մասամբ եղել են միաժամանակ աղոթատուներ.

3 Տե՛ս այս մասին մեր «Կիլիկյան Հայկական պետության սեփական նավատորմիղ ունենալու հարցի շուրջը» հոդվածը, «Էջմիածին», 1957 թ., № 9։

4 Հ. Ղ. Ալիշան, «Սիսական», Վենետիկ, 1893, էջ 456։— Տե՛ս նաև Մեսրոպ վրդ. Ոսկերչյան, «Պատմութիւն հայոց գաղթականութեան և շինութեան եկեղեցւոց հայոց», Վենետիկ, 1891 թ., էջ 51։

նրանք ունեցել են մինչև իսկ վանքեր։ Եղել են նույնիսկ քաղաքներ, ինչպես օրինակ Հռոմը, Վենետիկը, Բոլոնիան, որտեղ հայկական եկեղեցիների թիվը եղել է երկու կամ երեք[5]։

Ամենից առաջ մեր ուշադրությունը կենտրոնանում է այդ եկեղեցիների հիմնադրության թվականների վրա. դրանք հիմնվել են 1240—1372 տարիներին, այսինքն Հայկական Կիլիկիայի արտաքին առևտրի զարգացման և Այասի ամենածաղկած ժամանակաշրջանում։ Հայկական Կիլիկիայի արտաքին առևտրի անխախտ ընթացքը ընդարձակումը գրլխավորապես Իտալիայում՝ պայմանավորվել է այս երկրի բազմաթիվ քաղաքներում հայ առևտրականների և արհեստավորների հաստատումով, որոնք և ժամանակի ընթացքում շինել են բազմաթիվ եկեղեցիներ, կազմակերպվելով իբրև հայ համայնքներ։

Իտալիայում հաստատված հայ համայնքներից համեմատաբար ավելի Վենետիկի հայերի մասին է, որ Ալիշանը տալիս է մի շարք տեղեկություններ, որոնք ամփոփված են ի մասնավորի նրա «Հայ-Վենետ»-ում։ Հայերը ԺԳ դարի կեսերից Վենետիկում ունեցել են «Հայոց տուն», որը մինչև այսօր (1896 թ.) կոչվում է «Casa degli Armeni» արտաքին փողոցը՝ «Calla degli Armeni», իսկ մերձակա կամուրջը՝ պատմական գրքերում՝ «Pons Armenlorum seu Feralium»։ «Հայ տուն»-ը նշանակում է հյուրանոց, իջևան, հավաքատեղի, բայց նաև այն ծառայել է, գոնե մի մասով, իբրև եկեղեցի կամ աղոթատուն։ Վենետիկում, Աբբաստիան Միանի անունով մի անձ 1253 թվականին իր տունը կտակում է հայոց. այդ տանը արդեն հայեր են բնակվելիս եղել։ Այս կտակի մեջ ասված է. «Տունն, ուր կենան հայք, կ'ուզենք որ մշտնջենաբար իրենց բնակարանն ըլլայ»։ Մոտավորապես այս տարիներում Վենետիկում մահանում է Ծերունի մի հայ, որը մի որոշ գումար է կտակում «Հայոց տան» պահպանման համար[6]։ Այս «Հայոց տուն»-ը սակայն մինչև 1434 թվականը ծառայել է նաև իբրև հայոց եկեղեցի կամ աղոթատուն, քանի որ այդ թվականին գրված մի հիշատակարանում ասված է. «Ես Գորգա կու տամ պ. Յակոբին դայս Մեսայս, որ է պատարագատեղ։ Ով որ գայ ի Վինեժ, որ կամի պատարագ առնել, նա առնու և պատարագ առնէ ի Հայ տուն»[7]։ Այնուհետև՝ Արմենա կամ Մարիամ անունով մի հայուհի 1344 թվականին Վենետիկում թողնում է մի կտակ, որին կտակակատարներ է նշանակում Վենետիկում ապրող 8—10 հայերի։ Նա իր կտակում մի որոշ գումար է թողնում նաև հայոց արքեպիսկոպոսին։ Ըստ Ալիշանի, այս հայոց արքեպիսկոպոսը նստում էր Վենետիկում կամ Իտալիայի այլ քաղաքներից մեկում, որտեղ հայերը եկեղեցիներ ունեին[8]։ Վենետիկում եղել է ու ապրել Թովմաս անունով մի հայ եպիսկոպոս, որն այս քաղաքից Կիլիկիայի Կոստանդին կաթողիկոսին (ըստ Ալիշանի՝ 1374—1381-ին կաթողիկոս եղած[9]), դրություն է ուղարկել։ Ուստի, Ալիշանը ենթադրում է, որ այս Թովմաս եպիսկոպոսը վերոհիշյալ Մարիամի կտակում հիշված հայոց արքեպիսկոպոսի հաջորդը եղած պետք է լինի[10]։ Վենետիկում հիմնվում է հայոց երկու եկեղեցի, մին՝ 1348 թվականին Ս. Հովհաննես Մկրտչի անունով, մյուսը՝ 1434-ին՝ Ս. Խաչ անունով[11]։ Եվ, վերջապես, 1343 թվականը կրող մի հաստատ վկայության համաձայն, որ հնուցը հայկական գերեզմանատուն է եղել Վենետիկում[12], ինչ որ իբրև հավաստի ցուցմունք կարելի է համարել Վենետիկում հաստատված հայերի որոշ թվի մասին։ Բայց ավելին գա։ Ալիշանը բերում է հետևյալ նշանակալից փաստը Վենետիկում հաստատված հայկական հոծ բազմության մասին. նա Վենետիկի եկեղեցիների մեջ հետաքրքրող ժամանակաշրջանի մահացուցակներում հանդիպել է հազարից ավելի հայ անունների, բուն Վենետիկում, կղզիներում և մերձակա ափերում[13]։ Հեղինակի այս հայտնաբերումը խիստ կարևոր է դառնում Իտալիայի հայկական գաղութների հարցում այն պատճառով, որ մյուս բազմաթիվ քաղաքների հայերի մասին գրեթե ոչ մի տեղեկություն դեռ մինչև այսօր չի հայտնաբերված։ Այս պետք է բացատրել ամենից առաջ նրանով, որ այդ քաղաքների արխիվային ուսումնասիրություններ այս ուղղությամբ դեռ չեն կատարվել։

Մենք վերևում հիշատակեցինք Թովմաս անունով մի հայ եպիսկոպոսի, որն ապրել է, ըստ Ալիշանի, Վենետիկում 1370-ական թվականներին։ Այս եպիսկոպոսից շուրջ 60 տարի առաջ Վենետիկում հիշատակվում է մի այլ Թովմաս (Թումաս) եպիսկոպոս, որը

5 Հ. Ղ. Ալիշան «Հայ-Վենետ», Վենետիկ, 1896 թ., էջ 143։

6 Նույն տեղում, էջ 147։

7 Նույն տեղում, էջ 180—181։

8 Նույն տեղում, էջ 143։

9 Ալիշանը շփոթություն մեջ է ընկել, այս թվականները վերագրելով Կոստանդին կաթողիկոսին։ Այդ թվականին կաթողիկոս էր ո՛չ թե Կոստանդինը, այլ Գրիգոր Ա Ապիրատը, ինչպես այդ ցույց է տալիս Օրմանյանը իր «Ազգապատում»-ում, Բ մաս, Կոստանդնուպոլիս, 1914 թ., էջ 1937, 1943 և 1953։

10 Հ. Ղ. Ալիշան. Նույն տեղում, էջ 157—181։

11 Հ. Ղ. Ալիշան. «Սիսուանա», Վենետիկ, 1885 թ., էջ 372։

12 Հ. Ղ. Ալիշան. «Հայ-Վենետ», էջ 153։

13 Նույն տեղում, էջ 163—164։

կրում է «Եպիսկոպոս Իրալիոյ» տիտղոսը։ Այս մասին 1311 թվականին գրված և Մայր Մաշտոց Սսոյ վերտառությունը կրող հիշատակարանում, ի միջի այլոց, ասված է հետևյալը. «Հրաման առեալ ի Վեհժու առ Կաթողիկոս Ամենայն Հայոց ի Տէր Կոստանդին, ի Թումասայ (գրված է «Թումասայ— ծանոթ. Լ. Խաչիկյանի) եպիսկոպոսի Իրալիոյ»։

Իրալիոյ եպիսկոպոս Թումասի այս հիշատակությունը մասնավոր արժեք է ներկայացնում. հայ եկեղեցական այս բարձր պաշտոնատարի ներկայությունը Իտալիայում նշանակում է, թե նա ընդհանուր հրամանագրի համաձայնության վրա՝ թեմակալ առաջնորդի հանգամանքով։ Այս «Իրալիոյ եպիսկոպոս»-ի՝ Կիլիկիայի Ամենայն Հայոց Կաթողիկոս Կոստանդինին ուղարկած «մագաղաթ»-ի բովանդակությունը դժբախտաբար հայտնի չէ։ Այդ եպիսկոպոսից հետո հիշվում է Հայոց արքեպիսկոպոս Վենետիկում, որին վերոհիշյալ Մարիամ Գայուին որոշ գումար է կտակում. ախուհետև՝ 1370-ական թվականներին Վենետիկում ապրում է մի այլ Թումաս եպիսկոպոս, որին Ալիշանը շփոթում է 1311 թվականի Սսի Մայր Մաշտոցի հիշատակարանում նշված «եպիսկոպոս Իրալիոյ» Թումասի հետ։ Բարձրաստիճան այս հայ հոգևորականների ներկայությունը ԺԴ դարի 60 տարիների ընթացքում Վենետիկում, նաև այլ երկու եպիսկոպոսների հիշատակությունը, ինչպես ներքևում կտեսնենք, խոսում է այն մասին, թե Կիլիկիայի Կաթողիկոսները ի նկատի են ունեցել հայկական բազմաթիվ համայնքների գոյությունը Իտալիայում, նշանակելով բարձրաստիճան եկեղեցականների՝ թեմակալ առաջնորդի պաշտոններում։

Պատահական չէր ո՞չ Վենետիկում հաստատված հայկական բազմամարդ գաղութի գոյությունը, ո՞չ էլ հայ եպիսկոպոսների ներկայությունը Վենետիկում։ Վենետիկը, Ջենովայի հետ, առևտրական ամենալայն հարաբերությունների մեջ էր Հայկական Կիլիկիայի հետ։ Հասկանալի է միանգամայն Հայկական Կիլիկիայի սերտ կապը Վենետիկի հետ։ Ալիշանը հիշատակում է Վենետիկի իշխանությանց բազմաթիվ դրական վկայությունները հայերի մասին, թե սրանք որպես «օգտարերք, երախտաւորք, հաւատարիմք, մտադիր մարդասիրութեան, պաշտպանութեան, արդարադատութեան արժանաւորք և այլն ազգանանուն դիւանի նոյնանաւորք և այլն ազգանանուն դիւանի նոյնցին ՃԺ դարէ և այսր, ընդ այլոցն ամրաբնակ և զմուրհակս և զպատճէնս գործոց և գործակալաց և հայոց»[15]։

Այս բոլոր վկայությունները հաստատվում են երկու բան. առաջին՝ որ Վենետիկում հաստատված է եղել ԺԴ դարից ի վեր հայկական մի մեծ համայնք, որը հաճախ իր գլուխն է ունեցել հայ եպիսկոպոսներ. երկրորդ՝ որ հայկական գաղութների գոյությունը Իտալիայում բացատրվում է ամենից առաջ առևտրական նպատակներով, և ապա՝ կյանքի և գույքի ավելի ապահով վայր գտնելու ցանկության մեջ։

Ջենովայում հաստատված հայերը, ըստ Ալիշանի, Կիլիկիայից փախչողներ են եղել, որոնք «ի վանանցիս մեծապես աշխարհին Սիսուանայ, դժպհի դաւաճանութեամբ թագաւորապան թաթարին»[16], յամի 1307, խուսափողք յերկրէ անտի Հայոց, նախ ի Գենուա հաստատեցին վանս, և եկեղեցի յանուն Ս. Բարդղիմայ (1308), յորմէ ապա սփռեցան և հաստատեցին վանորայք յայլ և այլ քաղաքս մերձաւորս, և վանականք կոչեցան հայ եղբարքս»[17], հասկանալի է, որ այստեղ հայ վանականների մասին է, որոնք, ըստ մի այլ հեղինակի, իրոք միանձինք Սև լեռների ճգնարաններից ապաստան են գտել Ջենովայում[18]։ Համենայն դեպս, երկու հեղինակների մոտ էլ պակասում են տեղեկություններ Ջենովայում, ինչպես և այլ և այլ քաղաքս մերձաւորս անապատոն գոյություն ունեցած հայ համայնքների մասին։

Ադրիանի ափին գտնվող Անգոնա նավահանգիստ-քաղաքում հայոց բնակության

---

15 Տե՛ս Լ. Խաչիկյան. «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950 թ., հատ. Ա. «Հիշատակարան Ա՝ 106»։

Հիշատակարանում նշված Կիլիկիայի Ամենայն Հայոց Կաթողիկոս Կոստանդինը պետք է եղած լինի Կոստանդին Գ Կլաստրացին, որի գահակալության տարիները Օրմանյանը դնում է 1307—1322 թվականներին— Տե՛ս «Ազգապատում», Բ մաս, էջ 1836։

Եթե Ալիշանի կողմից վերհանված նշված Թումաս եպիսկոպոսին վերաբերյալ թվականների շփոթությունն է կատարվել, ապա պիտի ենթադրել, որ այս երկու Թումաս կամ Թուման եպիսկոպոսները նույն անձն եղած պետք է լինեն։

15 Հ. Ղ. Ալիշան. «Սիսական», էջ 447։

16 Հ. Ղ. Ալիշանի այս ակնարկը վերաբերում է հետևյալին. Հայկական Կիլիկիայի հայոց թագավոր Լեոն Գ-ը 1307 թվականին դավաճանաբար սպանվում է թաթարների մի պետի՝ Գիլարդուի կողմից, որի հետևանքով Կիլիկիայում ստեղծվում է քաղաքական մի փոփոխվող շրջան։

17 Հ. Ղ. Ալիշան. «Սիսական», էջ 449—450։

18 Մեսրոպ վրդ. Ուղուրլյան. «Պատմութիւն հայոց գաղթականութեան և շինութեան եկեղեցւոց հայոց», էջ 242։

սկիզբն է դրվում Հեթում Ա-ի թագավորության շրջանում (1226—1270 թ. թ.)։ Հայերը քաղաքի պարիսպներից դուրս տեղ են ստանում և այնտեղ 1248 թվականին հիմնում իրենց հոգեւորությունը «Ս. Հոգի» անունով, իսկ 1262-ին նրանց թույլ է տրվում կառուցել իրենց եկեղեցին։ Ուրբանոս Դ պապը հայ եկեղեցու կառուցման կապակցությամբ իմաստագրված իր գրության մեջ Անգոնայի հայերին անվանում է «աղքատներ կամ պանդուխտներ»։ Միանգամայն ճիշտ է նկատում Ալիշանը, թե ուրեմն այս քաղաքի հայերը բաղկացած չեն եղել լոկ վանականներից, այլ որ նրանց հետ եղել են նաև աշխարհական հայ մարդիկ՝— «հաւանօրէն եկեալս վաճառականութեան աղագաւ»,— եզրակացնում է նա, ավելացնելով, թե ինքը չի կասկածում, որ Կիլիկիայի հայ վաճառականները այս և հետևյալ՝ ԺԴ դարում հաճախել են Ջենովա և Վենետիկ, ինչպես և Անգոնա։ Այս քաղաքի մասին տարեգրություններ հավաքող Մաղաքիա դպիրը գրում է. «Ի յԱնգոնիա գոն բազում գիրեվմանաքարք հայ գրով փորագրեալք, որք երևին մինչև ցայսօր, որ եմք ՌԾՍ (1701 թ.)», թեև Ալիշանը հաստատել է, որ իր ժամանակ այդ քարերն ու հայոց հին հոգեւորությունը իսպառ անհայտացած են եղել[18]։ Այս իհարկե չի ժխտում այն իրողությունը, թե Անգոնայում ԺԴ դարի կեսերից հայ բնակչություն է ապրել։ Մեսրոպ վարդապետ Ուղուրլյանը նույնիսկ մոտավոր թիվ է տալիս այս քաղաքի հայ բնակչության մասին՝ 150 ընտանիք[20]։

Անգոնայից ոչ հեռու, դեպի հյուսիս գտնվող Ռիմինի կամ Արիմինի ծովեզրյա քաղաքում. ևս հայերն ունեցել են իրենց հոգեւորությունը, որտեղ 1254 թվականին Վարդան անունով մի հայ քահանա ընդօրինակել է Ադաթանգեղոսի պատմությունը և «Ճառախաչատուն»-ը[21]։ Վարդան քահանան հիշատակում է ուրիշների շարքում նաև «զառաքելաշնորհ եպիսկոպոսն Յովանէս»[22]։ Այս արդեն 4-րդ հայ եպիսկոպոսն է, որ հիշատակվում է Իտալիայում։ Սրա պաշտոնի մասին ոչինչ չգիտենք։ Հոգեւորությունից առաջ, հավանաբար ԺԴ դարի սկզբին, հայերն ունեցել են այս քաղաքում եկեղեցի՝ Ս. Հովհաննես և Ս. Մատթեոս ավետարանիչների անունով։ Քաղաքի դիվաններում հիշատակվում են 1311 թվականին նաև «Հայ եղբարք»[23]։ Այս անվամբ հիշատակություններ կան նաև իտալական այլ քաղաքների հայ միաբանությունների մասին, օրինակ Ջենովայում, Սիենայում և այլուր։

Իտալիայում գործող և պաշտոնավարող 5-րդ հայ եպիսկոպոսի մասին հիշատակություն կա Պիզա քաղաքի հայոց մեջ, որտեղ 1320 թվականին Ս. Անտոն անունով եկեղեցի և մի վանք են կանգնում այս քաղաքում։ Պիզա քաղաքում գրված «Գիրք մեկնութեան պատարագիս»-ի հիշատակարանում կարդում ենք. «Եւ գրեցաւ ձեռամբ տրուպ և փգուն գրչի Թորոսի արեղի Ալվրրցոյն։ Ի յամին նոյնումն Տեառն մերոյ և Փրկչին ՌՅԾ և Դ (1355), յամսեանն աւգոստոսի Ժ և Դ աւարտեցաւ դիրքս ի քաղաքին, որ կոչի Պիզ, ընդ հովանեաւ սրբոյն Անտոնի հայ տանն»[24]։ Սրանով հաստատվում է ուրեմն Պիզայում հայոց հոգեւոր կամ եկեղեցու գոյությունը, որտեղ նույնիսկ գրական աշխատանք է կատարել վերոհիշյալ Թորոս արեղան։ Պիզա քաղաքում է եղել 1353—1372 թվականներին Գրիգոր անունով մի հայ արքեպիսկոպոս[25], որի պաշտոնի կամ գործունեության մասին նույնպես ոչինչ հայտնի չէ։ Սրա ժամանակ Միրանդի կամ Միրանց որդի Պետրոս անունով մի հայ վաճառական և իր կինը՝ Վայբե, իրենց ամբողջ ունեցվածքը կտակում են քաղաքի մոտ մի վանքի կառուցման համար։ Այս Պետրոսի հայրը 1282 թվականից ի վեր հիշված լինելով քաղաքի դիվաններում, Ալիշանը ենթադրում է, թե նաև այլ հայ վաճառականներ եկած և հաստատված պետք է լինեն Պիզայում[26], եվ իսկապես, հայկական եկեղեցի կամ հոգեւորություն, հայկական վանք, հայ արքեպիսկոպոս, հայերեն գրական աշխատանքի թեկուզ միայն մեկ հիշատակություն, այս բոլորը կասկածից վեր են թողնում այն, որ այս քաղաքում անպայման հայ բնակչություն պետք է եղած լինի։ Չպետք է մոռանալ նաև, որ Պիզան հայկական Կիլիկիայում ունեցել է իր կոնսուլը։ Պիզայի հետ պետք է հիշել նաև Ֆլորենցիան, որտեղ հայերը ԺԳ դարից էլ առաջ հիմնել էին վանք և եկեղեցի հանուն Ս. Բարսեղի[27]։

18 Հ. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 453։

20 Մեսրոպ վրդ. Ուղուրլյան, հիշված աշխատությունում, էջ 218։

21 Նույն տեղում, էջ 229։

22 Հ. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 454։

23 Նույն տեղում։

24 Տե՛ս Լ. Խաչիկյան, «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հատ. Ա, հիշատակարան № 488։

25 Հ. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 454։

26 Նույն տեղում, էջ 450։

27 Նույն տեղում։

(Շարունակելի)

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԼԱՁՈՐԻ ԴՊՐՈՑԻ ՄԵԾ ՄԱՆՐԱՆԿԱՐՉ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՑԻՆ*

Պետք է նշել, որ եթե նկարչի վաղ շրջանի ստեղծագործություններում ճարտարապետական շենքերն ու ֆրագմենտները ընկալվել են առարկայորեն, զգացվել է նրանց ձեր, ապա հետագա աշխատանքներում նրանք ձեռք են բերել որոշ գծային դեկորատիվ բնույթ (1323 թվականի Ավետարանի «Ավետումն»), նկատվում է կապ ճարտարապետական կառուցվածքների ֆոնի և ֆիգուրաների միջև։ Սակայն այդ կապը այնպես հստակ ու պարզ չի արտահայտված, ինչպիսին մենք տեսանք ծաղկող Մոմիկի մոտ։

Մենք արդեն նշեցինք, որ Թորոս Տարոնացու ստեղծագործություններում նշանակալից ուշադրություն է դարձված Տիրամոր վրա՝ Հիսուս Մանկան հետ միասին։

Քիչ սեր չի ցուցաբերված նկարչի կողմից դեպի թռչունների աշխարհը, ինչպես և կենդանիների աշխարհը, որոնցից մեծ մասամբ կազմված են զլխագիր զարդագրերը։ Նկարչի վարպետությունը դրսևորվել է հատկապես սիրամարգների ու ձիերի պատկերման մեջ։ Վերջիններս մեկնաբանված են ռեալիստորեն (օրինակ՝ «Սեսայի Նչեցու Ավետարան»-ի «Քրիստոսի ծնունդը» տեսարանում մոգերին խոնարհվելու եկած ձիերը. նույնպես ըստ ամենայնի բնական է սրընթաց արշավող ձիու պատկերումը «Ամենահաղթ Ս. Գեորգ» տեսարանում, որը տրված է 1323 թվականի Ավետարանի խորաններից մեկի սյունների մոտ)։ Ռեալիստական մեկնաբանման մոտիվները խորթ չեն նկարչի նաև այլ մանրանկարներին (օրինակ՝ 1323 թվականի Ավետարանի «Քրիստոսի ծնունդը» տեսարանից հովիվների ֆիգուրաները, կողքից կախված մախաղով և մահակը ձեռքին ծերունին և սրնգի վրա նվագող ու շեղ հայացքով արածող հոտին նայող փոքրիկ հովիվը և այլն. վերջինիս հայացքի մեջ, ի միջի այլոց, չի կարելի չնկատել հումորիկ հետքերը)։ Մի շարք մանրանկարներում նկարիչ Թորոսը հանդես է բերել բարձր վարպետություն մարդկային ֆիգուրաների դեմքերի արտահայտչականության հաղորդման մեջ («Խորհրդավոր գիշեր», «Հոգեգալուստ», «Ղազարոսի հարությունը» և ուրիշները «Սեսայի Նչեցու Աստվածաշնչից»)։

Թորոս Տարոնացու ինչպես վաղ, նույնպես և ուշ շրջանի մանրանկարների մեջ ռեալիստական գծերի հետ միասին նկատվում է որոշ խորություն, տարածականություն և այդ գլխավորապես այնտեղ, որտեղ մի մասը կամ ամբողջ կոմպոզիցիան հագցված է իրականությունից վերցված տեսարաններով։ Այդպիսի մանրանկարների թվին են պատկանում, բացի նշվածներից, և «Քրիստոսը աշակերտների հետ» մանրանկարը 1323 թվականի Ավետարանից (էջ 77բ), որտեղ նկարչի կողմից վարձես թե հաստատվում է եկեղեցում իր հաճախ տեսած հետաքրքրողական տեսարանը, երբ աղոթողները գնում են հաղորդվելու պատարագի մոտ։ Այլ օրինակ, նույն ձեռագրից, կարող է ծառայել «Տյառնընդառաջը», որտեղ պերսպեկտիվի «որոնումները» նկարչին

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1957 թվականի N N է—Ը-ից, Թ-ից և 1958 թվականի N N Դ-ից և Ե-ից։

Մեր ամսագրի 1958 թվականի N Դ-ում «Սեսայի Նչեցու Ավետարանից» «Ավետումն» մանրանկարի փոխարեն տպագրված է նույնանուն մանրանկար 1323 թվականի Ավետարանից։

հանգեցրել են երկու տեսակետների. մեկը՝ մարդկային ֆիգուրաները պատկերելու համար, մյուսը՝ առարկաների համար։

Ելնելով հենց իրականության, կյանքի հետ ունեցած շփումից, Թորոս Տարոնացին միևնույն թեմայի վրա աշխատելիս կարողացել է կոմպոզիցիայի հարցերում հանդես բերել բոլոր դեպքերում նոր մոտեցում և տալ նոր լուծում («Տյառնընդառաջ», «Մուտք Երուսաղեմ», «Պահապանները Քրիստոսի գերեզմանի վրա», «Քրիստոսը աշակերտների հետ» և ուրիշները՝ 1307, 1318 և 1323 թվականների ձեռագրերից), որը խոսում է նկարչի ստեղծագործական աճի մասին։

Թորոս Տարոնացու գործերը տարբերվում են իրենց կատարման տեխնիկայով։ Ինչպես նշվել է, նրա վաղ շրջանի մանրանկարները, ուշ շրջանի համեմատությամբ, աչքի են ընկնում իրենց գեղանկարչությամբ, հյութեղությամբ, իսկ վերջինները, հատկապես 1323 թվականի Ավետարանի մանրանկարները, չոր են ու գծանկարային։ Գեղանկարչության միջոցով պետք է բացատրել պարզ ու հստակ անջրպետների (գրադացիա) բացակայությունը, այսինքն՝ պատկերված ֆիգուրաների ու առարկաների ստվերագծերի բացակայությունը, այլ կերպ ասած՝ ճապաղության գոյությունը։

Մանրանկարիչ Թորոս Տարոնացու մոտ գեղանկարչությունը հիմնվում է գերազանցապես գույների հակադրության վրա, ներկերի օգնությամբ, որպես թե վրձինի հարվածներով տեղադրված լինի։ Այս տեսակետից Թորոս Տարոնացու աշխատանքի ոճը, մաներան իր բոլոր թելերով ձգվում է դեպի Հին Արևելքի արվեստը, մասնավորապես կապադովկիական, ասորական, մասամբ և կոպտական գեղանկարչությունը։ Վաղ շրջանի գործերում հագուստի վրայի ծալքերը քիչ թիվ են կազմում և ավելի կամ պակաս բնական են։ Նրանք չունեն երբեմն մինչև «գծային խաղեր»-ի և ռեալականության կորստին հասնող այն չորությունն ու կոտրտվածությունը, որ նկատում ենք նկարչի վերջին աշխատանքներում («Ծնայի Նշեցու Աստվածաշնչում» և հատկապես 1323 թվականի Ավետարանում)։ Այսպես, նրա վաղ շրջանի ստեղծագործությունների հյութեղությունն ու ռեալիստականությունը տեղի է տալիս ավելի չոր ձևերին, ավելի կոշտ նմուշներին, որոնցից շատերը արտաքինից հիշեցնում են Սարգիս Պիծակի մանրանկարների նմուշները, որոնց մեջ, ի միջի այլոց, այդ երկու ժամանակակից վարպետների մյուս ընդհանրությունն է, որի հիման վրա էլ կատարվում է նրանց զուգահեռ համադրությունը։

Եթե 1317—1318 թվականներին Թորոս Տարոնացու մոտ նկարչության ոճի չորության հետ մեկտեղ կան նաև գունեղ կատարված մանրանկարներ, ապա 1323 թվականի Ավետարանում գծանկարչությունը գերակշռող է և ընորոշ այս նկարչի տեխնիկային։

Սակայն, չնայած այդ կողմին, մանրանկարներից մի քանիսը, շնորհիվ հագուստների ծալքերի և նրանց ռիթմի ճշմարիտ վերարտադրության, որոնք ճշտորեն հաղորդում են մարմնի ծավալը լույսի և ստվերի հակադրությամբ, ընդհանուր առմամբ գեղանկարչական են («Տյառնընդառաջ», մասամբ «Քրիստոսի ծնունդը»)։ բայց այս մանրանկարների և նույն Ավետարանի մյուս մանրանկարների համեմատության դեպքում կարելի է նկատել, թե ինչպես վերջիններս չոր են («Ավետումն»)։ Մանրանկարների գծանկարչությունը ավելի են ուժեղացնում սուր արտահայտված ստվերագծերը, որոնցով պարփակված են ֆիգուրաները (սև գույնով՝ հագուստները, իսկ կարմիր գույնով՝ մարմնի մերկ մասերը՝ ձեռքերը և դեմքերը)։ Բայց ծաղկող Թորոս Տարոնացու մանրանկարներում գեղանկարչության թուլանալու հետ մեկտեղ նկատվում է գծանկարի վարպետության բարձրացում, որը ժամանակի ընթացքում ձեռք է բերում ավելի և ավելի գրագետ բնույթ։ Օրինակ, եթե համեմատենք 1307 թվականի «Ծնայի Նշեցու Ավետարան»-ի «Մկրտության» կամ «Խաչելության» մեջ Քրիստոսի ֆիգուրան 1318 և 1323 թվականների ձեռագրերի նույն տեսարանների հետ, ապա կարելի է նկատել նկարչի վարպետության աճը, ըստ որում ոչ միայն մարդկային դեմքերի վերարտադրության մեջ, այլև ֆիգուրաների գծանկարի մեջ ընդհանրապես։ Մանրանկարիչ Թորոսի վաղ շրջանի գործերը տառապում են, օրինակ, գործող դեմքերի դիրքերի միօրինակությամբ, նրանց անշարժությամբ, կամ շատ թույլ արտահայտված շարժունակությամբ նույնիսկ այնտեղ, որտեղ տվյալ տեսարանի դեպքերի ընթացքը պահանջում է հակառակը («Ղազարոսի հարությունը», «Մուտք Երուսաղեմ»՝ «Ծնայի Նշեցու Ավետարան»-ից)։ Գլխավոր պակասությունը հանդիսանում է մարդկային ֆիգուրաների անատոմիական խեղաթյուրումների առկայությունը. այդ ֆիգուրաները նկարչի մոտ մեծ մասամբ խոշոր գլուխներով են, ծանրակշիռ և անշարժունակ, Սարգիս Պիծակի գործերը հիշեցնող։

Հասուն շրջանի մանրանկարները ավելի կամ պակաս ճիշտ են իրենց համամասնություններով, որտեղ նկատվում է շարժման առկայություն և այլն («Ղազարոսի հարությունը», «Մուտք Երուսաղեմ» և այլն «Ծնայի

Նշեցու Աստվածաշնչից»։ Հատկապես լավ է տրված խաչված Քրիստոսի մարմնի վերին մասը 1323 թվականի Ավետարանները ապ. 276ա)։ Հետագա շրջանի ֆիգուրաները ավելի քիչ են աղավաղված։ Այդպիսիք են հանդիսանում վերջին ձեռագրի ֆիգուրաների մեծամասնությունը։ Սակայն, այդ չի կարելի ասել ճակատով տրված մարդկային դեմքերի վերաբերյալ, կամ ավելի ևս պրոֆիլով նկարվածների մասին, որոնց ամենուրեք անհաջող են նկարչի մոտ։ Պետք է ենթադրել, որ գծանկարի կուլտուրայի աճի, ձեռագրի վարժության հետ միասին Թորոս Տարոնացին չի աշխատել իր նկարների դիրքերի ընդլայնման վրա։ Անցած ավելի քան 15 տարվա ընթացքում (1307 թվականից մինչև 1323 թվականը) նա այդպես էլ չսովորեց նկարել դեմքերը պրոֆիլով կամ ճակատով։ Մարդկային դեմքերի պրոֆիլային գծանկարի անհաջողությունը «Նշեցու Ավետարան»-ում ամբողջապես կբրկնվում է և հետագա ձեռագրերում։ Ավելին, 1323 թվականին համոզվելով իր անկարողության մեջ՝ ներկայացնել դեմքերը այդ տեսակետով (ինչպես օրինակ՝ առաջին մոգի կամ ձերունի հովվի դեմքը «Քրիստոսի ծնունդ»-ից), նկարիչը հետագայում հրաժարվում է նրանց պատկերումից։ Այսպես, «Մուտք Երուսաղեմ» տեսարանում (էջ 121ա) Թորոս Տարոնացին, ընդգծելով Հուդայի առաջատար դիրքը, որպես, ասենք, ամավոր աղետների կրող, տալիս է այդ կերպարը ոչ թե պրոֆիլով, որպիսին տրված է եղել միշտ նախկինում, այլ դեմքի կես քառորդ դիրքով, այսինքն այնպես, ինչպես տրված են մյուս ֆիգուրաները, որտեղ, ինչպես գիտենք, վարպետացել է նրա ձեռքը։ Այդ պատճառով էլ, չնայած նրան, որ Հուդայի դեմքին կարդացվում է թաքնված չարությունը, այնուամենայնիվ այդ հանցագործը ներկայացված է բավականաչափ գեղեցիկ։ «Ղազարոսի հարության» մեջ նկարիչը, ինչպես երևում է, Հուդայի պատկերման պատճառով, ամբողջովին հրաժարվել է վերոհիշյալ կերպարից։ Տեղին է ասել, որ Հուդային ուղեկցող Քրիստոսի թեման, երևում է, հատկապես դրդեցրել է Թորոս Տարոնացուն։ Դա որպես լեյտմոտիվ է անցնում այն մանրանկարներում («Ավետարան Նշեցու Աստվածաշնչում»), որտեղ Հուդան, Քրիստոսի աշակերտներից միակը, տրված է պրոֆիլով։ Այդպիսին է ներկայացված Հուդան «Ղազարոսի հարության» մեջ։ Նա ուղեկցի դեր է կատարում Քրիստոսին «Երուսաղեմ մտնելիս» և այլն։

Թորոս Տարոնացին խուսափում է դեմքի ճակատային պատկերումից։ Այսպես, եթե 1307 և 1318 թվականների ձեռագրերում «Տիրոջ համբարձումը» տեսարանում Տիրամոր ֆիգուրան և դեմքը տրված է ճակատից, ապա 1323 թվականի Ավետարանում այն պատկերված է կիսաշրջված, ըստ որում վերքարձրացված գլխով և ձեռքերով, գրեթե այնպես, ինչպիսին մենք տեսանք Մոմիկի մոտ «Ստեփանոս Օրբելյանի Ավետարան»-ի տեսարանում։ Պետք է «Հոգեգալստյան» տեսարանում նույնպես նշել, որ Թորոս Տարոնացու պատկերած դեմքերը միևնույն դիրքով, այսինքն, միևնույն տեսանկյունից, այդ վիճակի շարաշահումը նրա կողմից հասցրել են կերպարների միօրինակության, որոնք դարձել են վերջ ի վերջո գրեթե միանման (1323 թվականի Ավետարանում), իսկ երբեմն ուղղակի տրաֆարետային։

Ի մեջի այլոց, անհրաժեշտ է նաև նշել, որ Թորոս Տարոնացու մանրանկարներում, հատկապես «Ծնունդ Աստվածաշնչում», կարելի է նկատել որոշ յուրահատկություն, որը բնորոշ է այս նկարչի համար։ Օրինակ՝ 1318 թվականի ձեռագրում Քրիստոսի կերպարը տրված է երկակի՝ մորուքով և առանց մորուքի, այն ժամանակ, երբ 1307 և 1323 թվականների Ավետարաններում Քրիստոսը ամենուրեք ներկայացված է մորուքով։ Այնուհետև անձերի գլուխները երբեմն վերցված են լուսապակների մեջ, երբեմն ոչ, առաքյալները տրված են մի դեպքում 11 հոգի, մյուս դեպքում՝ 12։ Կան մանրանկարներ, որոնց շրջանակային ընդգրկման ամբողջականությունը չի խախտված, և ընդհակառակը, կան նաև այնպիսիները, որտեղ ֆիգուրաները կամ առարկաների մի մասը դուրս են մնում շրջանակի սահմաններից և այլն։ Նկարչի երկվությունն արտահայտվում է նաև պատկերագրության մեջ, նրա ակունքների մեջ, որը մեծ մասամբ հանդիսանում է երկու սխեմաների խաչաձևումը։ Նման տեսարանի հանդիպում ենք Թորոս Տարոնացու մոտ հիմնական գործող դեմքերի համար գույների օգտագործման դեպքում, այսինքն հաճախ են շփոթված ու խանգարված նրանց հագուստների գունային առանձնահատկությունները և այլն։

Հանրագումարի բերելով նկարչի ստեղծագործական ուղին, պետք է ասել, որ 1323 թվականի Ավետարանի վրա աշխատելու ընթացքում բավականին ուժեղ արտահայտվում են անկման այն նշանները, որոնք երևում էին դեռևս «Ծնունդ Աստվածաշնչում»։ Իսկ իրենց սկզբնավորման վիճակում դրանք երևում էին նույնիսկ ավելի վաղ շրջանի ձեռագրերում։ Թորոս Տարոնացու արվեստի անկմանը նպաստել է նաև աշխատանքի այն ոչ ճիշտ մեթոդը, որին նա կառչել էր իր գործունեության ուշ շրջանում։

ջանում։ Շատ կարճ ժամանակամիջոցում Թորոս Տարոնացու նկարազարդումների այդքան առատությունը խոսում է ոչ միայն նկարչի բեղմնավորության մասին, այլև ցույց է տալիս, որ նա ունեցել է օգնականներ, որի մասին իրավացիորեն կասկածում է Սիրարփի Տեր-Ներսեսյանը[50]։ Սիրարփի Տեր-Ներսեսյանի հայտնած ենթադրության ճշտությունը հաստատում են նկարչի նկարազարդման ենթարկված ձեռագրերի հիշատակարանները, ինչպես նաև 1323 թվականի Ավետարանի բուն մանրանկարները, որոնց վրա պարզ երևում է վարպետ-նկարչի և աշակերտ-օգնականի ձեռքը[51]։ Անկման նշանները և աշակերտ-օգնականների հետ համատեղ աշխատանքի մեթոդը ավելի ցայտուն է երևում 1323 թվականի Ավետարանի «Ավետման» տեսարանում։ Մանրանկարի գծանկարը հիմնականում կառուցված է Թորոս Տարոնացու կողմից, իսկ օգնականները՝ հավանաբար գույն են տվել նկարին, որից հետո մանրանկարի վրա նորից շարժվել է ուսուցիչ վարպետի վրձինը (ստվերային մասերը, պատուհանի առանձնացումը և այլն)։ Ոսկին, որը տեղադրվել է, որպես կանոն, մանրանկարի գունավորման ավարտումից հետո, մատնում է ոչ այնքան վարպետ ձեռքի աշխատանքը՝ նկարի ստվերագծերը (օրինակ՝ ճարտարապետական կառուցվածքի ստվերագիծը, որը հանդիսանում է այդ տեսարանի համար ֆոն, Մարիամի գլխի լուսապսակի ներքին մասը և այլն)։ Նկարիչ Թորոս Տարոնացու ստեղծագործության անկման նշանները արտահայտված են մանրանկարների շոր, գծանկարային ոճի մեջ, և այն բանի մեջ, որ ֆիգուրաները շատ մանրանկարների մեջ տրված են արդեն հարթության մեջ, առանց նախկին խորության, տարածականության մտապատրանքի զգացման («Հրեշտակի երևումը յուղաբեր կանանց» 1323 թվականի Ավետարանում և այլն)։

Այդ անկումը, վերջապես, արտահայտված է նաև գունային ասպարեզում, այսինքն՝ բուն գույների մեջ, որոնք տեղադրված են կարծես թե մաքուր վիճակում, առանց խառնուրդի, առանց այլ գույների հարստացման, առանց նրանց երանգների օգտագործման։ Եթե մինչև 1318 թվականի աշխատանքներում գունային ներկապնակը, ներառյալ և «Եսայի Նշեցու Աստվածաշունչ»-ը, շնորհիվ մեծ կուլտուրայի, համեմատաբար սահմանափակ թվով գույների ներդաշնակման նուրբ ճաշակի, թողնում է ամենուրեք հաճելի և հարուստ տպավորություն, ապա 1323 թվականի Ավետարանի մանրանկարների մեծամասնության մեջ գույների ոչ տեղին ներմուծմամբ, ըստ որում գրեթե առանց ներդաշնակ համակցման, աղքատացնում, հասարակացնում են մանրանկարները։

Սակայն, չնայած այս բոլորին, Թորոս Տարոնացին մեծ նկարիչ է, ժողովրդի կողմից սիրված միջնադարյան արվեստի՝ մանրանկարչության ասպարեզում։ Մաղկող Թորոս Տարոնացին իր բազմամյա ստեղծագործական բեղուն գործունեության ընթացքում, ավանդույթների նկատմամբ ունեցած ակնածանքի հետ մասին, հետ չի մնացել, այլ ընթացել է իր ժամանակին համընթաց։

Անհրաժեշտ է նշել, որ ճիշտ է այն գնահատականը, որ տրված է Թորոս Տարոնացու ստեղծագործությանը Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի կողմից։ Նկարչի այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են շրջթայակապ առյուծները, սաղ նվագող Դավիթը, Մարիամը («Օդիգիդրայի», «Սիրոն և «Ստմտուի» կերպարները), Եսայի Նշեցի ծերունու գլուխը, մանրանկարային տեսարանները, բարդ, ճոխ խորանները, թռչունների ու կենդանիների հարուստ աշխարհը՝ տրված շարժման մեջ, երբեմն ֆանտաստիկորեն, բայց միշտ համամասնությունների պահպանմամբ և այլն, խոսում են այն մասին, որ հանձին Թորոս Տարոնացու մենք ունենք լիովին բազմակողմանի և մեծ վարպետության տեր նկարիչ[52]։

50 Տե՛ս Սիրարփի Տեր-Ներսեսյան, «Հայաստան և Բյուզանդական կայսրություն», էջ 135։

51 Թորոս Տարոնացու աշակերտներից մեզ հայտնի են Հովհաննեսի, Գրիգորիսի և ուրիշների անունները, իսկ 1323 թվականի Ավետարանի հիշատակարանում (էջ 90ա) ուղղակի ասվում է, որ վարպետին օգնել է Տիրացու աշակերտը («ԶՏիրացու աշակերտ և ապաստաւոր բանի յիշեցէք ամենայն սրտի մտաւք, հանդերձ ծնողաւք, որ զմատաղաթիս գնեցաք, և զկարմիր ոսկին շատ բաժին ընծայեցաք»)։

52 Տե՛ս Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, «Ազգրակյանք կամ Գոռշյանք», մասն Բ, էջ 229։

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՑԻ, «ԴՐԱԽՏԱԳԻՐՔ»

Հրատարակեց՝ Ներսես Վարդապետ Տեր Ներսեսյան
(Վենետիկ, տպ. Ս. Ղազարի, 1956 թ., 204 էջ)



«Գեան հրգիրս յուժեղսն. ուսանավոր, մշնաղարեան աշխարհարարակ. այլ մի անգնեսկաս աշխարհին, և հնամեայ խոսակցության անգրաշխարհի հոգին հնուս հնաս»:

Վենետիկի Մխիթարյանները շնորհակալ գործի են ձեռնարկել տպագրության հանձնելով «Թանգարան հայկական ճին և նոր գպրության» մատենաշարի գեղեցիկ, որոնց շարքում գրախոսվող «Դրախտագիրք»-ը ութերորդն է։

«Դրախտագիրք»-ը վերագրվում է ԺԵ դարի բազմաշնորհ մատենագիր Առաքել Սյունեցուն։ Նարեկացուց հետո և վերջն է «Ադամագիրք» անունով մեզ հասած Սյունեցու կրոնական պոեմի, որի երեք տարբեր պատումները խնամքով ուսումնասիրությամբ հրատարակել է Հ. Մկրտիչ Գոռուրյանը։

Առաքել Սյունեցին միջնադարյան (1355—1425 թ. թ.) մատենագիր է։ Եղել է Սյունյաց եպիսկոպոս, Տաթևի առաջնորդ։ Այդ հանգամանքով նա հասցրել է բազմաթիվ աշակերտներ։ Նույն ժամանակ նա եղել է նաև ճարտար, բազուկ մատենագիր, տաղանդավոր բանաստեղծ, հոգևոր տաղերի, ներբողների, գերականությունների և այլն։ Նրան են վերագրվում նաև գուսանական աշխարհի բովանդակությամբ արժեքավոր բանաստեղծություններ։ Գրիգոր Տաթևացու քրոջ որդին էր և աշակերտը։ Քեռու ազդեցությունը շատ մեծ է եղել նրա և՛ հեղինակի՝ գրական գործունեության վրա։

Նրա անունով մեզ են հասել բազմաթիվ գրաբար և միջնադարյան աշխարհաբարով գրվածքներ։ Գլուխ գործոցն է «Ադամագիրք»-ը երեք տարբեր և անհավասարաչափ ծավալով պատումներով։ Գրված է 1401—1403 թվականներին՝ գրաբարով։

«Դրախտագիրք»-ը ունի հետևյալ բաժինները.

ա) Առաջաբան, որտեղ հրատարակիչը տեղեկություններ է տալիս Առաքել Սյունեցու երկերի և կյանքի մասին։ Բազմաթիվ բնագրերի և խրճանիտ քննության են ենթարկում հրատարակչի տրամաբանության տակ գտնվող «Դրախտագիրք»-ի ձեռագրերը, հշված են գրչի հարգատությունը, բովանդակությունը, գրական արժեքը, լեզուն։

բ) Բուն «Դրախտագիրք»-ը, մի փոքր արձակ նախաբան, որտեղ յոթը տարբեր առասելներով արվում է հեղինակի բարձունքը գրախտ—քաղաք—գերեզման հասկացության։ Դրան հաջորդում է քսան գլուխների (մասերի) արձակ ամփոփումը։

Հետի ներքևում տրվել են ձեռագիր օրինակների ունեցած տարբերությունները, ինչպես նաև Առաքելավանքի գրոց հետ համեմատությունները։ Տպագրում հատորը բաժանված է քառասուն տեղերի (բնագրում անները երկտող են)։ Ցուրաքանչյուր հատից առաջ զետեղված է ամփոփումն արձակ տողերով։ Չափը հիմնականում ընթանում է 4—4—5 տաղաչափական հատածներով։ Ընթերցումը ձանձրանում է հանգերի միօրինակության (գլխավորապես —եզ և —ես) պատճառով։ Մատից մատ դիտվում է նյութի ոչ համաչափ բաշխումը։ Մի հատի նախարանը իր բովանդակությամբ չի համապատասխանում իրեն հաջորդող 27 տուն գրվածքին։ Դիտվում է նույնպես խորթ գրիչների հավելում։ Հրատարակիչը որոշ չափով կանգ է առել նշված թերությունների վրա։

«Դրախտագիրք»-ի լեզուն Սյունիքի միջնադարյան աշխարհաբարն է։ Ուշագրավ է նրա և կիլիկյան աշխարհաբարի մոտիկությունը։ Երևակայությունը, պատկերների ինքնատիպությունը, հոգու թափ և բազմապիսի գրական այլ շնորհներ, որոնք Առաքել Սյունեցու «Ադամագիրքը»-ի և տաղերի մեջ այնքան առատ են, համեմատաբար նվազ չափով են հանդես գալիս «Դրախտագիրքում»։

Առաքել Այունեցու «Դրախտագիրքը»-ը իր գրական արժեքից ավելի նշանավոր է իբրև կրոնա-բարոյական խրատների ժողովածու։ Հեղինակի նպատակն է եղել այս աշխարհի բնակիչները իր հետ առնելով՝ փրկություն ելել այն անծանոթ քաղաքը, ուսկից արտաքսված էր Ադամ։

գ) Հավելված, որը նվիրված է Հ. Քյուրայանի «Դրախտագիրքը»-ի հեռագիր օրինակին։

դ) Բառարան, որտեղ տրված են օտար, գավառական և հազվագյուտ բառերի բացատրությունները։

Ձեռագրի վրա չկա «Դրախտագիրք» տիտղոսը։ Այդ Ս[illegible]ին են պարտական։ Այդպես են կոչել՝ ելնելով ընդհանուր բովանդակությունից։ «Դրախտագիրք»-ը թվում է «Աղամագիրք»-ի շարունակությունը չենել։ Եթե առաջնում պատկերվում է նախածողների դրախտից արտաքսումը, նրանց դառն զղջումն ու ապաշավը, երկրորդում միջոցներ ու պայմաններ են առաջադրվում երկնավոր դրախտը նվաճելու համար։

Մարդու անկումը և վերստին իր կորուսյալ երջանկության հետամտելու թեման կա հին ժողովուրդներից շատերի մոտ։ Դա միջնադարյան քրիստոնյա աշխարհի ամենատիրելի նյութերից մեկն էր։ Մեր կրոնական գրականության մեջ այդ ուղղությամբ առանձնապես այլաբանությունն է նույն բովանդակությամբ «Հարցումն Լուսաւորչին և պատասխանք նոցին», և վարդան Այգեկցու «Վասն դժոխոց և անմուն ուղղագրությունները։

Հ. Ներսես Տեր Ներսեսյանը վենետիկի միաբանության ժրաջան անդամներից մեկն է, «Բազմավեպ»-ի ամենահանդուն աշխատակիցն ու խմբագիրը։ «Դրախտագիրք»-ը հրատարակչի առաջին մենագրությունն է։ Հատորի 56 էջնոց առաջաբանը ցույց է տալիս հրատարակչի հմտությունն ու խղճմտությունը, մոտեցման բազմակողմանիությունը։ «Դրախտագիրք»-ի հրատարակության փաստը վկայությունն է նրա ճաշակի, հետաքրքրությունների բանասերի, հավաքողի իր կարողությանը վրա նա ավելացնում է ուժեղ հայկաբանությունը։ Նրա սուր տեսողությունից չեն խուսափում մամուլում տեղ գտած լեզվական խաթարումները, որոնք ուժգնորեն մատնեց, ինչպես իր ժամանակին Հ. Ա. Ղազիկյանն էր արել, իր ավագ պարտականությունն է կատարում։

Ա. Խ.